

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՈՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՎԵՏԻՄԻ ՊԵՏՈՅԱՆ

ՍԱՍՈՒՆԻ ԵՎ ՏԱՐՈՆԻ
ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱՍՈՒՆԻ ԵՎ ՏԱՐՈՆԻ
ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

www.freebooks.do.am
www.freebooks.am

Երևան 2005



ՀՏԴ 913.1 (479.25)
ԳՄԴ 63. 2 (23)

Գլխ. Խմբագիր՝ Ս. Երեմյան

Պետոյան Վ.

Սասունի և Տարոնի պատմա-աշխարհագրական տեղագրությունը /գիտ. աշխատություն.- Լուսակն: Եր.-
2005թ.: 100 էջ:

Գիրքն ամրագրացնում է Սասունի և Տարոնի վերաբերյալ ազգագրական
և տեղագրական տեղեկարթյաններ, սրբը, տնենարար միակ վավերագրական
ապրությի բնայիր. Իիմք ևն Խանդիսացել 1949 թ. Սասուն-Տարոնի քարտեզը
կազմելու համար:

Այս ամսության աշխատաթրյանը երսաւարակման և պատճենահանությանը կապված է 1947 թվականին:

0502000000
Պ 2005
0150 (01)-2005

ԳՄԴ 63. 2 (23)

ISBN 99930-906-9-5

© Լուսակն, 2005թ.

ՎԱՐԴԱՆ ԱՎԵՏԻՍԻ ՊԵՏՈՅԱՆ

Բնիկ սասունցի, Երկարամյա վաստակավոր մանկավարժ, «Լենինի», «Կարմիր դրոշի», «Պատվո նշան» շքանշանների ասպետ, ազգագրագետ, պատմաբան Վարդան Ավետիսի Պետոյանը ավելի քան 55 տարի հավաքել, ուսումնասիրել, գրի առել և տպագրության է պատրաստել Արևմտյան Հայաստանի դյուցազնական այնպիսի շրջանի պատմությունը, լեզուն, կենցաղը, հերոսական անցյալն ու ազատագրական պայքարը, որ հպարտորեն կրում է փառահունչ Սասուն անունը:

Յիշյալ հայրենասեր անխոնջ մշակն ու անմնացորդ նվիրյալը ծնվել է 1892 թ. Գետրվարի 7-ին Սասուն-Գելիեգուզանում, իր քաջությամբ ու հերիությամբ հայտնի իշխան Պետոյի նահապետական գերդաստանում, գերդաստան, որի մասին ժամանակին գրել է Սասունում իր գործունեությամբ հայտնի պատմաբան, ազգագրագետ, 19-րդ դարի վերջերին ճանաչված մտավորական Ախսալքալաքջի Սեյլանը (Արշակ Սատոյան) իր «Սասուն» պատմաազգագրական ակնարկում, որը վեր է հանում Սասունի 13-19-րդ դարերի պատմության բազմաթիվ կարևոր դրվագներ:

ճանաչված մտավորական Սեյլանը Սասունում հյուրընկալվում է Գելիեգուզանում իշխան Պետոյի նահապետական տանը, որտեղ նրան տանտերը ցույց է տալիս մի մաշված, բայց պահպանված հրովարտակ (Վղյալ թեկի 1013թ Իշխան 5 Շուլեքի բերդ, Սեյլան «Սասուն», էջ 48-49), որտեղ նշվում է այդ գերդաստանի հին իշխանազուն ծագման մասին սկսած Յոլո, Գորգե իշխաններից...

Գելիեգուզանում ուս իշխան Պետոյի հյուրընկալ ընտանիքում էին իշխանում 19-րդ դարի վերջերին Արևմտյան Հայաստանում ժավալված ազատագրական շարժման հայտնի դեկավարներ գորավար Անդրանիկը, Տանատյանը, Մուրադը և այլոց: 1894 թ. Սասունի հերոսական մարտում իշխան Պետոյի գոհվելուց հետո գերդաստանի նահապետը և ուսը լինում է նրա եղբորորդի Ավեն (Վ. Պետոյանի հայրը), որ հորեղբորից ընդորինակել էր հայրենասիրություն, քաջություն և հեքիմություն: 1900-1904 թթ. Սասունում և Մուշի շրջանում ազատագրական շարժումներ կազմակերպելու մտահոգությամբ գորավար



Անդրանիկը հաճախէ լինում արդեն հերոսամարտում զոհված իշխան Պետոյի ժառանգ Ավելի տանը, նկատում որդուն փոքրիկ, ուշիմ Կարդանին և առաջարկում իրեն հանձնել: «Անդրանիկ, դուրբան, ինչը չեմ տա, կարդանը թեզ»: Անդրանիկը փոքրիկ Կարդանին տանում է Մշո սուրբ Կարապետ վանքի ժառանգավորաց գիշերօրիկ դպրոցում սովորելու, որը ընթացավարտ է լինում 1907 թ. և Մշո Միացյալ ընկերության որոշմամբ նշանակվում Տալվորիկի Դարքը գյուղի տարրական դպրոցի վարիչ-ուսուցիչ մինչև 1911 թ.: Վ. Պետոյանը պատմում էր, որ Մշո սուրբ Կարապետ վանքի դպրոցը ավարտողը մի շարք առարկաների հետ միաժամանակ քննություն պետք է հանձներ գրաքարից և ֆրանսերենից շարադրություն գրելով: Նա ձգտում է շարունակել ուսումը և 1911 թ. հունիսին իր հորեղբար քաջ որդու Շայրոյի հետ ծիռվ մեկնում է Կ. Պոլիս: ճանապարհին հանդիպում են երկու մեծ մտավորականների վարպետ Ավ. Խահակյանին և նշանավոր Ս. Զավարյանին, ժանոթանում, գրուցում և ստանում երկու հայ մեծերի օրինանքը հաջողությամբ ուսումը շարունակելու:



Վ. Պոլիսը հաջողությամբ հանձնելով քննությունները, ընդունվում է «Շայոց ազգային Կեղրոնական վարժարան»:

1904 թ. սուլթանական Թուրքիայի դեմ Սասունի ժողովրդական ապստամբության ժամանակ զոհվում են Վ. Պետոյանի հայրը, հորեղբարյուրը: Ընտանիքի հոգսն ընկնում է նոր Սագելի վրա, որը և ամուսնու փոխարեն ճանակցում է գյուղի մեծերի ժողովներին իրու իշխան Պետոյի նահապետական տան խելացի և մեծ հարս:

1915 թ. Թուրքիայի կողմից կազմակերպված հայերի կոտորածի ժամանակ սրի են քաշվում Գելիեգուզանից շատերը, որոնց մեջ և Վ. Պետոյանի եղբայրները, քոյրերը, հարազատները: Մայրը Սագեն, տեսնելով այդ, իր երկու փոքրիկ տղաների հետ մեկը գրկին, մյուսի ծեռքը բռնած, նետվում է Արածանի (Մուրայ) գետը, որպեսզի չընկնի բուրք գազանների ծեռքը:

Սեծ ընտանիքից ազատվում է միայն Կարդան Պետոյանը, որ Վ. Պոլիսը սովորում էր:

Վ. Պոլիսի «Կեղրոնական վարժարանում» նրա դասախոսներն են այն ժամանակավա հայ մտավորականների սերուցքը Սեծն Կոմիտասը, Գ. Զոհրապը, Սևակը (Ռ. Չիլինգարյան), Ո. Զարդարյանը, Գ. Խաժակը և նշանավոր մտավորականներ:

1915 թ. արհավիրքի ժամանակ հայ մտավորականների հետ Ղերել-Զորի անապատները Կ. Պոլիսից աքսորում են նաև ուսանողներին, որոնց մեջ և Վ. Պետոյանին, ընկերուց Գարեգին Երիցյանի հետ, որը հետագայում բժիշկ էր Յալեպում: Երկու ընկերներ կարողանում են փախչել, թաքնվել Կյուղմոս գետի ջրվեժի կամրջի տակ եղած մի քարտոցում 2 - 3 ամիս: Սնունդ հայրայրելու նպատակով գիշերները գնում են մոտիկ մի հունական գյուղ և աշխատում մի հարուստ հույնի հողանասում, հաց ստանում և լուսը չբացված վերադառնում իրենց քարայր-քարտոցը:

Մինչև 1918 թ. առաջին աշխարհամարտի ավարտը նա աշխատում է Տարսուն քաղաքում Շալվորջյանների այսուրի գործարանում հաշվապահ, իսկ համեմատաբար խաղաղ շրջանում վերադառնում Կ. Պոլիս, շարունակում ուսումը և 1920 թ. քարձը առաջադիմությամբ ավարտում «Կեղրոնական վարժարանի» պատմագրական լսարանային բաժինը և ստանում դպրության պսակավորի ավարտական:

Վ. Պետոյանը 1920-1922 թթ. Վ. Պոլիսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի մոտ աշխատում է քարտուղար և Վ. Պոլիսի Գուգգունջուկ թաղամասի «Շաուրդ Գարագողայն հոմ» դպրոց-որբանոցում որպես ուսուցիչ:

Վ. Պետոյանի առաջին ուսումնասիրությունը «Սասունը և իր վերջին հերոսամարտը» լուս է տեսնում 1920 թ. մայիսին Կ. Պոլիսի «ճակատամարտ» օրաթերթում (մայիս ամսի 5-10 համարներում թերթոններով):

1922 թ. դեկտեմբերին Շայաստանի ժողովնիորի Ալ. Սյասնիկյանի կոչով, որը Շայաստան աշխատանքի էր հրավիրում մտավորականների, մասնագետների, Վ. Պետոյանը դիմում է խորհրդային իշխանության դեսպանին և առաջին քարավանով մեկնում խորհրդային Շայաստան մերժելով Սորբոնի համալսարան մեկնելու արտոնագիրը:

1923 թ. հունվարի սկզբին ներկայանում է Շայաստանի Լուսժողկոմ Ա. Սոավյանին և խնդրում իրեն ուղարկել Եղեռնից փրկված, Աշտարակի և Թալինի շրջաններում տեղակրոված սասունցիների գյուղերը անգրագիտությունը վերացնելու մտահոգությամբ: Այնինչ, նոյն և հետագա մի քանի տարիներին նրան հրավիրում են նորաբաց համալսարանում դասախոսելու, քանի որ նա քաջահմուտ էր հայոց լեզվի և



գրականության, գրաբարի, հայ ժողովրդի պատմության և աշխարհագրության, ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն, արաբերեն, քրդերեն լեզուների ասպարեզում: Սակայն գերադասում է մազապուրծ փրկված հայրենակիցներին կրթել ու դաստիարակել: Իր ցանկությամբ նշանակվում է լեռնամասի դպրոց չեղած Մաղդա (Լեռնարոտ), Ազարակ և այլ գյուղերում իր նախաձեռնությամբ բացված դպրոցներում վարիչ-ուսուցիչ: 1925-28թ. նշանակվում է Աշտարակի շրջանի թաքիա գյուղի կոմունայի դպրոցի ղիբեկուր:

1928-30 թթ. Աշտարակի շրջկենտրոնի դպրոցի ղիբեկուր է նշանակվում: 1929 թ. ընտրվում է Խորհրդարանունի համագումարի պատգամավոր Աշտարակի շրջանից մանդատ նո. 187, Վճռական ծայնի իրավունքով, որտեղ ելույթ է ունենում Վ. Պետոյան (տես «Խորհրդային Հայաստան», 10/4-1929 թ. նո 82 (2345): Նույն 1929 թ. 4/6 ընտրվում է Եջմիածնի գավառի միջնորդութենական 5-րդ կոնֆերանսի պատգամավոր Վճռական ծայնի իրավունքով, մանդատ նո. 11:

1931 թ. Վ. Պետոյանին Ա. Խանջյանը հրավիրում է Երևան և նշանակում աշխարհում առաջին Անդրկովկասի Քրդական մանկավարժական տեխնիկումում նախ որպես ուսմասվար, ապա՝ տնօրեն: Տնօրինությանը գուգընթաց քրդերեն դասավանդում է Ֆիզիկա, քիմիա, կազմում և թարգմանում ֆիզիկայի, քիմիայի դասագրքեր:

1. Ֆիզիկայի դասագիրք, քրդերեն, 5-րդ դ., 1932 թ.:

2. Ֆիզիկայի դասագիրք, քրդերեն, 6-րդ դ., 1935 թ.:

4. Քիմիայի դասագիրք, քրդերեն, 6-րդ դ., 1935 թ.:

4. Հայ-քրդերեն բառարան, 1933 թ.:

5. Տերմինաբանական բառարան, քրդերեն, 1936 թ.:

Դիշյալ ծեռնարկները 1933 թ. իր անմիջական ղեկավարությամբ (համահենինակների հետ) տպագրվել են լատինատառ, աշխարհում առաջին անգամ քրդերեն և միաժամանակ ուղարկվում Միջագետք-Սիրիա՝ քուրդ երեխաների համար: Այդ քերին գրում է բազմաթիվ մանկավարժական-մեթոդական հոդվածներ, որոնք տպագրվում են «Ոյա-Թագա» և «Խորհրդային դպրոց» թերթերում:

1931 թ. նոյեմբերի 1-ին մանդատ նո. 11-ով Վ. Պետոյանը ուսուցիչ-ների համագումարի պատգամավոր է ընտրվում Անդրկովկասի Քրդական մանկավարժական տեխնիկումի կողեկտիվի կողմից: Նույն թվականի դեկտեմբերի 26-ին Երևանի Լուսաշխատողների կողմից ընտրվում է Լուսաշխի միության Համահայաստանյան Համագումարի պատգամավոր, մանդատ նո. 108:

1932 թ. Վ. Պետոյանն ընտրվում է Հարվածային լուսաշխատողների 2-րդ համագումարի պատգամավոր՝ իհմք ընդունելով օրինակելի հարվածային աշխատանքը լուսավորության ֆրոնտում, պարզեցած

վում հանրապետության հարվածային մանկավարժ կոչումով և անուն գրվում կարմիր տախտակին:

1939-1941 ուս. տարիներին աշխատում է Երևանի Կիրովյան ժողովրդամուն և քաղաքային մեթոդ կարինետում որպես քաղծողկրթաժի մեթոդիստ և դպրոցական տեսուչ:

1942-47թ. գործուղվում է Աշտարակ որպես ժողովրդաժամկետ Այս տեղ և աչքի է ընկուում իր նվիրված աշխատանքով և գնահատելով նրա բազմայա մանկավարժական աշխատանքը 1945 թ. նոյեմբերի 5-ի Հայկական ՍՍԴ Գերագույն Սովետի հրամանագրով արժանանում է Հայկական ՍՍԴ վաստակավոր ուսուցչի կոչման, իսկ 1949 թ. պարզեցած պատգամավոր ուսուցչի կոչման, իսկ 1949 թ. պարզեցած պատգամավոր ուսուցչի կոչման մասնակիությունը: 1952 թ. պարզեցած պատգամավոր ուսուցչի կոչման մասնակիությունը:

1947-1951 թթ. աշխատում է Հայկական ՍՍԴ Ակադեմիայի պատմության թանգարանում որպես գիտաշխատող և հայ ժողովրդի պատմություն դասավանդում Մ. Գորկու անվան դպրոցում: Այդ տարիներին է վերջացնում իր «Սասունի ազգագրությունը», «Սասուն անցյալում և Սասունի ազգատարական շարժումները», «Սասունի բարբառը» աշխատությունները, «Սասուն-Տարոնի քարտեզը»:

1951-56 ուսումնական տարիներին աշխատում է խովհանուրերի դպրոցում որպես ուսմասվար, որտեղ իր անմիջական նախաձեռնությամբ, Սոսկվայի օրինակով, Հայաստանում առաջին անգամ լույս է տեսնում խովհանուր երեխաների համար I-IV դ.դ. մայրենի լեզվի դասագրքեր (III և IV դ.դ. հեղինակներից է Վ. Պետոյանը):

1954 թ. լույս է տեսնում Վ. Պետոյանի «Սասունի բարբառը» աշխատությունը, որը բարձր գնահատականի է արժանանում լեզվաբաններ Յ. Աբաոյանի, Գ. Ղափանցյանի, Ա. Ղարիբյանի կողմից: Նրանց կողմից նշվում է, որ՝

1. Այդ գրքում Վ. Պետոյանը առաջ է քաշել և հաստատել Սասունի բարբառի ինքնուրույն բարբառ լինելը (մինչ այդ համարվել է Մշո բարբառի ենթաբարբառ):

2. Հեղինակը տարիների ընթացքում հավաքել և այբբենական կարգով դասագրել է բարբառային 4000 բառ, որոնցից 500 բառ իրենց ուղղակի և անուղղակի իմաստներով բացակայում են հայոց լեզվի բառարաններից: Այդ բառերը, ինչպես նաև տեղանունները, հսկայական նյութ են մատուցում հայ ժողովրդի և նրա լեզվի պատմության գանագան հարցերը լուսաբանելու գործում:

1956 թ. լույս է տեսնում Վ. Պետոյանի «Սասունի Թոռնիկյան իշխանությունը» մենագրությունը (Ակադեմիայի հրատարակմանը):

1956 թ. նա անցնում է քոշակի և ընդգրկվում Սփյուտքի հայկական դպրոցների համար մայրենի լեզվի և գրականության դասագրքեր

կազմելու պատվավոր գործին և սփյուռքահայ դպրոցների 5-րդ դաս. «Դայ գրականություն» դասագիրքը Վ. Պետոյանի, Գ. Սևանի և Շ. Վարսայանի հեղինակությամբ լույս է տեսնում 1964 թ.:

1965 թ. լույս է տեսնում «Սասունի ազգագրությունը» գիրքը գրված դեռևս պատմության բանգարանում աշխատած տարիներին, իսկ «Սասուն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները» պատրուն և խմբագրված ակադեմիկոսներ Ս. Երեմյանի, Մ. Դասրաբյանի (խմբագիր) դրական գրախոսականներով և երաշխավորված Դայկական ՍՍՀ գիտությունների Ակադեմիայի պատմության ինստիտուտի 1964 թ. դեկտեմբերի 8-ի հ.14 արձանագրությամբ ու երաշխավորությամբ հանձնված «Դայաստան» հրատարակչության տպագրության: Վերջինիս տպագրությունն աճբողջացնում է Սասունի ողջ պատմությունը: 1964 թ. ի վեր այդ պատմությունը բժ. Ակադեմիայի Պատմության ինստիտուտի տարբեր բաժիններում, բժ. հրատարակչությունում անցավ ծեղթից-ծեղոր:

1965 թ. հուլիսի 25-ին վախճանվեց Վ. Պետոյանը: Մեկ տարի անց «Սասուն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները» ետ են վերադարձնում դատերը պատասխանելով. «Մենք հայ ժողովրդի ազատագրական շարժումների մասին առայժմ ոչինչ չենք կարող տպարել»:

Վ. Պետոյանի մահը ցավակցեցին ոչ միայն Դայրենիքում, այլև Սփյուռքում: Ահա բե ինչ է գորում «Արարատ» օրաթերթը 1965 թ. օգոստոսի 27-ի 7141 համարում. «Ինչպես պաշտոնական աշխատանքներում, նույնպես ալ հասարակական-քաղաքական պարտականությունները կատարելու մեջ Վ. Պետոյանը դրսնորած է նվիրվածություն, պարտաճանաչություն և սկզբունքայնություն: Գրած է «Սասունի բարբառ», «Սասունի ազգագրությունը», «Թոռնիկյան իշխանությունը Սասունում», իսկ «Սասուն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները» աշխատությունը հանձնված է Գիտությունների Ակադեմիային: Կազմած և խմբագրած է դասագրքեր, աշխատակցած մանկավարժական մանուկին: Վ. Պետոյանի գործունեությունը գնահատված է Դայկական պետության կողմե...» նշում են նրա կառավարական պարզեցները:



Վ. Ա. Պետոյանի հեղինակած և հրատարակած գրքերի ցանկը:

1. «Սասունը և իր վերջին հերոսամարտը» անդրանիկ աշխատությունը, որ տպագրվել է 1920 թ. մայիսի 6-15 համարներում Վ. Պոլսի «ճակատամարտ» օրաթերթում թերթոններով (1920 թ.):
 2. «Սասունի բարբառ», 1954 թ.:
 3. «Սասունի Թոռնիկյան իշխանությունը», 1959 թ.:
 4. «Սասունի ազգագրությունը», 1965 թ.:
 5. Խոլց-համրերի դպրոցի 3-4-րդ դասարանների դասագրքեր, 1955 թ.:
 6. Սփյուռքահայ դպրոցի «Դայ գրականություն» դասագիրք 5-րդ դասարանի համար (Վ. Պետոյան, Գ. Սևան, Շ. Վարսայան) 1964 թ.:
 7. Ֆիշողություններ իր ուսուցչի Կոմիտասի մասին, որի մի մասը լույս է տեսել «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» գրքում:
 8. «Սասունցի Ղավիր» եպոսի 2-րդ հատորում «Խանդութի» և «Մուշեղի» պատումները գրի առնված սասունցի Թամոյից, 1946 թ.:
 9. Ֆիզիկայի դասագիրք, քրդական դպրոցի 5-րդ դ., 1932 թ.:
 10. Ֆիզիկայի դասագիրք, քրդական դպրոցի 6-րդ դ., 1935 թ.:
 11. Քիմիայի դասագիրք, քրդական դպրոցի 7-րդ դ., 1933 թ.:
 12. Հայ-քրդերեն բառարան, 1933 թ.:
 13. Տերմինաբանական բառարան քրդերեն, 1936 թ.:
 14. Բազմաթիվ մերոդական հոդվածներ ԼՃԿ-ի օրգան «Խորհրդային դպրոց», «Ոյա Թազգա» քրդական թերթերում:
 - Վ. Պետոյանը 1964 թ. ակադեմիկոս Ս. Երեմյանին է հանձնել անտիպ «Սասուն-Տարոնի քարտեզը» իր քարտեզագրության գրքում տեղավորելու:
- «Սասունը և իր վերջին հերոսամարտը» 19 էջ (գրված և տպագրված 1920 թ. Վ. Պոլսի «ճակատամարտ» թերթում) 6-15 համարներում պատմության աճբիոնի վարիչ Վ. Պարսամյանին իր «Դայ ժողովորի պատմություն» գրքում պրակով տեղավորելու համար:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ընկ. Վ.Ա.Պետոյանի «Սասունի և Տարոնի քարտեզի» մասին

Ծանոթանալով ընկ. Վ.Պետոյանի Սասունի և Տարոնի պատմական քարտեզի հետ, գտնում ենք, որ կատարված է վերին աստիճանի հետաքրքիր և գիտական մեծ նշանակություն ունեցող աշխատություն:

Լինելով բնիկ սասունցի, ընկ. Վ.Պետոյանը տարիների ընթացքում մեկ առ մեկ հավաքել է բոլոր ազգագրական և տեղագրական տեղեկությունները Սասունի և Տարոնի մասին. երբ այս գավառները Արևմտյան Դայաստանի ամենահայաշատ վայրերն էին: Այժմ, երբ այնտեղ բոլորովին վերացել է հայկական տարրը, ընկ. Վ.Պետոյանի հավաքած և որոշած աշխարհագրական վայրերի անուններն ու տեղագրությունը ստանում են միակ վակերական աղբյուրի բնույթ Սասունի և Տարոնի պատմական քարտեզը կազմելու համար:

Վերոհիշյալից ելնելով, մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է այս կարևոր նյութերը գրանցել քարտեզի վրա, հանձնարարելով այն քարտեզագետին, ըստ ներկայացված նախահաշվի:

Դայկական ՍՍՌ ԳԱ
Պատմության ինստիտուտի դիրեկտոր
դոկտոր-պրոֆեսոր՝ Ս.Երեմյան

28-ը դեկտեմբերի 1957թ.

ԱՍՍՈՒՆԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սասունը պատմական Դայաստանի Աղձնիք (Ալգինի, Ալշինի) գավառի հյուսիս-արևամտյան մասն էր կազմում, որը և հիշվում է «Աշխարհացույց» աշխատության մեջ, որպես Աղձնիքի 10-րդ գավառակը:

Սասունի տեղագրությունը տալիս ենք նշելով

ա) Տեղագրություն ըստ «Սասունցի Դավիթ» եպոսի:

բ) Տեղագրություն ըստ «Աշխարհացույց» աշխատության և տալով իմ

գ) «Սասունի և Տարոնի պատմա-աշխարհագրական տեղագրությունը» բաղկացած 170 էջից:

Ա. ՍԱՍՈՒՆԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ

Սասունի սահմանագծումն ըստ «Սասունցի Դավիթ» եպոսի կատարվում է Կապույտ բերդում, Գագիկ թագավորի, Ձեռի թորոսի, Ծովինարի և իր որդիներ Սամասարի և Բաղրամարի ներկայությամբ: Ծովինարի թելադրությամբ:

-Որդիք, թագավորից թե բան ուզեք.

Ասեք, թե՝ Ծովասար, Մարութեա ջուր,

ճապաղջրի Բաժն ու Ջոդեն տուր մեզ:

Թե Երդվավ՝ «Ճացն ու գինին, տեր կենդանին»

Կը տա»:

Սանասարն ու Բաղրամարը, իրենց մոր այս խոսքերով դիմում են Գագիկ թագավորին, որը պատասխանում է հետևյալը.

«- Որդիք, ասաց թագավորը

Մեր հոգուց զատ՝ ինչ որ կուզեք,-

Ճացն ու գինին, տեր կենդանին,-կը տանք»:

Ապա նշվում են Սասունի սահմանները.

«Սև սարի բոլոր ու չուրի ծծմակաթիք՝

Մշու վերևով պարիսպ քաշած,

Ելած էր չուրի Սեղանասարու գոտին ի Վեր ճապաղջրու Դուրան, Մուրադ գետի բերան,

Ու զեղ ամենն էլ տիրապետեց:

Օրերուց օր մ' էլ զարկեց, գնաց չուրի Մսըր,
Չուրի Բարձանա կամուրջ, չուրի Անգղա ձոր»:

«Սասունցի Դավիթ» եպոսի 182 էջում Մսրա Մելիքի երկու փակչևաններ Բարձանա Բուղեն և Չարբահար Քամին, երբ Դավիթն բերում են Սասուն ճամփին սպանելու, Բարձանի կամրջի մոտ ասում են Դավիթին.

«Չուր հիմիկ մենք Մելիքի հող-ջուրն էինք-

Դիմիկ քո հոր հող-ջուրն էկանք,

են ապով թեզի կը կանչենք...»

Դավիթն էլ պատասխանում է.

«Եսօրվան օր, որ ես իմ հոր հող-ջուրն ընկա, էլ չեմ ուզի ձեր հաց»:

Երբ Բարձանա Բուղեն և Չարբահար Քամին փորձում են բռնել Դավիթին Բարձանա կամրջի վրա սպանելու, Դավիթն ասում է.

«Վա՞յ, դուք կուզեք ինձ ջուր թալեք»:
Դավիթ ծեռ մի թալեց էնոր փողպատ,
Մեկ էլ թալեց էնոր փողպատ,
Տըփեց իրուր, տըփեց իրուր
Կախեց երկուսին էլ կամրջի երկու կողեն»:

Ըստ էպոսի, Սասունի հարավային սահմանը Փրա-Բարձմանի կամուրջն է, արևելքից Սև սարը և Ծծնակա Շիթը, իյուսիսից «Մշու վերևով պարիսպ քաշած», իսկ արևմուտքից ճապաղուր մինչև Բալու և Աշմուշատ՝ Արշամաշատ:

Ս Ա Ս ՈՒ Ն

Բ. ՍԱՍՈՒՆԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏ «ԱՇԽԱՐՉԱՑՈՒՅՑԻ»

Աղձնիքի տասը գավառների անուններն ըստ «Աշխարհացուցի» մինչև այժմ էլ 1915թ., որոշ փոփոխություններով պահվել է ժողովրդի կողմից, բեն տասնեհինգ ու կես դար է անցել:

Այսպես օրինակ՝

1. Արգճ, Արգճ, Արճն, Խարզան: Խարզան, դա Սոերոյից ուղիղ արևելք 3 կմ վրա գտնվող Արգճ քաղաքի անունն է, որից և ծագել է Խարզան կամ Խարզն անունը, Սասունի Խարզան գավառի անունը:

2. Նիկրետ, Մուֆարիսին, Ֆարիսին, այժմյան Ֆարիսինն է Սասունի հարավում: Ինչպես

Մուշը, այնպես էլ Ֆարիսինը, հանդիսանում էին Սասունի համար տնտեսական առևտրական հարաբերությունների կենտրոններ: Դա իսկական Ֆիգրանակերտն է:

3. Քեղ Արզնից հյուսիս, Թոլս գետի երկու վտակների մեջ, Զոխ կենտրոնով, և ըստ Լեոյի ուսումնասիրության Խզու, Շազու, Շազզո անունը ծագում է դրանից, իսկ Շազզոն Սասունի մի շրջանն է և հետագայում միայն այդ անունը շրջանից վերացվեց և Խարջողի անունվ կոչվեց: Զոխը այժմ էլ Զոխ է կոչվում:

4. Կերիկ կամ Կերեկ: Ֆիգրիսի Նեմփոս կամ Քազերը գետի եղերքների վրա, այդ գավառումն էր կարծվում Ֆիգրանակերտի տեղը:

5. Տատիկ, այժմ էլ Տատիկավան և Տատիկ գետ անունները պահպանվում են նոյն վայրի համար: Գտնվում է Սասունի բերդի հարավային մասում:

6. Ազնվաց ծոր. Բալալեզա (Բաղեց կամ Բիթլիս) ի հարավարևմտյան կողմը, այժմ Գյոզել-դեր (Գեղեցիկ ծոր) է կոչվում Սասունի-Խուրի արևելյան մասին սահմանակից:

7. Խերիթը (Սերիսեք-Սերիսեր)- բերևս Սոերդ այդ անունն է, որ այժմ էլ Սոերդ է կոչվում և Սասունի Մոտկան և Խարզանի շրջանների արևելյան մասերը այժմ էլ մտնում են Սոերդի մեջ:

8. Գգեղ - Մոտկանի շրջանի Գգեղ գյուղը, որ ունի 60 տուն և շուրջը մեծ քաղաքի ավերակներ, շեն և կամարակապ մի եկեղեցի այդ Գգեղ կամ Գգեխ անունը պահում է, որին քրոբերն էլ ասում են Նիզե:

9. Սալնո Չոր, այժմ էլ կոչվում է Սալնո Չոր Սասունի արևելքում:

10. Սասուն, որ նույնությամբ պահում է իր պատմական անունը Սասուն կամ Սասուն անունից:

Ըստ Սովուս Խորենացու պատմածի, երբ Աղրամելիք և Սանասարը իրենց հորը Սենեքերիմին սպանում են (մ.թ.ա. 682թ.) և գալիս Սիմ սարի շրջակայքը, ուր և երկու եղբայրները կառուցում են իրենց բերդը: Սիմ սարին մոտիկ Ծովասարի շղթայի ստորոտումն էլ մինչև այժմ մնում է Սասուն բերդը, որի բնակչութերի դեմ Տիգլարպիլասարը կովել է մ.թ.ա. 736 թ., և այժմ այդ բերդը կոչվում է Սասունցի Դավթի բերդ, որը գտնվում է բուն Սասունի Քաղցիկ և Սարեկան գյուղերի կողքին:

Գ. ՍԱՍՈՒՆԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սասունը գտնվում է արևելյան երկայնության 41-42 և հյուսիսային լայնության 38-39 աստիճանների տարածությունում: Թուրքիայի այժմյան Բիթլիս վիլայեթի արևմտյան, Մուշ-վիլայեթի հարավային և Սոերդ վիլայեթի հյուսիս արևմտյան մասերը կազմում էին Սասուն գավառը, որը բաժանված է այդ վերոհիշյալ երեք վիլայեթների վրա:

Սասունի (1914թ.) սահմանները հետևյալներն էին. արևելքից, Բիթլիսի վիլայեթը Բիթլիս կենտրոնով, հյուսիսից, Մուշ վիլայեթը Մուշ կենտրոնով, հարավից, Սոերդ վիլայեթը Սոերդ կենտրոնով: Արևմտյան Գենջի և Լճային շրջանները: Սասունի մեծ մասն այժմ ընկնում է Սոերդ վիլայեթի մեջ:

Սասունը 18-րդ դարի սկզբից մինչև 20-րդ դարի սկիզբը հաջոր-

դաբար եղել է նախ Վանի, ապա Դիարբեքիրի և Բիթլիսի վիլայեթերների մեջ, միայն 1915 թվականից, կոտորածից հետո, գրկեց իր պատմական Սասուն անոնից և իր հայ ազգաբնակչությունից ու որպես աշխարհագրական մի ամբողջություն էլ չթողնվեց, այլ բաժանվեց Բիթլիս, Սուշ, Սղերդ վիլայեթերի վրա:

Սասունի բնական սահմաններն են՝ հյուսիսից Տավրոս լեռների այն շղթան, որ բաժանում է Մշո դաշտը Սասունից, մի լեռնաշղթա, որ ուղիղ արևելքից արևմուտք է Երկարում, ինչպես Մշո դաշտը, որի համար հարավային հսկա մի պատվար է կազմում այդ լեռնաշղթան, որի արևելքից արևմուտք ուղղության վրա կան Խութի Սև սարը, Քանի սարը, Ծիրնկատարը, Սիմճ կամ Կորդուքը (Կուտիկ) և Խոզմո ամենաբարևած գագարը: Հարավից Սլիվանի դաշտը, որի հյուսիսային մասը կազմված է Մարտուկի և Խարզանի լեռների ստորոտներով:

Արևելքից Խութի լեռների արևելյան փեշերից բխող և ուղիղ դեպի հարավ հոսող Թուխս կամ Բաղեշի գետը: Արևմուտքից Խոզմո լեռան արևմտյան փեշերից բխող և դեպի հարավ հոսող Խովզի ջուրը մինչև նրա Բարձանի ջրին խաօնվելու մասը:

Դյուսիսից Մշո դաշտի, հարավից Սլիվանի դաշտի, արևելքից Բաղեշ գետի և արևմուտքից Խովզի գետի միջև պարփակված լեռնաշխարհը, որ կոչվում է Սասուն, ունի Երկնասլաց լեռներ, անդնդախոր ձորեր, լեռնացած ժայռեր, ստորերկրյա բնական մեծ քարանձավներ, նեղ ու անառիկ կիրճեր, որոնց մեջ տեղ-տեղ փոքում են փոքրիկ հարթություններ և սարավանդներ, որոնք իրենց բարեբերությամբ և հարուստ բուսականությամբ գյուղատնտեսության և անասնապահության համար պիտանի են դառնում շնորհիկ համառ և աշխատասեր լեռնականների աշխատանքի:

Սասունի լեռների ամենաբարձր գագարներն են Անդուկը, Ծովասարը, Կեփինը, Մարտուկը, Սիմճ (այժմ Կորդուքը, Կուտիկ), Ծիրնկատարը, Սև սարը և Քանա սարը: Այդ լեռնագագարներից Անդուկը, Ծովասարը, Կեփինն ու Մարտուկը պաշտամունքի վայրեր են եղել վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը (1915 թ.), նույնիսկ նախարիստոնեական շրջանում: Այդ լեռներից յուրաքանչյուրն ունի իր ավանդությունը:¹

Շացի վերոհիշյալ հսկա լեռներից, նրանց միջին մասում փեշերում հայտնի են. Տալվորիկի լեռներից Գարլորը, Գոջշիկը, Գրեքոլը, Խիլուտարիկը, Սպիտակ սարը, Խարզանքի, Խութ լեռները, Կանիագորսի, Արքնաղբյուրը և այլն, որոնցից առաջին չորսը անառիկ անդրբուժներ են, որ Սասունի ապստամբությունների ժամանակ մեծ իրավունք ունեցել:

Սասունի լեռներից գահավեժ անկումներով գետի հարավ՝ Սլիվանի դաշտը, և դեպի հյուսիս՝ Մշո դաշտն են հոսում բազմարիվ գետեր, որոնք իրենց ջուրը զանում են տալ լեռնաբնակներին, և Տիգրիս ու Եփրատ գետերի մեջ թափվելով՝ հջոնում են Միջագետք: Սասունի ոչ մի գետ արևելքից արևմուտք, կամ արևմուտքից արևելք չի հոսում, նրանց ուղղություններն են դեպի հյուսիս՝ Մշո դաշտը, և հարավ՝ Սլիվանը, Միջագետքը:

Տիգրիսի ամենայուսահային ակունքն է Կանիաբահջին (Պայթող աղբյուրը), որ բխում է Անդուկի ստորոտից և անցնում Գելիեզուզան գյուղի միջից նրա բաղերը թողնելով իր աջ և ձախ ափերի վրա: Այդ գետը ճեղքել է լեռները, խորացել իր ուղղաձիգ ափերի անդունդների մեջ և հջնելով Տալվորիկ կոչվում է Տալվորիկի ջուր, հասնելով Մուֆարիկինին (Խարիսինին) մոտիկ, թափվում է Բարձանի ջրի մեջ և անցնում Փրա-Բարձանի (Բարձանի կամուրջ) կամրջի տակով, իջնում Սլիվան, թափվում Տիգրիսի մեջ:

Կանիա Բահջին Խութ և Աղրիկ գյուղերի միջև ձախ ափին միանում է Ծատախի Գեղաշեն և Ծուշնամերկ գյուղերից անցնող, Ծիրնկատարից, Անբանիայից եկող երկու վտակներից գյուացած Սուսանա գետը: Սուսանա գետին աջ կողմից միանում է Անբանի գետը, իսկ ինքը Ծովասարի հյուսիսային փեշից է սկիզբ առնում:

Կանիա Բահջին հոսելով դեպի հարավ, Ավարաս կոչված տեղում, ձախ ափից ընդունում է Գյալառաջ վտակը, որ գալիս է Ծովասարի հարավային փեշից: Կանիա Բահջին ձախ ափից ընդունում է նաև Խոծոծ վանքի ջուրը, որը գալիս է Ծովասարի հարավային փեշից, Զանդուսի վտակը, որ Սատանի կամրջի մոտ է իրեն խաօնվում նոր անցնում կամրջի տակից: Խլիուտի վտակը՝ Սատանի կամուրջի հարավից: Սուսանա գետի Կանիա Բահջին միանալու կետից մինչև Խլիուտի վտակի ընդունման կետը, Կանիա-Բահջին անցնում է Տալվորիկի միջից և կոչվում է Տալվորիկի ջուր: Կանիա Բահջին Բարձանի ջրի կամրջին չհասած, ձախ ափից Բահմդա գյուղի մոտիկ ընդունում է Խարլոզ գետը, որ բխում է Ծովասարի հարավից, ունի Երկու վտակ. Կապաս գետը աջ ափից և Կուս գետը, կամ Բողրկանի գետը, որոնք Ծովասարի գագարի հարավային մասից բխելով և ուղիղ հարավ հոսելով իրար միանում են Բարձիկ պատմական գյուղի մոտ Կապաս գետը աջից, իսկ Կուս կամ Բողրկանի գետը ձախից: Դրանց միացման կետի բլրամայոի վրա կառուցված է Սասուն կամ «Սասունցի Ղավրի» հսկա եռանկյունի բերդը, որի հարավային սուր ծայրը հպվում է այդ Երկու վտակների միացման կետին:

Խաբլջող գետը, Սասուն թերդի հարավային մասում Սարեկան և Դադի գյուղերի միջին մասում, ծախ ափից, ընդունում է Խանի ջուրը, որ բխում է Ծովասարի արևելյան փեշից, ծագում առնելով նրա գագարի լճից և անցնելով Խան ավանից, Դեղ և Դարջոնք գյուղերի հյուսիսային կողմից ընդունում է աջ ափից Արև գետակը, որ գալիս է Արևոց գյուղի փոքր բարձրությունից: Խանի գետը կոչվում է նաև նամի ջուր:

Կանիա Բահջի աջ ափի վտակներն են՝ Կանիա Բահջի աջ ափին միանում են Գելիեսանի կամ Դարմոյի գոմի ջուրը, որ բխում է Կեփին սարի արևելյան ստորոտից և թափվում նրա մեջ ծախ ափից միացող Գյալառաջ վտակի միացման մոտիկ: Աղբիկ գյուղից հարավ, Զնա ջուրը, որ Տալվորիկից գալով Դարքը և Դունուտ գյուղերից անցնելով, Զենգոլ պատմական քարանձավի հարավում, միանում է նրան: Մզրայի ջուր, որ Տալվորիկի սարից գալով Արտխուլք գյուղի մոտ է միանում: Խուլքի կամ Խազալկա ջուր, որ բխում է Սիմ (կամ Կուրտիկ) լեռան հարավային փեշից, Զիզառու գետի վտակը Ծիծեռնակի վանքի կողքից հոսելով, իջնում է Շենիկ, Սեմալի փոքր դաշտը, որտեղ ծախ ափից ընդունում է Սեմալ գյուղի միջից անցնող Դաշտովի ջուրը: Կապրնի գյուղի մոտիկ, դարձյալ ծախ ափից Պիրեշա Գելու ջուրը, կազմում է մի լճակ, որը կոչվում է Գոլա ների (Նոխազի լիճ), ապա անցնելով Փասուր գյուղաքաղաքի մոտով, կտրում անցնում է Խազալիկի դաշտը, որի անունով կոչվում է Խազալիկի ջուր, զնում է Փռա-Գերքո մեծ կամրջի տակից անցնում Կամիկ և Բահմդա կոչվող գյուղերի մոտ խառնվում Կանիա Բահջի գետի հետ, կազմում Բարմանի գետը, անցնում համանուն Բարմանի (Փռա-Բարման) կամրջի տակով, իջնում հարավ և Ֆարիշինի (Նիգրկերտ-Ֆիգրանակերտ) արևելքով իջնում Բշերիկի դաշտը թափվում Տիգրիսի գետի մեջ:

Սասունի արևելյան մասում, Խուրի շրջանի հյուսիսից, Աև սարի հարավային փեշից Սուրբ Աղբերիկ (Աղբյուրիկ) կամ Վանդիր պատմական վանքի մոտ բխում է Խուրի ջուրը, որն անցնում է Խուր կամ Խույք ավանի միջից, նրան բաժանելով Երկու մասի, աջ և ձախ ափերի Երկու թաղերի: Խուրի ջուրը հոսելով դեպի հարավ, մինչ պատմական Գգեխ (այժմ գյուղ է) հասնելը, կոչվում է նամեն Դասպան (Չիերի գետ), Նիշ քաղաքի (Եսայի Նշեցու ծննդավայրը, այժմ գյուղ է) հարավային մասում, աջ ափից, ընդունում է Ասու ջուրը, որ բխում է Աստվածածին վանքի սարից, և Ռարի ավանի մոտ գետը կոչվում է Ասուի ջուր, որին աջ ափից Նորաշեն ավանի մոտ միանում է Դազգոյից անցնող Շատ կամ Դազգոյի գետը և աջ ափից Խազզոյի հյուսիսային մասում միանում է Տամուխի վտակը: Ասու և

Շատ գետերը միանալով, հոսում են դեպի հարավ և անցնելով Բշերիկի դաշտով թափվում են Տիգրիսի մեջ:

Սասունի և Մշո դաշտի բաժանման Տավրոսի լեռնաշղթայից, Արևելյան Աև սարից (Խուրի լեռներից) մինչև արևմտյան Խոզմո սարը, դեպի Մշո դաշտն են իջնում և Արածանիին (Մուրադ գետ, Արևելյան Եփրատ) խանվում հետևյալ վտակներն ու գետերը: Աև կամ Խուրա սարի հյուսիսային ստորոտից բխում է Սեղրագետի, Մշո դաշտի արևելյան հարթությունը կտրելով, Դաշիկ (Մաշտոցի ծննդավայրը) գյուղը թողնելով իր աջ ափին և Նորշեն մեծ գյուղը ձախ ափին, Խոփեր և Խաշխահտախ գյուղերի մոտ թափվում է Արածանի գետը: Առաքելոց վանքի և Դավատպորիկ գյուղի Երկու վտակները, բխելով Ծիրնկատարի արևելյան հյուսիսային փեշերից, իջնում են դեպի Մշո դաշտ և, Բերդակ ու Արադ գյուղերի միջից անցնելով, թափվում են Սեղրագետ Նորշեն գյուղին մոտիկ: Տապեյ հովտի ջուրը, բխելով Սիմնի (Կուտօքը) գագարից, իջնում է Սուշ և քաղաքը Երկու մասի բաժանում, հոսում է Մշո դաշտի հարավից-հյուսիս ուղղությամբ, Առնջվանը և Ծափնա գյուղերի միջից անցնելով, Բեյլից գյուղի մոտ թափվում է Սեղրագետ, Խզլաղաջի ջուրը, Խոզմո սարի հյուսիսային փեշից, Սբ. Յովհաննես վանքի արևմտյան կողմից, իջնում է Մշո դաշտ, անցնում Խորոնք (Ս. Խորենացու ծննդավայրը) գյուղի արևմտյան կողմով և թափվում է Արածանի:

Արածանի (Մուրադ գետ) կամ Արևելյան Եփրատ գետը բխելով Մասիսի հարավային կողմի Ծաղկուտն լեռներից, անցնում է Ալաշկերտից, Սանագկերտից և Բուլանուխից: Մշո դաշտի հյուսիսային կողմից, Չարբուհրով (Չորս հուն) մտնում է Մշո դաշտը և արևելքից արևմուտք ձգվող այդ ընդարձակ դաշտը Երկու մասի բաժանում և դաշտի լայնության կեսից հոսելով դեպի արևմուտք, ուր վերջանում է Մշո դաշտը և սկսում նապաղջուրը, Գուռգուռա կոչվող ջրվեժով թափվում է ամբողջ գետը:

Այդ Գուռգուռա ջրվեժի տակն էր լողանում, հանգստանում հեթանոս հայերի Գեղեցկության աստվածութիւն Աստղիկը՝ Վիշապաքաղ հրածին Վահագնին Աշտիշատի մեհյանում իր մոտ ընդունելուց հետո:

ՍԱՍՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Սասունը կազմված էր տասը գավառակներից, որոնք են՝	
1. Բուն Սասունը	15 գյուղերից բաղկացած:
2. Շատախը (Սասունի)	10...
3. Տալվորիկը	12...
4. Խութ-Բռնաշենը	42...
5. Փսանցը	30...
6. Ջազզոն	97...
7. Մոտկանը	51...
8. Խիանցը	56...
9. Խուլբը	72...
10. Խարզանը	114...

Ընդամենը 505 գյուղ, հայկական և քրդական գյուղերը միասին հաշված:

1. Բուն Սասուն

Բուն Սասունը գտնվում է Սասունի հյուսիս-արևմտյան մասում: Նրա սահմաններն են հյուսիսից Տավրոս լեռան Սիմն (Կուրտըկ) լեռը Տալավճին կոչվող մասից մինչև Խոզոն լեռան արևելքի փեշը և Շատախը, արևելքից Խութ-Բռնաշենը, հարավից Տալվորիկը, արևմուտքից Խուլբը:

Բուն Սասունի մեջ են Անդոկ, Ծովասար, Կեփին և Սիմն գագարները, Կանիա Բահջի, Խուլբի ջրի և Սասուն գետի վերին հոսանքները:

Բուն Սասունի կենտրոնն է Գելիեգուզան գյուղը, որ գտնվում է Անդոկ լեռան արևելյան ստորոտում և ունի 350 տուն ցրված երեսուն չորս բաղերում, որոնք սկսում են Անդոկի ստորոտից, փովում Կանիա Բահջի գետի աջ և ձախ ափերի վրա և հասնում մինչև Սուսանա գետը՝ Ծովասարին մոտիկ: Կանիա Բահջի գետի ձախ ափին հաջորդաբար և արևմուտքից արևելք, իրարից 1-3 կմ հեռավորության վրա գտնվում են հետևյալ բաղերը Ալիանց, Մերկեր, Ռաջալնին, Շիոլ, Կավրդի, Մաժդըկ, Շուտենցիք, Խասոյ Մզրա, Մըջելնին, Բայարնին, Շոսալ, Գյաղըկ, Մազրեսան, Մխիթար, Խարիբշան, Տավըրնիկ և Խարձն գոմեր: Առաջին և ամենամեծ բաղը Ալիանցը, նույն-

պես բաժանվում է. Հովհաննեսի տներ, Ավոյի տներ, Սնոյի տներ, Բալոյի Արտեր, Շարկեի Օվիս և Մրգոյի տներ կոչվող բաղերի:

Կանի- Բահջիի աջ ափի վրա, Անդոկի ստորոտից դեպի արևելք, դեպի Ծովասար գտնվում են Գելիեգուզանի հետևյալ բաղերը Վերի Գելին, Լիսըկ, Կավրասպի (Սպիտակ քար), Ավիա Խանի, Խոշոկ, Ամբրնին, Ռաշըկ, Գյուղ (Կենտրոնական բաղը, ուր կար Սր. Թուխմանուկ Եկեղեցին), Խաջըկ, Տահլասն, Յարմոյ գոմ կամ Գելիեսան (Շների ծոր), Փալի Գոմանին (գոմեր), Ալոչակ, Մրդառը և Շիրնիկ, իսկ Կատվի գած և Շամոյ գած (Շամոյի լեռ) կոչված բաղերում վերջին տարիներին բնակչություն չկար: Գելիեգուզանի ամենաարևադաշտյան կողմը գտնվող Ալիանցիք բաղից մինչև ամենաարևադաշտյան կողմի բաղը Խարձնգոմերն իրարից հեռու են 25-30 կմ-ով:

Գելիեգուզանը Սասունի սիրտն է կոչվել իրավացի կերպով, որովհետև լինելով ինքնապաշտպանության ամենահարմար տեղը Սասունում, Անդոկի ստորոտում, 1894, 1904 և 1915 թթ. ապստամբական շարժման կենտրոնն է եղել և միշտ է Սասունի ամբողջ ազգաբնակչությունը այնտեղ՝ Գելիեգուզանում² և Անդոկի փեշերին է ապաստանել, դիմադրել, հողի և ազատության համար կովել և առանց անձնատուր լինելու, 1915 թ. հերոսաբար ընկել իր հայրենի հողի վրա առանց այն լրելու: Ժողովուրդն ասում էր «Գելիեգուզանը Սասունի սիրտն է, իսկ Տալվորիկը՝ նրա պողպատե կողերը»:

Բուն Սասունի հաջորդ նշանավոր և մեծ գյուղերն են Շենիկը, Սեմալը, որոնք Գելիեգուզանի հյուսիսային մասում, մի փոքր հարթավայրում են գետեղված, Մուշին ամենամոտիկ գյուղերն են դրանք, որտեղից միշտ սկսվել է թուրքական բանակի հարձակումը Սասունի վրա: Սեմալում և Գելիեգուզանում 1904թ. թուրքական զորանոց շինեցին:

Սեմալ գյուղը³

Սեմալն 80 տուն և երեք բաղ ուներ՝ Վերին, միջին և ներքին: 1904 թվականի կոտորածից հետո իին, այրված գյուղի փոխարեն նոր գյուղ կառուցեցին Դաշտոկ կոչված դաշտավայրում. իին գյուղում մնում են երեք տուն, որոնցից մեկը՝ Քոթանի տունը, նահապետական մեծ տուն էր: Նոր գյուղը չորս բաղ ուներ՝ Վերին Դաշտոկ, Ներքին Դաշտոկ, Բշարեկան (Անթանիա վանքի կողմը) և Բլուրը Շենիկի կողմը: Դաշտոկի գետը Սեմալից անցնող Կուրտըկի Կորեկնու աղբյուրից գալիս էր և ուղղվում դեպի Շենիկ և, Գելի էլ էր կոչվում: Զիզառնու գելու ջուրը Սեմալի արևմուտքով գնում անցնում էր Շենիկը և խառնվում Խուլբի ջրին:

1904 թվականի ապստամբությունից հետո, երբ թուրք կառավարությունը Գելիեգուզանում, Տալվորիկում, Իշխանձորում և Տափջրում զորանոց կառուցեց, Սեմալում նույնպես զորանոց հիմնեց Մըլեջուրսի (Արոռ-բլուր) կոչված տեղում: Գյուղի հյուսիսային ծայրից մի կես կիլոմետր հեռու: Զորանոցի հիմքը փորելիս մի եկեղեցու ավերակ է գտնվում անունը Սր. Հոհիսիմե, մի գերեզման, որի մեջ է եղել մի խաչ, մի բուրգառ, կծուճներ, թոնիր և հունարեն գրված մի արձանագրություն: Կուրտըկի փեշին, Զիզանու Գելի կոչված մի ծորի թերանին, տասը հատ խաչքարեր կան, որոնք կոչվում են Ներքին Զիզանու խաչքարեր: Այդ վայրից թիւ հյուսիս կար Դըքանի - զեվկըրան (ոսկերչների խանութ) կոչված մի տեղ: Խաչքարերի վայրից դեպի Զիզանու ծորը կար հին առվի հետքերը, Տըշտիրան (նոխազներ) կոչվող ծորակով: Խաչքարերի տեղի ծորի թերանը ժայռոտ էր: Անցորդները գնում էին խաչքարեր կոչվող վայրով, աղորում անցնում: Ըստ ժողովրդի պատմածի այդ խաչքարերը Ծիծեռնակի վանքի խաչքարերն են: Զիզանի բառը մեր կարծիքով Ծիծեռնակի այլափոխումն է և այդտեղ եղած կլինի Ծիծեռնակի վանքը: Սեմալ բառը Սե-մալ (Երեք տուն), կամ Սի-մալ (30 տուն) բառերից է կազմված, ասում են սակայն, հավանականը, մեր կարծիքով, Սիմ կամ Սիմն անունից է, այն սարը Սիմն, որ հիշում է Խորենացին և որի ստորոտումն է գտնվում Սեմալ գյուղը:

Ծենիկ գյուղը

Ծենիկը բուն Սասունի կարևորագույն գյուղերից մեկն է, որ Գելիեգուզանի և Սեմալ գյուղերի հետ կազմել է այն եռանկյան կենտրոնը, որ հանդիսացել է ազատագրական շարժումների բատերաբեմը:

Ծենիկը գտնվում է Սասունի հյուսիսային կողմը, Սեմալ գյուղից 3-4 կմ արևմուտք և նրա հետ միասին նույն փոքրիկ սարադաշտի վրա, Գելիեգուզանի Ալիանքի հյուսիսում, նույնպես 3-4 կմ հեռու, Կուրտըկ (Սիմ) լեռան հարավային ստորոտի հարթավայրում, Մուշից քսան կմ հեռու և Մուշից-Սասուն մտնող ճամփի վրա, որով միշտ հանդիսացել է այն դուռը, որ փակել է Սասունի ճանապարհը թուրք կառավարական զորքի հարձակումների ժամանակ: Փաստումն Սասունի առաջին ճակատամասը, սահմանապահ բերդն է Եղել: Ծենիկ գյուղացի էին 1894թ. ապստամբության ժամանակ հերոսաբար պայքարող Սոսեի Գրգոն և նույնքան հերոս Սասունի անձնագործ դրստրուց Շաքեն:

Ծենիկ գյուղն ուներ 70-80 տուն, 700-800 շնչով: Ծենիկի տնտեսա-

կան նշանակությունն է այն եր, որ Սասունի հայտնի ծխախոտագործ գյուղն էր, Սասունի «Սամսոնը»: Ծենիկի հողամասերը կոչվում էին ըստ վայրերի Տապեի արտեր, Թընֆանա արտեր, Վերի ճամ, Վարի ճամ, Գյուլու արտեր, Բարքանցից արտեր, Ախոյի արտ, Ծեղտանցից, Գուղցոկնին, Խըմքըկնին, Բաժեր (անջուր հասցնող), Ալօթեր, Սարու արտեր, Գազգազկնին, Զուլըկնին և այլն:

Ծենիկն ուներ արևելքից-արևմուտք ձգվող երկու փողոց և մեկն էլ հյուսիսից-հարավ, որով գյուղը բաժանվում էր չորս մասի: Քայլի: Գյուղամիջի աղբյուրը կոչվում էր Գեղաղբյուր, իսկ արևելքում, դեպի Սեմալ գյուղը, Ծենիկից մեկ կմ հեռու Չնըֆան կոչվող աղբյուրը, որի անունով կոչվում են նրա շրջակա արտերը:⁴

Ծենիկի սրբավայրերն ու պատմական տեղերը հանդիսանում են 1. Սր. Աստվածածին եկեղեցին, գյուղի հյուսիս-արևմտյան կողմը, մոտ մեկ կմ հեռու: 2. Սուրբ Գևորգը, որը մի ճատուռ էր Սր. Աստվածածին եկեղեցուց երկու հարյուր մետրի չափ դեպի հյուսիսարևելք, որին հավատում էին և քրոնը, ուստի գալիս նրա մոտ: 3. Գյուղից արևմուտք, Ծեղտանցի և Գուղցոկնին կոչվող հողամասում, փոքրիկ մի բարձրության վրա կար մի հին ավերակ եկեղեցի, որի շուրջը, բլրի վրա խաչքարերի մի մասը մինչև 1915 թ. դեռ կանգուն, բլրի արևելյան մասում հին գերեզմանատունն էր: Այդ եկեղեցին կոչվում էր Կարմիրակ, որը, հավանաբար, վանք է եղել, որի վայրում ալուծի շատ ժառեր կային:

Ծենիկ գյուղն ուներ երեք գերեզմանոցներ՝ Կարմրակի, Սուրբ Պետրոցի և Աստվածածին, ըստ եկեղեցիների անունների: 4. Ծենիկի հարավ-արևմուտքում էր Սուրբ Թեղողորսի ավերակ վանքը, ուր կային խաչքարեր և շինությունների մնացորդներ: Թեղողորս վանքից դեպի Սերգենոցան և Կուրտըկ (Սիմ) սարի Սև Բարը մոտ 8-10 կմ-ի վրա ջրանցքի հետքեր կային մինչև 1915 թվականը: Ժողովուրդն այդ ջրանցքի կառուցումը կապում էր մի հիշանի աղջկա հետ և այդ ջրանցքը կոչվում «Քառասուն մանկանց առու», որոնց յուրաքանչյուր 40 մանուկները, իրարից գաղտնի սիրում էին իշխանի գեղեցիկ արջկան, և առուն էլ կոչվել է «Քառասուն մանկանց»:

5. Կալա Սըլունկը (Կալա Սըլընգ) բարձր անտառապատ մի բլուրի վրա, Ալիանքից և Ծենիկից հոսող երկու համանուն գետերի միացման եռանկյունու վրա է կառուցված: Գետերն իրար միանուն են բերդի արևմտյան մասում: Կալա-Սըլընգը երեք կողմերից հարավ, հյուսիս և արևմուտքից խիստ թեքությամբ զարիվայրեր ունի: Բլրի արևմտյան անկյունը սեպած իջնում է մինչև գետակների միացման տեղը: Այդ անկյան մեջտեղում կա մի փոքրիկ ցցված բլուր, որ կարծես պահակ լինի կանգնած: Այդ բերդը Սլկունյաց նա-

խարարության ամրոցն է եղել, որ հետագայում Տարոնի Տեր Մամիկոնյանները գրավել և միացրել են իրենց կալվածքներին:

6.Գուրզովնին. այն ֆոր-պոստն է, որից միշտ կատարվել են քրդական և բուրժական հարձակումները, որի համար շենիկցիները խրամատներ էին կառուցում և ամրացնում այդ կողմը:

7.Դրանեզիվըրան (ոսկերիչների խանութներ) Շենիկ գյուղից հյուսիս Կուրտըկ (Սիմ) լեռնաշղթայի վրա, մի կիլոմետր տարածությամբ կան փոսեր, բլուրներ, որոնք ունեն երկարահալվածքի մնացորդներ, հանքաքարեր: Ըստ ավանդության, դրանք դարբնոցներ և ոսկերիչների խանութներ են եղել, քաղաք է եղել: Նրա մոտ է եղել Շիծեռնակի վանքը, որ Շիծեռնակի պես թառած է եղել այդ Զիզառու ձորի ափին:

8.Դուքնովիտը անտառապատ մի ձոր էր, որի երկարությամբ եղել են խանութներ (դուքան), որի համար դուքնովիտ (դուքանի հովիտ) է կոչվել: Խորդ ու բորդ փոսերի շարանը ենթադրել է տալիս, որ դարբնոցներ կամ հանքավայրեր են եղել: :

ՍԱՍՈՒ ԿԱՄ ՍԱՍՈՒՆ (Դավթի բերդը)

Ամբողջ Սասունի նվիրական բերդը Սասու կամ Սասուն կոչվող Դավթի բերդն է, որ գտնվում է բուն Սասունում Ծովասարի հարավային ստորոտում, զագարից 4-5 ժամվա հեռավորության վրա, Կապասգետ և Կուսգետերի (Բոզրկանի գետերի) հրար միացնան կետում, մի ժայռոտ և բարձր բլուրի վրա, պատմական Զաղքիկին, այժմ քրդական գյուղին կից: Բերդը եղել է միջնաբերդ, որի շուրջը փուզած է եղել Քաղքիկը, ուր ավերակներ և սալահատակված ճամփաների մնացորդները կային:

Սասունցի Դավթի բերդի Կուս գետի կողմը պտղատու ծառերի հսկա մի անտառ է, այգիներ, որոնց մեջ, բացի արմավենու, լիմոնի և նարնջի ծառերից ամեն տեսակի պտղատու ծառեր կան: Խաղողի վազերը թփեր չեն եղել, այլ մինչև ծառերի գագաթները բարձրացող թարմաներ, որոնց ողկույզները 1-1.5 կիլոգրամ կշռող ծանրությամբ, պատմում են ականատեսները: Այդ խաղողի տեսակները կոչվում են Անջարի, Չոնուտ, Մեծ պտուղ, Սև բախչի, քոխար, էժու պտուկ, եղան աչք, աշնուկ (ուշ հասնող և կախանի խաղող) և այլ

տեսակներ: Բերդի հյուսիսային մասը, դեպի Ծովասար, անտառուտ չէ, Կապասգետի կողմը նույնպես լերկ է:

Բերդը Երանկյունածն է, որի սուր կողմը հասնում է Երկու Կուս և Կապաս գետերի միացնան կետին, իսկ խարիսխը վերջանում է բերդի հյուսիսային պարսպին զուգահեռ և անցնող ճանապարհների եզերքին: Բերդի արևմտյան կողմից, քերելով նրա ժայռոտ կողերը, արագակոս անցնում է Կապաս գետը, իսկ արևելյան կողմից, նույն հեռավորությամբ, անցնում է Կուս կամ Բոզրկան գետը: Բերդը կառուցված է մի բարձրացող բլուրի շուրջը, որի զագարը մնում է բերդից բարձր, իսկ բերդը մի գոտու պես փարաբէկ է նրա շուրջը՝ պահելով Երանկյունի ձևը:

Բերդի Երկարությունը հյուսիսից հարավ մոտավորապես 300 քայլ է, իսկ լայնությունը հյուսիսային մասում անցնող ճանապարհի կողմը՝ 100 քայլ, որի պարիսպը, դեպի Երկու գետերի միացնան կետը հետզհետեւ նեղանալով, կազմում է մի սուր անկյան զագար ուղղված հարավ, գետերի միացնան կետին: Բերդի պատերի բարձրությունը հասնում է 50 քայլի: Բերդը կառուցված է կարմիր և այլ գույնի քարերից, որոնք ունեն 1-3 մետր երկարություն և մեկ մետր լայնություն: Յիմքը, ամբողջ բերդի Երկարությամբ, միակտոր ժայռ է դեպի Կապաս և դեպի Կուս գետերը: Կառուցվածքը քարակիր է, կամարներով ծածկված, որը քանդվել է, միայն որոշ տեղեր են մնացել կանգուն: Դոան Երկարությունը մոտ երկու մետր է սայլ ներս մտնելու չափ: Բերդի ներսում խոր քարանձավ կա, որի մուտքի մեջ կա նաև Երկրորդ մուտք: Այն ախոռի տեղ է ծառայել և քարի մսուրները իրար միացած և Երկար սեպերով ամրացված: Բերդի արտաքին երեսի քարերը քանդել, տարել են տուն շինել: Խշմանի տղաթելին այդ քարերը ջրիներով կրել տարել է բերդից մի ժամ հեռու գտնվող խոժոնծվանք գյուղը և Երեք հարկանի տուն կառուցել իր համար: Այդ տան յուրաքանչյուր հարկը քաղկացած է Երկուական սենյակից: Բերդի ներսում երկու խողովակներով ջուր է եկել: Ոմանք կարծում են, որ այդ ջուրը ԲՎի գյուղի մոտիկ սարից է բերված և ստորերկրյա ճանապարհն անցնելով բերդի արևմտյան կողքից հոսող Կապաս գետի տակով, քարձրացվել է բերդի մեջ, իսկ ոմանք կարծում են, թե Ծովասարի ստորոտից է բերված: Բերդի մեջ քարե սյուն չկա, բայց պատերի մեջ արտաքին երեսում սյունածե քարեր կան որոշ հեռավորության վրա և ոչ թե հենվում են տակի քարին, այլ մտնում են նրա մեջ պահելով պատի շարքերի հավասար մակերեսը: Բերդին ականատես և պատմող Ախոն Տոնոյանը⁵, ըստ Սասունում պատմվող ավանդության, ասում էր ոչ թե սյուն սյունի վրա դրվելուց է բերդը Սասուն կոչվել, այլ կառուցման ժամանակ, երբ ծան-

րությունից քարաշեն կտուրը կրել է, Դավիթն ինքն է սյուն դարձել, որ չքանդվի և ուղղել է: Սասուն բերդի սյունը Դավիթն է եղել:

Բերդից 300 քայլ հեռավորության վրա, դեպի հարավ և արևելք ջրաղացներ կան: Դուրսոյի Ավետիսի ջրաղացի տակի քարը, ըստ Թամոյի («Սասունի Դավիթ» էպոսի մի) տարբերակը պատմողն է Թամոն Դավիթ ծեռքով է դրված, անմաշ է, միայն վրայի քարն է շուտ-շուտ փոխվում, որովհետև չի դիմանում տակի քարին, որ քայլայում է իր վրայի մյուս քարերը: Դա ճախրկանքի հայտնի պատմական ջրաղացն է: Բերդի մի մասը քանդող Խշմանի Թելոն մինչև 1916թ. ողջ էր և նույն Խոճոծվանք գյուղում այդ քարերով կառուցված իր տաճն էր մնում, որին տեսնելու հին գնացել Փեթարա Մանուկը, բերդի նկարագրող Ախոն Տոնոյանը և Սպղանք գյուղացի Կամեի Ակեն, 1916 թվականին, երբ ոռւսական բանակը մտել էր Մուշ: Շնորհիվ Խշմանե Թելոյի, 100-150 հայեր գերությունից ազատվում են և գալիս միանում ոռւսական բանակին: Բերդի մոտ գտնվող Խոճոծվանք գյուղից չորս տնտեսություն ազատվել են, գտնվում են Թալինի շրջանի Վ. Դարախոյնազ և Աշտարակի շրջանի Մաղդա գյուղերում:

Ամբողջ սասունցի քրդերը «Բերդի Դավիթ» (Դավիթ բերդ) են անվանում այդ բերդը:

Բերդն անառիկ տեղում է շինված, սակայն ցածրադիր Քաղքիկ գյուղի մի բարձունքի վրա, որտեղից Սասունի լեռներն ել՝ Անորկ, Կեփին, Սարարուկ և նույնիսկ Ծովասարը, որի հարավային փեշումն է կառուցված այդ բերդը, չեն երևում, պետք է դեպի հյուսիս 2-3 կմ քարձրանալ Ծովասարի փեշի վրա, որտեղից Սասունի բոլոր լեռները երևում են:

Բերդի մյուս ականատեսը՝ Սասունի Սպղանք գյուղացի Մելքոն Սկրտչյանը, որ ապրում է Աշտարակի շրջանի Մաղդա գյուղում, պատմում է, թե այն ժայռաբլուրը, որի վրա կառուցված է Սասունի բերդը, ունի մեկ կիլոմետր երկարությամբ ժայռեր Կապաս և Կուս գետերի եզերքներով և հյուսիսային կողմից անցնող ճանապարհի վրա մոտ 500 մ երկարություն: ճանապարհի եզերքից բերդի հյուսիսային եզերքի վրա կա մեծ քարերով կառուցված քառասուն ոտք աստիճան, որոնց ամեն մի քարը 2-3 մետր երկարությամբ, 1-1,5 մետր լայնությամբ և կես մետր հաստությամբ քարեր են: Բերդի արտաքին ճակատով քարձրանում է այդ քարեր աստիճանը մինչև բերդի պարսպի այն մասը, որից սկսում է բերդից դուրս կամարից վեր քարձրանալ բլուրը: Մի աստիճանից մյուսը սովորական քայլով հնարավոր չէ քարձրանալ, այլ լայն քացված քայլերով: Մելքոն Սկրտչյանը 1915-1916 թթ. բերդին կից Քաղքիկ գյուղի քրդերի հո-

վիվն է եղել և պատճում է, որ ոչխարները աշնան ժամանակ, երբ կանաչը պակաս է, տաճում էին երբեմն Բերդ, որի աստիճաններով ոչխարները բարձրանում էին բերդի գագաթ կազմող բլրի վրա, արածում և նույն ճանապարհով ետ գալիս: Այլ ճանապարհ չկա բերդի կտուրը բարձրանալու և իջնելու համար: Բերդի միջից դուրս ցցվող բլուրի վրա ծառեր չկան, տեղ-տեղ կանաչություն և տեղ-տեղ ավագահողով է «սոխճոտ» (նար ավազ) ծածկված: Բերդի լայն պարսպի վրա բլրի այդ գագաթի շուրջը, քար ու կրից շինված խցիկներ են եղել, իրարից որոշ հեռավորության վրա, որոնք այժմ քանդված են, միայն կիսաքանդ տեղերն են երևում:

Բացի բերդի հիմնական դրոնց, դրոներ կան և քարասանդուղքի վերջանալու մասում բերդի պարսպի վերնամասում: Բերդի Կուսգետի արևելյան կողմում հնուց ի վեր կա մի ջրաղաց, որի առաջ գտնվող հրապարակում կատարվում էին դատ ու դատաստան, որտեղ դատողն ու դատվողները իրենց հետ բերում էին ավետարան, դուրս և «բառուատ» (այլ կրոնագրքեր), անհրաժեշտության դեպքում երդումներ կատարել տալու համար:

Սասունի բերդի նկարագրությունը տվող 3-րդ պատմողը Գենջը Պետրոսի Գրիգորյանը պատճում է, թե բերդի բարձրությունն այնքան էր, որ ծեռքով ուժեղ քար նետողը հազիվ կարող էր պարսպի գագաթին քար հասցնել, իսկ չախմախլու հրացանի գնդակը, եթե արձակվեր Կապաս և Կուս գետերի միացման կետից, հազիվ հասներ բերդի միջից բարձրացող բլուրի գագաթը: Ուխտի եկող քրդերն իրենց գենքի ուժն էին փորձում բերդի գագաթին գնդակ հասցնելու փորձեր կատարելով չախմախլու հրացաններով: Միայն երկու քրդերի Բողոքանի Չելեպի Խասըծի և Ֆլիթ Սիսոյի չախմախլու հրացանների գնդակներն էին հասնում թիրախին: Բերդի պարսպի հաստությունը ըստ Գենջոյի, կինի չորս մետր: Դուն մոտի պատի հաստությունը չի չափվում, բնական ժայռից է: Բերդի ամեն մի շարի վրա, պարսպի ճակատներում հինգ սյունածե քարեր կան: Ամեն մի շարի վրա նույն սյունածե քարերը 6-ական հատ կան մինչև պարսպի վերջին վերին շարը: Այդ հինգական սյունաշարերը մտնում են ետ իրենց խարսխի և գագաթի շարերի մեջ, հաջորդաբար և վարից վեր, անհայտ խորությամբ, որով շարերի սյունաքարերը և վարից, և վերից իրար մեջ մտած են իրենց խարհսխներով և գագաթներով: Դավանաբար, այս կառուցվածքից է ժողովրդական այն ավանդությունը, որ ասում է, «Սյուն-սյունի վրա կոչվեց Սասուն», թեև Սասուն անունը, ինչպես մենք տեսանք, եղել է: Ուրարտական շրջանից է «Սասուն» բերդը հիշված է Ասորեստանի Թիգլատ-Պալասարի Ուրարտական Սարդուր 2-ի քազավորության ժամանակ բնեօագիր

պատմական հուշարձանի մեջ: Բերդի երկարությամբ և ամբողջ բերդին հիմք ծառայող միակտոր ժայռը փորվել է և իրենց հենց պարիսպ-հիմք դարձել որպես պարիսպ, միակտոր պատ, բարձրանում բերդի բարձրության քառորդի չափով: Քարե աստիճանները, ըստ Գենջոյի⁷, սկսում են բերդի հյուսիս-արևելյան անկյունի կողքից և ապառաժ քարերից են բաղկացած այդ աստիճանները մինչև պարսպի վերին մասը, ուր սկսում է կանաչապատ բլուրը, որ բերդի միջից վեր է բարձրանում: Պարսպի կտորի վրա կառուցված են 30 խուց ապաստարաններ կոիվների ժամանակ պաշտպանական նպատակով օգտագործելու համար:

Բերդի ներսի սենյակների թիվը հայտնի չէ քանդված լինելու պատճառով: Ներս մտնողները սենյակների և խոր քարանձավի լաբիրինտոսում ճանապարհ գտնելու, խորանալու և վերադառնալու համար իրենց հետ մեծ քանակությամբ մոռ են վերցնում, երբեմն երկար թելեր, ամրացնում դռանը և հետները տանում, երբեմն դարման փոռում գնացած ճանապարհին՝ դրա հետքով վերադառնալու համար որպես ուղեցույց:

Սենյակների դոները քարե են եղել և կան, որոնք այնպես են դրված, որ հեշտությամբ քացվում և գոցվում են իրենց քարե հենակետերի (բոշրակների) վրա: Քարե դոների հաստությունը 20-30 սմ կլինի: Ներսի քարե դոների բարձրությունը մարդու հասակի չափ են: Դոների շրջանակները մեկական քարից են:

Բերդի ներսում եկեղեցու տեղ չկա, հետագայում դոների վրա նկարված խաչեր կան: Բերդի արտաքին պատերի քարերի գույները տարբեր են՝ կարմիր, սև, գորշ և այլն:

Գենջ Գրիգորյանը Սասունի բերդի «Դիշատակարան»-ի մասին պատմում է հետևյալը. Դավրի բերդի «Դիշատակարան» մի թիզ լայնությամբ և 10-12 մետր երկարությամբ մի թուղթ էր (հավանաբար մագաղաթ), որը մոմած շորի մեջ էր փաթաթված, դրված մի փոքր սննդուկի մեջ ու նորից մոմած, զնոսած էր և դարձյալ դրված մի ուրիշ ավելի մեծ սննդուկի մեջ»: Գենջոն և իր եղբայրը Դակորը, միասին այդ «Դիշատակարանը» 1915 թվականի կոտորածի սկզբին պահել են Կապաս գետի ափին մի բարձր ժայռի մեջ շինված գաղտնի սենյակում, որի դուռը քացվում էր Կապաս գետի ջրի հատակում, կլոր մի նեղ դուռ, շրջանաձև կափարիչով, որտեղից մտել է Գենջոն, հիշատակարանը դրել այդ գաղտնի սենյակում և դուրս գալով քարե շրջանակած դուռը ծածել: Այդ դուռը բաց անելիս ջուրը թափվում է ներս և հատուկ անցքով, մի քանի մետր ցած, ելի նույն գետի եզերքում թափվում գետի մեջ, իսկ դեպի ժայռը բարձրացող անցքն այդ նույն քունելած տեղից է քացվում, և որովհետև գաղտնարանը

բարձր տեղումն է ջուր կամ խոնավություն այնտեղ չի հասնում: Այդ գաղտնարանի տեղը թեև Գենջոն չեր ուզում ասել, բայց նկատի ունենալով այն, որ կարող է իր մահով այդ տեղն էլ անհայտ մնալ, նա միայն նկարագրեց հետևյալը, որ այդ քարը գտնվում է Կապաս գետի եզերքին «Սուլրադի քար» կոչված ժայռի մեջ, ծորի եզերքին: Դիշատակարանը, որ պապից պապ եկել հասել է այդ երկու եղբայրներին Գենջոյին և Դակորին, որոնք իբրև միակ վստահելի վայր հանձնել են բերդին մոտիկ Սարեկան գյուղի «Սուլրադի քարին»:

Դավրի բերդից դեպի հյուսիս, ինչպես վկայում է Մկրոն, անցնող ճամփի վերևը, Ծովասարի կողմը տեսել է Դավրի բերդի բնակիչների քացված գերեզմանաքարերը: Միակտոր քարից շինված դագաղներ կային մի քանի հատ, որոնց փափախները (կափարիչները) թիվը ծածկում էին դագաղները: Դագաղների երկարությունը 2, 5-3 մետր կային: Կափարիչները սեղմ էին ու փակված, սեղմված դագաղներին: Մեկ-երկու քարե դագաղները բաց էին, բայց մեջները ոչինչ չկար, բացի հողից: Այդ քարե գերեզմաններն ու դագաղները հեղեղն եր բաց արել:⁸

ԴԱՎԹԻ ԴԱԼԵՊԻ ԲԵՐԴԸ

Դավրի մյուս բերդը⁹ Դալեպի Ուրբար Բազարի կենտրոնում է, հարք տեղ, բերդը կառուցված է մի բլրի վրա, որի չորս կողմը փոս է փորված՝ 25-30 մ խորությամբ, որի մեջ ժամանակին, վտանգի դեպքում ջուր են լցուել, արհեստական ջրի օղակ ստեղծելու բերդի շուրջը: Այդ ավագանի միայն մի կողմի վրա կամուրջ է կապած: Ավագանի կողմը 45-60 մետր մի բարձրության վրա է շինված բերդը: Ավագանի բերդից հակառակ կողմը 20 մ խորության վրա պարիսպ է, որ դեպի ջուրը մարդիկ չանցնեն: Բերդ տանող կամուրջը, ջրի օղակի վրա, ունի 25-30 մետր երկարություն: Բերդի մոտ կամուրջը ունի երկար դարպաս, ուր պահակներն էին կանգնում, (Բերդի վայրն իբր գորանոց էր օգտագործվում): Բերդի վրա բարձրանալիս ամբողջ Դալեպի շրջակայքը ցած էր երևում: Կամրջի վրայի դուռը Ուրբար Բազարի կողմն է նայում: Ուրիշ դուռ չունի: Բերդի պատերը, հիմքերը, ապառաժ քար են: Բերդի մեջ 2-2.500 գործ կարող է տեղավորվել:

Դալեպի ոչ միայն հայ, այլև ամբողջ արար բնակչությունը «Դավրի Կալա» են անվանում այդ բերդը:

Դավրի բերդից 1-1,5 կմ հեռավորության վրա «Բարընթար»

կոչված տեղում, մի դարգահից կախված է «Դավթի գուրզը»: Այդ գուրզը մի գունդ է, որի մեծությունը մի կլոր ամանի ծևով և երկու դույլ ծավալի է հավասար: Գուրզի պոչը մի մետրի չափ է: Գուրզը պոշից (կոթից) կախված է դարբասի կամարի ներսի կողմից: Գուրզը հղկված է, գնդաձեւ: Թե՛ հայ, թե արար ժողովուրդները նրան ասում են «Դավթի գուրզ»: Ոչ ոքի չի թույլատրվում գուրզն իր տեղից իջեցնել: Բարենթաքը մի խան ունի, ուր հացահատիկի վաճառականներն են գործում:

Դալեպից արևմուտք, մի օրվա ճամփահ հեռու, «Լայլունա» սարի վրա կա իին մի շենք, որ բերդ է և պատերը միակտուր քարերից են բաղկացած, անկյուններն ատամնաձև իրար անցկացված: Այդ շենքի մասին նույնպես ասում են «Լայլունա սարի Դավթի բերդ»: Այդ շենքն ամայի է: ճամուն (Դալեպի արևմտյան կողմ) և Բասունում շինված բերդերն ել Դավթի անունով են կոչվում: ճամի բերդը նույնպես մեծ ջրի օղակով պատած է եղել, իսկ Բասունի բերդը փոքր:

Բուն Սասունի մյուս գյուղերից **Աղբիկը** 102 տուն և գտնվում է Ծովասարի արևմտյան փեշին, անտառապատ մի վայրի ծորակում: Նրա բաղերն են, որպես առանձին գյուղեր Խադանը 20 տուն, **Գալառաշը** (Սև ձոր) 11 տուն, **Թխիկը** 4 տուն: Խադանը գտնվում է Աղբիկի արևմտյան մասում Կանիա Բահջիի աջ, իսկ Աղբիկը՝ ծախ ափին, ինչպես Թխիկն ու Գալառաշը: Աղբիկցիները Սասունի ապստամբությունների ժամանակ աչքի ընկնող դիմադրություն են ցույց տվել:

Եթինը- 48 տուն, Սասուն բերդի արևմտյան մասում, անտառապատ մի բլրի լանջին, Կանիա Բահջի գետի ծախ ափից 1-2 ժամ հեռավորության վրա:

Քաղքիկ- 22 տուն, որից երկուսը հայ և 20-ը քուրդ: Այդ գյուղը կից է Սասունի բերդին Կուս գետի ծախ ափին:

Կապասգետ- 20 տուն (քրդեր), համանուն գետի աջ ափին բերդի արևմտյան մասում:

ճախրկանը- 7 տուն հայեր, «Սասունցի Դավթը» եպոսի մի լրիվ տարբերակը պատմող թամոյի գյուղը: Այստեղ է, ըստ ավանդության, Դավթի ջրաղացը:

Խոժոծվանը- 15 տուն, 6-ը հայ, 9-ը քուրդ: Ունի շենք և կամարակապ մի վանք, որի համար գյուղն էլ խոժոծվանք կամ Խողողվանք է կոչվում:

Յարկուոք- 10 տուն, հայ-քուրդ խառն: Յայտնի քուրդ թեկ Բշարի խալիլի գյուղը: Բշարի խալիլն այրում է Տալվորիկի Սպղանք գյուղի բնակիչներին նույն գյուղի Սարապու վանքի մեջ: Սերոք Աղ-

բյուրի սպանողն էր այդ Բշարե խալիլը, և ինքն էլ սպանվել է Անդրանիկի կողմից: Յարկուոք և Արդիկը Կանիա Բահջի ջրի ծախ ափին են գտնվում:

Արգիկ- 15 տուն, Յարկուոքից հարավ 1-2 կմ հեռավորության վրա:

Սարեկան- 6 տուն հայ, Քաղքիկին կից, շատ մոտիկ: Բուն Սասունի բոլոր գյուղերը Ծեկոյի տուն կոչվող աշխրաթության խաֆիրության էին պատկանում անցյալում, մինչև 1894 թ. սասունցիները չեն ենթարկվում նրանց:

2. **Ծատախ**- (Սասունի) Ծատախի սահմաններն են հյուսիսից Սիմն կամ Կուտուզկ լեռնաշղթան, որ Սասունի այդ գավառը տվյալ սահմանում բաժանում է Մշո դաշտի արևելյան մասից Ծիրնկատարի, Կուրտուզի և Զայնիկի գագաթների մեջ ընկած մասով: Արևելքից Խութ-Բոնաշեն, հարավից՝ Ծովասարի փեշերը և արևմուտքից բուն Սասունի Ծենիկ-Սեմալի փոքրիկ դաշտավայրը: Ծատախը մի փոքրիկ նեղ դաշտավայր է կազմում սեղմակած Կուրտուզի և Ծովասար լեռների փեշերի մեջ, որից հոսում է Սուսանա գետը, որին ծախ ափից միանում է Անթանիու ջուրը: Ծատախի կենտրոնական գյուղն է **Տափօքը**, ուր նստում էր մյուղուրը և կառավարում Ծատախի բուն Սասունի գյուղերի մեծ մասը: Ունի 43 տուն, հայ և քուրդ խառը: **Ծուշնամերկ**- 30 տուն հայ-Սուսանա գետի (Անթանիա Վտակի) աջ ափին, Անթանիա հոչակավոր վանքի արևելյան կողմը, Կուրտուզի ստորոտում: **Քոփ**, 27 տուն հայ, **Գերմավ** կամ Ավգերմ (Տաք ջուրգերմուկ) 49 տուն, Ծատախի արևելյան ծայրի գյուղը:

Զեյնըկցիք- 25 տուն հայ: Ծատախի, ինչպես և Սասունի ամենահյուսային գյուղը, Ծիրնկատարին մոտիկ:

Իրիցանը- 17 տուն, որից 4-ը քրդեր են: Իրիցանքի դիմացը, Սուսանա գետի ծախ ափին, Ծովասարի հյուսիսային ստորոտում կա Սր. Աստվածածին մեծ վանքի ավերակը, որը շատախցիների համար, Անթանիայից հետո նշանավոր ուխտատեղի է:

«Ծատախ կոչեցաւ գաւառս յանուան Ծատախսիկ իշխանին, որոյ թելաղորութեամբն գողացան զԾիծառնեյ խաչն ի վանաց սրբոյ Կարապետի և բերին այսր»:¹⁰

Դա ապացուցում է այն միտքը, որ Ծիծեռնակի վանքը Զիզառնու ծորի եզերին իրապես գյուղուն է ունեցել:

Ոմանց կարծիքով, Ծիծառնի խաչը Անթանիայի վանքումն է պահվել, բայց հավանականը Զիզառնու ծորինն է, որ հեռու է Անթանիայից 2-3 ժամով դեպի արևմուտք:

ՍՈՒՍԱ (Զուգա) ԲԵՐԴԸ

Ըստ Խորենացու պատմության 23-րդ գլուխի հավելվածի, Սկայորդին եղել է Ասորեստանի Սենեքերիմ և Ասարհաղդոն թագավորների ժամանակակիցը և ըստ պրոֆ. Բ.Բ. Պիհատրովսկու, Ուրարտական Ռուսա թագավորի (Արգիշտիի որորու)՝ Կարմիր Բլուրի բերդը կառուցողի ժամանակակիցը:¹¹

Այստեղից պարզ հետևեցնում ենք, որ Սանասարն ու Աղրամելիքը, նույն Սենեքերիմի որդիները, այդ նույն ժամանակում բնակություն են հաստատում Սասունում Սասու բերդում:

Սկայորդու որդի Պարույրը, ըստ Պիհատրովսկու, Արմինա Երկրի իշխանն էր և այդ Երկիրը Արմինան, գտնվում էր հենց Ասորեստանի սահմանների մոտ, նրա անունն առանց դժվարության ու բնականաբար կապվում է իին պարսկական Արմինա տերմինի հետ, իսկ նրա գլխավոր քաղաքը այն քաղաքի Նիխեր, Նիփրկերտ անվան հետ, որի տեղում շինվեց Տիգրանակերտը: Այսպիսով, Պարույրը, ինչպես ենթադրում եմ ես, այն Երկրի իշխանն էր, որը հայկական հնագույն թագավորության իհմնական միջուկն էր կազմում:¹²

Արմե (Արմինի) Երկիրը, դարձյալ ըստ Պիհատրովսկու, գտնվում էր Տախսկին Վանի թագավորության հարավ-արևմտյան մասում, հետևաբար նրա մեջ մտնում էր Սասունը:

Ըստ Բ.Բ. Պիհատրովսկու թևեռագիր արձանագրությունների հիշատակություններից հանած Եզրակացության, «... հայկական թագավորության սկզբնական կորիզը եղել է այն շրջանում, որտեղ Տիգրան Մեծը կառուցել է իր մայրաքաղաքը...»:¹³

Մի ուրիշ տեղ նույն աշխատության մեջ գրված է.

«Արմենի Երկրի գլխավորած Երկրների միությունը Երկար գոյություն չունեցավ: Նրա տարածքն անցնում էր մեկ պետությունից մյուսին. Բարելոնի Մեղիային, Մեղիայից Պարսկաստանին...» և այլն:¹⁴

Անտարակույս, «Դայկական թագավորության սկզբնական կորիզը» կազմող Արմենիան Նիփրկերտը (Տիգրանակերտ, Ֆարխին) և նրան կից հյուսիսում գտնվող Սասունը 6-րդ դարում մեր թվարկությունից առաջ ենթարկվել է Ասորեստանի, Մեղիայի և Աքենենյան թագավորների հարձակմանը, ինչպես թագմարիվ թևեռագիր արձանագրություններ այդ հաստատում են, Ընդուրս և Բիիհսրունի հայտնի արձանագրությունը, ուր նշված են Դարեհ Ա. Վշտասպյանի հարձակումները (522-519 թթ. մ.թ.ա.) իր հայ գորավար Դադարշի գլխավորությամբ:

Պատմական այս բոլոր տվյալները մեր կարծիքով հաստատում են, որ Արմենիայի Զուղա բերդը, որ հիշվում է Դարեհի այդ արձանագ-

րության մեջ, այժմու Սասունի շրջանի Զուղա (Նա) Սուսանա գետի ափին, Ծովասարի հյուսիսային ստորոտում, Սասունի Տափզ գյուղի մոտի պատճական հին և ավերակ Սուսանց (Զուղանց) բերդն է:

Մեր տեղագրական ուսումնասիրությունները կատարված Սուսանց (Զուղա) կամ Սուսանաց կոչվող մեծ բերդին մոտիկ գտնվող Տափզկցի. Գերմազցի և Իրիցանքցի սասունցիների մոտ և նրանց պատմածները նույնությամբ էլ ստորև շարադրում են: Այդ տվյալներն ինձ բերել են այն համոզման, որ Զուղա, Տիգրա, Ուիյամա, Առտիյար չորս բերդերը որ իիշվում են Բիիհսրունի արձանագրության մեջ, որպես Արմենիայի ամուլ բերդեր գտնվում են Սասունից Միաֆարկին- (Տիգրանակերտ այժմ Ֆարխին) ընկած տարածության բուն Արմենիայի մեջ, զատ որում, առաջին Երկուսը Զուղան և Տիգրա(ն) բուն Սասունում, Զուղան Սուսան գետի եզերքին, իսկ Տիգրան Տիգրա (Տիգրիս) գետի եզերքին, որոնց ակունքները գտնվում են Սասունում Անդոկ և Ծովասար լեռների ստորոտներում:

Սասունի Ծովասար լեռան հյուսիսային փեշերի վրա և Կուրտըկ (Սիմ) Ծիրնկատար-Կոնգի գոլ-կոչված լեռների միջև, արևելքից-արևմտք տարածվում է Սասունի Շատախը:¹⁵

Շատախի այդ հովիտը սկսվում է Խութի սահմանի վրայի Ծահրբանք կոչվող գյուղի անտառներից և շարունակվում մինչև Սասունի Սեմալ գյուղի սահմանը: Շատախի հովտի կեսից մի քիչ դեպի Ծովասարը, հոսում է Սուսա(նա) գետը, որ բխում է հովտի արևելյան մասի Ծովասարի փեշերից և գնում խառնվում է Տիգրիս (Տիգրա) գետի ամենից վերին ակունքի ջրին, որ Գելիեզուզանի կամ Կանի Բահշիի (Պայթող աղբյուր) ջրու է կոչվում:

Սուսա(նա) գետի ակունքին մոտիկ, գետի աջ կողմում գտնվում է Գարմավ (Ձերմուկ) գյուղը, որից 3 կմ դեպի արևմուտք, գետի աջ ափին գտնվում է Թոփ գյուղը, նույնքան էլ դեպի արևմուտք գտնվում է Իրիցանք գյուղը, որից հետո Շատախ կամ Տափզ գյուղը մեկ կմ հեռավորության վրա: Տափզկցի մեկ կմ դեպի արևմուտք գտնվում է Զգվի (Զուղայի) քարը, որ գտնվում է Սուսանա գետի և իր աջ վտակի Անթանիա ջրի միացման տեղը: Տափզկցի և Զուղայի (Զգվի) քարից 1.5 կմ հեռու, Անթանիա վտակի աջ ափին, գտնվում է Ծուշնամերկ (Զուղա-նա մերկ) գյուղը, իսկ Անթանիա վտակի ծախ կողմում Գեղաշեն գյուղը:

Իրիցանք գյուղի դիմաց, Ծովասարի կողմը, Սուսանաց (Զուղանց) արտերի վերջավորության վրա, մոտ 200 մ դեպի Ծովասարի լանջը գտնվում է Սուսանաց բերդը անտառուտ մի վայրում, լեռնային մի բլրի վրա: Բերդի քարերի մեծությունը մինչ Երկու մարդաբոյ Երկարությամբ և նրա կեսի չափ լայնությամբ լեռ քարից և մոխրագույն:

Կանգուն մնացած բերդի պատերը 1-2 մարդաբոյ բարձր են: Բերդի արտաքինից կլորածն է: Բերդի տեղը կիսահարթ վայր է, արևմտյան կողմը կոչվում է Սուս-նաց Ուող (Սուսա-նաց) լեռնաշերտ, որ բարձրանում է դեպի Եղաքսեր կոչվող վայրը, ուր ճամփան բաժանվում է Երկուսի, մեկը Ծովասարի գագարը, Սանտով ջալ (Փոս) և գնում, իսկ մյուսը դեպի Սասունի նշանավոր Աղբիկ գյուղը:

Սուսա(նց) բերդի արևելյան կողմը անտառածածկ է, ուր գտնվում է Խաչոյի Մզրան (1-2 տուն ունեցող վայր): Բերդից դեպի Ծովասար բարձրանալիս, մոտ կես կմ-ի վրա, գտնվում է Սուսա(նց) կամ Չողկնաց Եկեղեցին մի հարթավայրի վրա կառուցված, որի արևմուտքը շարունակվում է Սուսա(նց) Ուողը, արևելքում մացառներ են, իսկ հարավում դեպի Ծովասար նույնպես մացառապատ է:

Սուսա(նց) կամ Չողկնաց վանքը, որ կրում է Սուսա(նց) անունը, կոչվում է նաև բարձր սուրբ Աստվածածին: Վանքի շենքի քարերը մոխրագույն են ու տաշված, մեծ կամարն իջել է կլորածն, ինչպես Թալիշի Եկեղեցին: Սուսա(նց) վանքի պատերի բարձրությունը չքանոված տեղերում 2-3 մարդաբոյ բարձր է, իսկ քանդված տեղերը գետնի երեսից քիչ բարձր: Վանքի մեջ աղբյուր չկա, իսկ շուրջը բազմաթիվ աղբյուրներ ունի: Վանքի դրան վրայի քարերն իջել են, իսկ կողքերինը կանգուն են:

Սուսա(նց) բերդն ու վանքը Տափեկ գյուղից հարավ, Ծովասարի հյուսիսային ստորոտում են: Տափեկ գյուղից, Սուսանց արտերից անցնող ճամփան, Սասունաց Ուողով բերդի և վանքի բարձրություններն անցնելիս հանդիպում ենք մի տեղ, ուր անտառը վերջանում է, ճացառներն են սկսում մինչև Եղաքսեր 2-3 աղբյուր կամ ճանապարհի վրա: Եղաքսեր չի անառաջ կաղամախ ծառեր կամ 3-4 հեկտար տարածության վրա, ճաճի արևելյան կողմը ծառեր չկան: Կաղամախ անտառից մինչև Եղաքսեր կես կիլոմետր կլինի: Եղաքսերից մի ճամփան տանում է դեպի Գեղդուռ, որ Աղբիկ գյուղի դուռն է (մոտիկ է): Այդ լանջի վրա փխրուն ավագուտ տարածություն կա, որին Յողսորորիկ են ասում, ուր թղթի պես ուկեգույն բերքաբարեր կան և այդ քարերը արևի տակ ուկու վայր են տալիս: Պատմում են, թե ամերիկացի մի քանի ճանապարհորդներ Եկել են Աղբիկ գյուղի այդ ավագարերքաբարդից հավաքել և տարել: Այդ ամերիկացիներն Առաջին Յանաշխարհային պատերազմից առաջ են Եղել Սասունի Աղբիկ գյուղում Սարգիս Մովսիսյանի մոտ և նրան էլ ասել են, որ այդ ավագուտ բերքաբարերը ուսկու հանքեր են: Այդ հանքավայրը Սուսանց բերդից Աղբիկ գնալիս ճամփի վրա է Աղբիկի երեսի կողմը և նրան մոտիկ մի կիլոմետրի վրա:

Սուսա(նց) վանքի յոթն աղջիկներ, ըստ ավանդության, մի խոյ են

մատաղ բերում, որպեսզի յոթն էլ աստղ դառնան և դարձել են, թոն երկինք՝ կազմել «բույլք» յոթնաստղը, որ կա երկնքում:

Մի այլ ավանդություն ասում է, թե Սոսա(նց) բերդի բռնակալ տերն, իր ծառաներին ուղարկում է Տափեկ (Ծովասարի լանջին, Գերմավ գյուղին մոտ մի գյուղ է) և բնակիչներից պահանջում քառասուն խոզ, քառասուն արշումե (մետաքս) շապիկ և քառասուն աման (տապակ) ձվածեղ: Ծառաները գնում են և տապեցիներից պահանջում Սուսա(նց) իշխանի ասածները: Տափեկի հայ բնակիչներն իրենց Սուսան իշխանի ծեռքից ազատվելու համար ծիերը թարս են նալում, անասունները նույնպես ու քոչում են գիշերով: Քոչող տապեցիք ընտանեցրած երկու կաքավ են վերցնում, մեկը փետրում, եփում են, իսկ մյուսը միայն փետրում են, ողջ թողնում, երկուսն էլ դժում են ամանի մեջ և դժում մի տան դրան առաջ: Երկու օր հետո Սուսա(նց) բերդի իշխանը մարդ է ուղարկում և տեսնում, որ գյուղը քոչել, ամայի է դարձել: Որքան փնտրում են, չեն գտնում նրանց զնացած ճամփան ու վայրը ծիերի և անասունների թարս նալած լինելու պատճառով: Երբ մի տան դրան առաջ տեսնում են մի աման (պուտուկ) բերնի վրա շոտ տված, վերցնում են պուտուկը, փետրահան արված, բայց ողջ կաքավը կերպ «բոչում», փախչում է, իսկ եփած կաքավը ամանի մեջ դրած: Վերցնում են այդ ամանը խորովված կաքավի հետ միասին, տանում Սուսա(նց) իշխանին և պատմում եղելությունը: Սուս-նա իշխանը տիսրում է և ասում իր ծառաներին:

«Փետրահան արած և բոչող կաքավն իրենց են ժողովուրդը, իսկ նորբած և խորովվածը են են, որ ինձ բողեցին և գնացին»:

Տափեկ գյուղի ավերակները Գերմավից կես կիլոմետր դեպի արևելք՝ Ծովասարի դաշտումն են: Այդ Տափեկ գյուղին քրդերը Զըլհավունի (քառասուն ձվածեղ) են ասում: Պատմում են, թե Տափեկի (Զըլհավունի) բնակիչների քոչելուց առաջ Սուսա-նա գետը ծով է եղել, որի վրա քաղաք (լաստ) է աշխատել: Սուսա-նա բերդը լճի հարավային ճասում, Ծովասարի լանջին է Եղել, ուր նրա ավերակները մնում են: Իսկ Սուսանա (Չողկնաց կամ Սորադարի) վանքը բերդից ավելի բարձր, Ծովասարի լանջին վրա է, որի կամարների մի մասը 1915 թ. դեռ կար:

Պատմում են նաև, որ Փրա-Կուռոտի կամուրջը կառուցող վարպետը, որ Փրա-Բաթմանի կամուրջը կառուցող վարպետի աշակերտն է Եղել և գերազանցել իր վարպետին, նա է շինել Սուսա-նց վանքը բարձր սուրբ Աստվածածինը:

Փրա-Բաթմանը կառուցող Բաթման վարպետը իր աշակերտ Կուռոտին (որի անունով կամուրջը Փրա-Կուռոտ է կոչվում) քառասուն ջորի է ուղարկել, որ քար ուղարկի: Աշակերտ Կուռոտը միայն մի քար է բար-

ծում մի ջորու վրա և 39 ջորիներ դատարկ հետ ուղարկում իր վարպետ Բաթմանին, ասելով, որ «Թու կամրջին միայն մի քար է պակասում, ուղարկում եմ»: Բարձան վարպետին իրոք միայն մի քար էր պետք: Զարմանում է իր Կուռու աշակերտի իմաստնության վրա, կանչում իր մոտ և նրա աջ թևը կտրում, որ այլև կառուցման աշխատանք չկարողանա անել: Թեսատ վարպետը գալիս է Սուսա, և միթևանի, այն էլ ծախ թևանի, կառուցում է Սուսա-նց վանքը, որ նաև Սորադատի և Չողկանց էլ կոչվում, բարձր սուրբ Աստվածածին անունով:

Այս նույն պատմությունը Սուսա բերդի և Սուսա-նց վանքի մասին պատմեց Սկրո Թաքոսի Պազարյանը՝ Սասունի Իրիցանք գյուղից, 80 տարեկան 1949թ. բնակվում էր Թալինի շրջանի Դիան գյուղում: Սկրոն մյուսների պատմածին ավելացնում էր և այն, որ Սուսանց (Սորադատի կամ Չողկանց) վանքը շինել է հայոց թագավորը, որ Թալիշի վանքի «ժամանելու վանք» է (նույն ժամանակի վանք է): Սուսանց վանքի դիմացից մինչև ժով է եղել: Ծովն առաջացել է Չուզրի փակ լինելուց: Չուզրը Գելինգուզանի Խարճն գոմերի խոր ծորի բերանն է, որ բացվում է Շատախի (Սասունի) դաշտի ստորին մասում, ուր այդ բերանը փակ է եղել, հետո բացվել է, ճեղքվել և Սուսա-նա գետը այդ բերան-անցքով հոսել-միացել է Տիգրիս (Տիգրա) գետին, Գելինգուզանի ջրին: Չուզրը ծակվելուց հետո, հոսել է Սուսանա ժովը թափվել, դատարկվել և տեղը մնացել է համանուն Սուզան (Չուզրանա) գետը, որ այժմ էլ այդպես կոչվում է: Սուսանաց բերդը, - պատմում է Սկրոն, - Սուսանց քաղաքի անունով է Սուսա-նց կոչվել: Չուզրանա բերդին մոտիկ կա մի հսկա քար, որ կոչվում է Չուզրա կամ Չզվի քար, որը ժամանակին փակել էր գետի հոսանքը և ծով էր դարձել ամբողջ Շատախը (Սասունի): Սկրոն պատմեց և Պավիթի բերդի, Սուսա-նա բերդի և վանքի մասին, իսկ ավելի մանրանասն պատմեց Տափլկի Տոնեա:»¹⁵

Սուսանց բերդի դեմ, ավելի բարձր տեղում Կուլեդի անունով մի բերդ էլ կար, որ Ծովասարի հյուսիսային լանջին էր գտնվում: Նրա պատերը բոլորը քանդված էին:

Մեր (Սուսանց բերդն իրենցն է համարում) Սուսանց բերդը մեր սահմանի, մեր պատմական հողի մեջ էր: Թուրք կառավարությունը մի քանի անգամ բերդի վրա պեղուներ արեց, բայց զանձը չեն գտնում: Մենք հայերս էլ գնացել ենք բերդը փորելու, զանձը գտնելու, բայց չենք գտնել: «Սուսանց բերդը իմ հողի մեջն է գտնվում, բերդի ստորոտում իմ արտերն են, հարթ արտեր. ես լուծը էի անում, քաղում էի կորեկի արտը, հանկարծ բերդի մոտ մի քան փայլեց, ինչպես ապակու վրա արև փայլում է, ես գնացի այդ փայլած տեղը ալորի ծառի տակ: Տեղ հասնելիս այլև ոչինչ չտեսա: Տոնեն լսել է ապուապերից, որ Սուսանաց բերդի գանձը յոթը կանքանի պղնձի մեջ է լցված և թաղ-

ված բերդի մոտ, իբր թե ալորի ծառի տակ: Գանձը գտնելու համար եղած պեղումներն անհետանք են մնացել:

Ըստ Տոնեի պատմածի, Սուսա-նց բերդի և Ծովասարի ստորոտի միջից է անցնում Սուսա-նա գետը: Բերդը, այդ հաշվով, գետի աջ ափին է գտնվում, իսկ ըստ ոմանց՝ գետի ծախ ափին: Զ. Բերդը պեղելիս «քըլս ու ջըլս» էր շաղախը, իսկ փորելու ժամանակ «չինի» (հախճապակի) ամանների գեղեցիկ կտորներ էին ելնում: Բերդի քարերը, որոնք քանդվել էին, բափվել էին բլի կողերին, որի վրա կառուցված է բերդը և Սուսանա գետի մեջ: Փորված տեղերում գերեզմաններ կային քարե դագաղով: Բերդի շուրջը մի պտույտ կատարելը մոտ կես ժամ կտևեր: Բերդի ծայրամասը Տափլկի կողմը ժայռոտ էր, իսկ մյուս կողմը գետն է: Բերդի առաջ համանուն Սուսա-նց գետը կազմում է մի լիճ, որի մեջ մեծ ձկներ կային: Թուրք ասկյարները խշլան (զորանոց) կառուցելուց հետո (1905 թ.) գնում էին այդ լիճի մոտ և կեռիկով ու թելով ծովկ էին որսում, մեծ ձկներ: Բերդի շուրջը միայն ուտենու ծառեր կային մինչև 1915 թվականը, ուրիշ տեսակ ծառեր չկային: Բերդի շորս կողմն անառիկ էր, իսկ քիչ հեռավորության վրա իմ Սուսանաց արտերն էին: Բերդից դեպի Ծովասար 3-4 կմ վրա կար վանքը, որի ծածկի կամարը քանդված էր, իսկ պատերը քարե չարդարեն (փեղկերը) մնում էին: Եկեղեցին կոչվում էր Չողկանց բարձր Սուրբ Աստվածածին: Քրդերն այդ Եկեղեցուն ասում էին «Ղերա Սորդարէ» (Կարմրադու վանք): Վանքի արևելյան կողմում կար մի լիճ, որ չէր ցամաքում: Այդ լիճ շրջապատում դամիշ (եղեգն) կար, քաղում էին խաիր (փսխար) շինում:

Այդ Եկեղեցու մեջ Սասունի 1904 թվականի ապստամբության ժամանակ սվազդի Սուրառի գործն էր ապաստանած ու կովկում էր թուրք և քուրդ գործերի դեմ: Քրդերը, սակայն ենթադրելով, որ Եկեղեցում հայերը գույք պահած կլինեն, գնում են, որ թալանեն, հանդիպում են Սուրառին և իր գործին: Բալակցի այդ քրդերի և հայերի միջև կոփկը բորբոքվում է, հայերից երկու, իսկ քրդերից 30 հոգի են սպանվում, մնացած քրդերը փախչում են: Վանքի այդ լիճը դեպի արևելք Գերանավ գյուղի կողմն էր ընկնում: Մյուս կողմը գյուղի ավերակներն էին:

Ավանդաբար պատմում են, ինչպես վկայում էր Տոնեն, որ այդ գյուղացի մի աղջկա տանում են Տափլկ թե Իրցանք հարս: Այդ հարսն ամեն օր նայում, տեսնում է իր հոր տունը, բազմանդամ ընտանիքի անդամների ելումուտը: Մի օր էլ տեսնում է, որ իր հոր տնից ոչ մեկը հրենց դուռը չի բացում, ելումուտ չի լինում: Գնում է հերանց տուն տեսնելու, թե ինչ է պատահել: Գնում տեսնում է, որ բոլորը մեռել են, մնացել է օրորոցի մի երեխա: Տան ցրու բոլորն է նայում և նկատում, որ յուղի կարասի տակին բունավոր մի օձ է սատկած: Նախորդ օրը հերանց

տան հարիսայի յուղն այդ կարասից եր վերցված, որով և բոլորն էլ թունավորվել, մեռել էին:

Տոնեն պատմում էր, որ Սուրբ Աղքերիկից (Խոր, Աև Սար) մինչև իրենց գյուղն ու Կուրտօք (Սիմ) սարի դրանե զիվկրանը (արծարագործների խանութ) վայրը մի քաղաք է եղել, խիտ և կից տներով։ Մաղաշիկ (մայսիսին ծնված փոքր ուլ) «վաշարինելով» (վազգվելով) կտորից-կտուր է անցնում Սուրբ Աղքերիկից մինչև արծարագործների խանութները (դրանե զիվկրան)։

Ար. Աղքերիկից մի վաճահայր հեծած իր մատակ ձին, որ նոր է իր հովատակն ընդունել՝ բեղմնավորվել, այդ վերոհիշյալ քաղաքի տներն օրինելով մինչև հասնում է արծարագործների թաղը, ձին ծնում էր, այսինքն մի տարին հազիկ էր քավարարում, այդ քաղաքի տներն օրինելու համար։ Այնքան մեծ է եղել Սուսանք քաղաքը, որ բերդն է Սուսա-նց (Զուզա-ների) բերդ էր կոչվում։

Սասունի Շենիկ գյուղացի Սան Մանոյանը, որ ականատես է եղել Սուսանա գետի վրա եղած կամար քարաշեն կամուրջներին, պատմում էր, որ քարկապ մի կամուրջը գտնվում էր Սուսանա և Աղքիկից եկող երկու գետերի միացման վայրում, թիզ ներքև, խարծն գոմեր կոչված թաղի տակը, որից հետո Սուսանա գետը միանում է Գելիեգուզանից եկող Տիգրիս գետի վերին հոսանք, Կանիա-Բահջի կամ Գելու ջրի հետ են գնում դեպի Տալվորիկ։ Սուսանա բերդից դեպի արևելք, դեպի Քոփ, դարձյալ Սուսանա գետի վրա մի կամուրջ է եղել, նոյնպես քարաշեն, «քիլս ու ջըլսով» կառուցված։ Սուսանա բերդից դեպի արևելք և արևմուտք եղած այդ կամուրջները, որոնցից միայն գետի աջ և ձախ ափերի անհվաներն ու կամարների մնացուկներն են երևում, բերդ եկող ու գնացող ճամփաների կամուրջներն են եղել։

Սասունի այդ Շատախ կոչված շրջանը բոլորովին կապ չունի Սուկաց նահանգի Շատախ գավառի հետ։ Սասունի Շատախի մասին Ձենոր Գլակն իր «Տարօնոյ պատմութիւն» գրքում հիշատակում է այդ շրջանի տեր Գեորգ Շատախոսի մասին և գրում։

«Իշխանն Արջուց կողմանն, Գեորգ Շատախոս, որ կոչեաց զանուն գաւառին իւրոյ Շատախ, վասն աւելի անվան իւրոյ։»

Դնում այդ գավառն «Արջուց» էին կոչում, այսինքն արջերի երկիր, ինչպես երևում է, բնակիչների քաջությունը կամ մորթե զգեստ կրելը նկատի ունենալով։ Շատկանշական է այն, որ Սասունում անասունների, վայրի, թե ընտանի այծերի, մազոտ և անմշակ մորթիները, որպես ծմբովա հագուստ, մեջքներին էին կապում, և ամենից շատ Սասունի շատախցիներն էին հագնում մորթին երկու թելերով ամրացնելով իրենց ուսերին։

ՏԱԼՎՈՐԻԿ

Տալվորիկը գտնվում է Սասունի կենտրոնական մասում, իր ամենամյայուտ բարձրություններով ու անդոնդախոր ծորերով, որոնց կողմերը, Տալվորիկի արագահոս ջրով (Կանիա Բահջին այստեղ Տալվորիկի ջուր է կոչվում), մաշվել, խորացել են ժայռ-կմախցներ թողմելով ուղղաձիգ կանգնած նրա աջ ու ձախ ափերին, այդ ժայռերի մեջ էլ առաջացնելով քազմարիկ և խոր քարանձավներ, որոնք որպես բնական և աննվաճ բերդեր են հանդիսանում։ Կանիա Բահջին Տալվորիկից իր աջ ափից ընդունում է Զմու ջուրը՝ Դոսոնւտ գյուղի մոտ և Սցուր ջուրը Արտխոնցի մոտ։

Տալվորիկի սահմաններն են հյուսիսում Գարլոր, Ավխարըկ, Սխտորքար և Գոշշեկ լեռնաշարը, որոնք Սասունի ապստամբությունների ժամանակ հիմնական ռազմաբեմ են հանդիսացել և դրանով է Տալվորիկը բաժանվում է Յարմոյի Գոմի ծորով Գելիգեռզանից։

Արևելքում հյուսիսից հարավ հոսում է Տալվորիկի ջուրը՝ Կանիա Բահջի գետը, հարավից և արևմուտքից խիանը։ Խիանը սահմանի արևմտյան մասում կա Մալքոյ գելի և ավելի հյուսիս Սպիտակ սար լոշվող լեռները, որոնք հարմար վայրեր են պաշտպանության համար։ Անդուից և Գելիեգուզանից հետո Սասունի ամենաանառիկ շրջանը Տալվորիկն է։ Իրոք, Տալվորիկի արևելյան ամբողջ սահմանը, սկսած Կանիա Բահջիի և Սուսանա գետի Աղքիկ գյուղի տակ միացնան կետից մինչև Արտխոնց-Ծորախու գյուղերը, պատճեշված է Կանիա Բահջու անանցանելի խոր հովտով և գետով, որի վրա միայն մի կետում հնարավոր է եղել կառուցել Սատանի կամուրջը, որտեղ գետի երկու ափերը համառորեն իրարից շատ չեն հեռացել և հենարան են դարձել այդ կամրջին։ Ոչ մի այլ մասում այդ ծորը, 20-22 կիլոմետրի վրա, ճանապարհ չունի և մի քանի տեղերով միայն բնիկները կալուղ են ժայռից ժայռ նեղ արահետներով անցնել, ուր ձախ ոտնատեղը աջի հետ շփորողը անդունդ կգլորվի։ Ահա ինչու ով տիրել է Սատանի կամրջին, տիրել է Տալվորիկին արևելքից։ Տալվորիկը, համեմատաբար հարավից, Խիանի կողմից, բնական պատվար թիզ ումի և միշտ այնտեղից են եղել հարձակումները Տալվորիկի վրա։

Տալվորիկի կենտրոնական գյուղն է բուն Տալվորիկը կամ Եգուտուն կոչված գյուղը, որն ուներ 35 տուն։ Տալվորիկում քուրդ բնակիչ չկար։ Եգուտունն ուներ Ար. Սարգիս անունով կամարակապ եկեղեցի և տարրական մի դպրոց։ Նրա բաղերն էին Կոտրածը և Երածը։ Եգուտուն գյուղի նշանավոր վայրերն են Աղբերդը, գյուղի մեջտեղը, Դառւիկ գյուղի հարավը, Մարսըմոնկա, դեպի արևելք՝ Յարթը գյու-

ոի կողմը, **Պողոսւտ՝** արևմտյան մասը Յլոդինքի կողմը, **Վերսկուտ՝** դեպի Գաբրոր, հյուսիսային կողմը, **Պաղաթբյուր՝** դեպի հյուսիս-արևելք, Սխտորքար բարձունքի կողմը, **Դանդամուր՝** դարձյալ դեպի Սխտորքար, Երած, Կոտրած, Մրծուց և այլն: Եգու տան դիրքը տափարակ է, մի փոքր դաշտ, պաշտպանված Գաբրոր, Ավխուարձկ, Սխտորքար, Գոջեկ բնական ամրություններով և Տալվորիկի ջուր ձորով:

Եգու տան Սըբեկ Ավեի արտի մեջ 1904 թվականին բուրքական պետությունը գորանոց է կառուցում Տալվորիկի վրա մոտիկից հսկելու նպատակով: Արտխուր Ավեն գալիս է զորքի հրամանատարի մոտ, տեսնում, որ ահազին քարեր են լցուել իր ապրուստի միակ միջոց արտի մեջ և ասում է հրամանատարին «Ըն դարդ են չե. Վըր խշլա կշինեք, ըմ դարդն է. Վըր դուք երթաք ըմ հողուց, ես զադ քարեր իմա՞լ հանըմ ըմ արտուց» (իմ ցավն են չե, որ գորանոց եք շինում, իմ ցավն են է, որ երբ դուք գնաք իմ հողոց այդ քարերն ինչպես հանեմ): Թուրք հրամանատարը զարմանում է Ավեի հանդուզն և ուղղամիտ հարցադրումից:

Արտխունը գյուղն ունի 9 տուն: Դա մի հին քաղաքի ավերակների վայր է: Աղձնիքի Քղիմար քաղաքիտեղը: Յին անունը Քղեմիր, Քղիմար, քրոյերն ասում են Շլեմիր: Ունի 7 եկեղեցի՝ Սր. Մարիամը կամարակապ էր, կամարների մի մասը կար: Սր. Թալըլուկը վտիտ, դալկացած երեխաներին տանելու և բուժելու տեղն էր: Սարտարուսը գյուղի մեջտեղում, Սլոյի հացտան ներքեն էր գտնվում, մեծ ուխտատեղի էր, Սր. Խալօղլանը, ըստ ավանդության, մի աղջկա անունով է կառուցված, որը եղել է հսկա, կոհվների մեջ սպանված: Այդ դրուց ամեն անցնող կանգ էր առնում, գյուղը խոնարհում, նոր անցնում, իսկ եթե ծիավոր էր, պետք է իշներ ծիուց, նույնը կատարեր և անցներ: Սր. Թալըլուկ եկեղեցու ավերակի մոտ կամարակապ տուն կա բերդի նման, որը եղել է քաղաքի պաշտպանության վայր, որի մի մասում քարի վրա անցնենելի գրություն կա, ասում է նույն գյուղացի Յակոր Մովսիսյանը, որ այժմ 97 տարեկան է, առողջ և ապրում է Աշտարակի շրջանի Սասունիկ գյուղում: Յակորն իր պապերից լսել է, որ այդ Արտխունը քաղաքում զարբիսանա (որամ կտրելու տեղ) է եղել, որի մոտ էլ դարբնոց: Այդ դարբնոցը երկարահանքի կողքին էր գտնվում, գյուղի վերև, և այդ երկարահանքը մինչև 1915 թ. էլ Արտխունը դարբինները գործածում էին: Ինը Յակորն էլ այդ երկարահանքի և դարբնոցի մեջ աշխատող է եղել: Նա ականատես է եղել, որ մարդիկ օտար երկրից եկել են պեղումներ արել և շատ «երկի ու ուրիշ մարդեն (մետաղներ) կիանեին տանեին»: Դրանք, այդ մարդիկ կոչվել են Խըլչեք (ընկուգենու կոճդեր գնողներ), որոնք այդ կոճդերի մեջ

նկարներ են գտել փայտի վրա, ինքնանկար: Արտխունքի արտերը հերկելիս թրծված կղմինդրի քարեր էին դուրս գալիս, որոնցով պատեր են քաշել, տներ շինել:

Արտխունը Կանիա Բահջի գետի աջ ափին է, գետի եզերցի տափարակ բարձրության վրա, իսկ նրա մի թաղը գետի ձախ ափին, ճիշտ դիմացը կոչվում է Թորախու, որի վերսկի փոքր գագաթից ջուրը խողովակով, իին ժամանակներում, բերել են գետի ձախ ափից, գետի տակով անցկացրել և աջ ափ անցկացնելով Արտխունը, որի գետեցրին մոտիկ կան նրա հետքերը: Յողի թրծված խողովակների ճանապարհը գետի և աջ, և ձախ ափին ունեն իրենց մնացորդները: Թորախու թաղի կողմը, Տանձուտ կուր (տանձոտ փոս) կոչված տեղում, թաղատեղի են եղել գետի ամբողջ երկարությամբ: Արտխունքից մինչև Կոտրած քար կոչված տեղը, Արտխունքից հյուսիսի, մոտ կես կիլոմետր հեռու, քաղաք է եղել: Այդ տարածության վրա շատ ծառեր կան, անտառ է (մեշա), որ կոչվում է Սըբժիքարախ (ամպի վայր): Կոտրած քարը հսկա մեծությամբ և բարձրությամբ կանգնած մի քար է, որի տակի մասը շրջապատից մեկ մետր բարձրությամբ չորս կողմից կտրված է քաղաքի վրա գլորելու նպատակով: Կտրողները «ասհարեքնը եզր» վայրենի մարդիկ են եղել, սակայն քաղաքի բնակիչները նկատելով այդ, աղետից ազատվելու համար հարձակվել են «Վայրենի»-ների վրա, որոնք փախչել են, սակայն քարի կեսից ավելին կտրված է մոտ մինչև այժմ էլ (1915թ.), որի վրա նայողը սարսափում է, թե հիմա պիտի գլորվի ցած՝ Արտխունը գյուղի վրա: Կոտրած քարին մոտիկ կա Անասու աղբյուր կոչված գուգանը (ամառանոց): Գետի ձախ ափին Բորնջիկ կոչված սարի ուղիղ երկու գագաթների մոտ կա Բորնջիկ կոչված վանքը: Մարաքուկի սարից և վանքից հետո հայտնի են Բորնջիկի սարն ու վանքը, որոնք նույնանա ուխտատեղի են:

Տվալինք- 15 տուն, որի վերջին քահանային տ. Ստեփանին, 1915թ. Խլիովիտ գյուղում սպանել են աշիր քրոյերը: Տվալինքը Արտխունքի դեպի Փուրխ ճանապարհի վրա էր:

Փուրխ - 17 տուն, ուներ մի վանք Սր. Ստեփանոս անունով, որը կառուցվել էր 1818-20 թվականներին, վարպետ Ավետիկի ծեռորով: Կամարակապ է, քահանան էր տեղ Բաղդասարը, որը 1904թ. Սասունի պատերազմին, գենքը ծեռքին, կովի դիրքում էլ սպանվել է:

Փուրխը Տալվորիկի ջրի աջ ափին էր, խոր ձորի շրջանքին, որտեղից իշնում է Սատանի կամուրջ գնացող ճանապարհը: Փուրխն ուներ տարրական դպրոց:

Խլիովիտ - 9 տուն, Փուրխ գյուղի ուղիղ դիմացը, գետի ձախ ափին, մի քարձրության ստորոտում է գտնվում: Այդ գյուղի վրա առավոտ և երեկո արև չի առնում, որովհետև հարավ-արևելյան կողմում

գտնվող մի սարի ժայռերը բարձր և թեք ընկած ստվերում են գյուղը: Կեսօրվա ընթացքում մի քանի ժամ միայն, երբ արևը զենիթում է, նրա ճառագայթներն ընկնում են գյուղի վրա:¹⁷

Սատանի կամուրջը գտնվում է Փուրխ և Խլիովիտ գյուղերի միջից անցնող Տալվորիկի ջրի մակերեսից 40-50 մետր բարձրություն ունեցող, երկու հրար մոտեցող կամարաձև ժայռերի վրա, որոնք այդ կամրջի միակ հենակներն են և արիեստական կառուցմամբ իրար են միացված ամուր կամարակապ մասով՝ Սատանի կամրջով:

«Եստին քար, ենտին քար, վըր կիայնաս վրեն, մարդու սրտի թել կկտրվի» (այս կողմը քար, այն կողմը քար, որ նայես վրան, մարդու սրտի թելը կկտրվի): Սատանի կամրջի վրայից բարձած անասունները կարող են ազատ անցնել առանց սոսկումի, եթե վարժ են: Այդ կամուրջը Սասունի 1894թ. ապստամբության ժամանակ տալվորիկցիներն ինքնապաշտպանության նպատակով քանդել են, հետո Փուրխ գյուղի բնակիչ վարպետ Գասպարն է վերակառուցել բոլոր տալվորիկցիների միասնական աշխատանքով: Ուստա Գասպարը Սասունի թեև անգրագետ, բայց հնուտ ճարտարապետն էր, դպրոցական շենքերի և գեղեցիկ տների տեխնիկը: Կամրջի կառուցման երկրորդ վարպետը Խլիովիտի գյուղացի Շազոյի Դավոն էր: Կամրջի ծախ ափին բնական ժայռ-հենարանը մոտ 10 մետր բարձր է եղել դիմացի աջ ափի՝ նույնապես բնական ժայռից: Վարպետ Գասպարն ու Շազոյի Դավոն այդ կողմի ժայռի վրա, առանց խարազուի (հենակ աստիճանների), քար ու կրով, տասը մետր բարձրությամբ, կամարակապ պատ են դնում, հավասարեցնում ծախ ափի բարձրությանը, ապա աջ և ծախ ափերի հենարան ժայռերի վրա գերաններ գցում և ժեռ քարերից կառուցում են կամար կամուրջը, որի կրաշաղախը ջրով չի արված, այլ Տալվորիկի բոլոր թաղերից կամավոր կերպով մթերված ամենօրյա թարմ կարով: Այդ կամուրջը Սատանի կամուրջ է կոչվել նրա համար, որ և իր տեսքով ու բարձրությամբ, և իր կառուցվածքով սոսկում և պատճառում անցող-դարձողներին: Սատանի կամրջի վրա գրություն կար, սակայն, ըստ Թաթարի¹⁸, Ս. Զավարյանն էլ չկարողացավ կարդալ:

Ֆոնֆըր Քար- Փուրխ գյուղից դեպի հյուսիս գտնվող և երեք կիլոմետր հեռավորություն ունեցող Հոսնուտ գյուղը գնալուց Տալվորիկի ջրի աջ ափով են գնում: Ժայռոտ, անանցանելի մի ճանապարհ է դա: Փուրխ-Հոսնուտ գյուղամիջի այդ ճամփի կեսին, ժայռերից դուրս ցցված 8-10 մետր բարձր միակտոր մի քար է կանգնած, որի տակից մարդ ահով է անցնում: ճանապարհն անցնում է Ֆոնֆըր քարի տակով, մշտապես փչող քամին այդ ժայռին համդիպելիս «Ֆոնֆըր» ծայն է հանում, դրա համար քարն էլ կոչվում է Ֆոնֆըր քար: Տալվորիկի ջրի այդ անդնդախոր ծորի բարձր եգերքի վրայից Ֆոնֆըր Քարից երևում

է Սատանի կամուրջը: Ֆոնֆըր Քարը, իր անառիկ դիրքով պաշտպանության վայր, ուզմական դիրք է հանդիսանում Սատանի կամրջին, որ միակ ճանապարհն է արևելից Տալվորիկ մտնելու համար: Ֆոնֆըր Քարից դեպի ծորը բազմաթիվ ծառեր կան, որոնք աճում են այդ ժայռերի ճեղքերում և մարդ զարմանում է, թե այդ պատուած, գրեթե հողագուրկ ժայռերից ինչպես են սնվում այդ ժամերը:¹⁹ Այդ ճամփով Հոսնուտ գնալիս ճամփորդը չի կատար սիսալի աջ ու ծախ ուսնատեղերը, եթե ոչ անզգուշությանք անդունդ կարող է գլորվել: Անփորձ ճամփորդը միշտ սրտողով է անցնում, մինչև հասնում է Հոսնուտ գյուղը:

Հոսնուտ- Տալվորիկի ջրի մեջ բափվող Զմու ջուր վտակի աջ ափին, գետի եգերքի ժայռերի գագարի վրա, ունի 9 տուն: Դայտնի դարքին և զինագործ Կամեյի Դամզեի գյուղն է և բոլորն էլ մի ընտանիքից սերած: Հոսնուտի տների լուսամուտներից քուվիներ (վայրի այծ) են խփում, որսում ծորի լանջերից և դեպի անդունդից, գլորվող, որը մեծ դժվարություններով են բերում գյուղ, այն էլ ժայռերին սովոր մարդկանց միջոցով միայն: Որսորդությունը այդ գյուղացիների գրաղնունքներից մեկն է: Հոսնուտում եկեղեցի և դպրոց չկար: Սեռելներին Դարթքում էն բաղում:

Դարթք- 20 տուն, եկեղեցի չուներ, բայց դպրոց ուներ:²⁰ Հոսնուտ գյուղի եգերքը լիզելով անցնող Զմու ջուրն անցնելիս մեծ թեքությամբ մի բարձունք է հանդիպում այդ վտակի ծախ ափին: Մի ժամ է տևում Հոսնուտից Դարթք գնալն այդ միակ ճանապարհով: Այդ բարձունքի գլխին տափարակ մի վայրում գտնվում է Դարթք գյուղը: Սասունում անվանի Խաչոյի Գասպարի գյուղ էլ են ասում: Դարթք գյուղից դեպի ծորը, Տալվորիկի ջուրն իջնում են մեծ դժվարությամբ և միայն մարդիկ, անասունները չեն կարող իջնել:

Արծվի բույն- Այդ ծորից Դարթք ուղղաձիգ մի ժայռ կոչվում է Արծվի Բույն: Արծվի Բույնից մինչև հոսող Կանիա Բահցի կամ Տալվորիկի Զուրն եղած ուղղաձիգ բարձրությունը 100-120 մետր կլինի, ամբողջովին պատուած, որի վերին մասի վրա, ուր սկսում է Դարթքի հարթությունը, անտառուտ է, ծառերի երկար ճյուղերը կախվում են դեպի անդունդը: Այդ վերի ծառապատ մասից 10-15 մետր ցածր գետի մակերեսից 80-100 մետր բարձր, մի մեծ քարանձավ կա, ուր թաքնվում էն կառավարության կողմից հետապնդվող Սասունի, հատկապես Տալվորիկի իշխանները: Սակայն Արծվի բույնը ցամաքային ճանապարհ չուներ ոչ մի ուղղությամբ, այնտեղ միայն Արծիվներն են բույն շինում ու ճախրելով անդնդախոր ծորի վրա վերադառնում իրենց բույնը: Դետապնդվող սասունցինները երկար ու ամուր պարաները իրար կապելով և կախ տալով Արծվի բույնի վերևում գտնվող

ծառերից, մեկ -մեկ կախվում էին Արծվի բույնին հասնող պարանից և իջնում այնտեղ, դուրս ցցված մի ժայռի վրա, որ Արծվի Բույնի դուռն ու «պատշգամբն» էր կազմում: Մեկը մյուսի ետևին նույն ձևով իջնում էին Արծվի բույն ու վերջում գյուղացիները քանդում էին պարանը ծառից ու տանում իրենց հետ, մեկ էլ նույն ձևով հաց, ջուր ու այլ անհրաժեշտ բաներ իջեցնում աշխարհից կտրված Արծվի բույնի բնակիչներին, կամ, եթե վտանգն անցնում էր, նույն ազատարար պարանը ծառերին կապում, թողնում Արծվի բնի առաջ նրա մի ժայրը, որից բռնելով բարձրանում էին Սասունի «արծիվները»: 1894 թ. օգոստոսին այդ Արծվի բնում պատսպարված 8-10 սասունցի ղեկավարների տեղն իմանալով, բուրքական կառավարությունը նույն միջոցով պարանով իջեցնում է Շարքը գյուղացիների, որոնք բանակցում են խաչոյի Գասպարի և այլ իշխանների հետ, որ հանձնվեն, իսկ եթե նրանք չեն հանձնվում, բուրքերը թողնում, գնում են, սակայն մի քանի օր հետո խարթողի և Փանճի կողմից լեռնային թնդանորներով գինված գալիս են Տալվորիկի ջրի ձախ ափի վրա, ուղիղ Արծվի բույնի դիմացը և սկսում թնդանորներով ոմբակոծել Արծվի բույնի դուռը, բնակիչներին այդ քարանձավի մեջ ոչնչացնելու նպատակով: Սակայն Արծվի բույնը խոր և ոլորածն քարանձավ է լինում, և թնդանորի գնդակները միայն ժեռ քարերից կտրուներ էին պոկում, անվնաս թողնելով ապաստանածներին: Գետի ձախ ափից քրդերեն և հայերեն լեզուներով բարձրածայն կանչում էին նրանց հանձնելու: Ստիպված այդ իշխանները հանձնվում են, որովհետև ցերեկ թե գիշեր հսկում էին դիմացի ձախ ափից, որ հաց, ջուր և գենք չիջեցնեն Արծվի բույնի բնակիչներին: Չորրորդ գորաբանակի հրամանատար Մյուշեր Զեքի փաշան 1894թ. օգոստոսին Արծվի բույն ապաստանածներին ճերքակալում և ուղարկում է Քիթլիս քաղաք, իսկ ինքը Սուլբան Շամիդից կայսերական նվեր ստանում դրա համար:

Զկնգոլ- Եթե Արծվի բույնը արժիվներին էր ընդունում, ապա նրանից թիւ դեպի հյուսիս՝ Տալվորիկի ջրի ձախ ափին, գետի հոսանքից մի թիւ բարձր գտնվող Զկնգոլը նրանց ձագերին էր ընդունում սասունցի, հատկապես Տալվորիկի ծերերին, կանանց և երեխաներին, որոնք Շարքը գյուղից դեպի ներքին Շարքը կոչված քաղն էին իջնում և մատչելի ճանապարհով, հազարներով գնում ապաստանում այդ քարանձավի մեջ, որի դուռը բնական մի անցք էր և բացվում էր գետի աջ ափի վրա:

Զկնգոլ է կոչվել նրա համար, որ այդ քարանձավի դռնից մինչև գետը եղած տարածության վրա մի աղբյուր է հոսում քարանձավից և քափվում գետը: Այդ աղբյուրի ջրի հետ, քարանձավում եղած մի լճից ձկներ են դուրս գալիս և գնում աղբյուրի ջրի հետ քափվում գետը, և

գետից այդ նույն ջրային ճանապարհով մտնում քարանձավի լճի մեջ: Զկնգոլի քարանձավը նախ սկսում է մի դրոնվ, որից ներս 10-15 մետր խորության վրա բացվում են նոր, բնական, անձև երկու դրոներ աջ և ձախ ուղղություններով, որոնցից երբ մտնում եք՝ խորն են ու մութ, մերթ լայն, մերթ նեղ երկու քարանձավներ, որոնց վերջավորությանը ոչ ոք չի հասել: Դրանց մեջ հազարավոր մաղիկ կարող են տեղավորվել և միշտ տեղավորվել են 1894թ., 1904 և 1915 թթ. կոտորածների ժամանակ նախապես այդտեղ փոխադրելով սննդամբերք և այլ անհրաժեշտ իրեր: Զկնգոլի քարանձավի խորքում վառվող կրակի ծովին է դուրս չի գալիս և նշմարվում, որը նույնպես օգնում է պաշտպանության գործին: Այժմ Աշտարակի և Թալիմի շրջանում գտնվող տալվորիկցիների մեծ մասը Զկնգոլի քարայրումն են պաշտպանվել, որտեղ ոչ մի թշնամի չեր համարձկվում մտնել և 1916թ. ազատվել յանրիկի ոռուական բանակի: Մուշ են եկել, փրկվել ու անցել կովկաս: Արծվի Բույնն ու Զկնգոլը, զարհութելի ոճիրների ժամանակ, ժողովրդի ամուր ապաստաններն են գերեզմաններ, ուր քաղվողները կենդանի մարդիկ էին:

Կտանք- 5 տուն: Զեյթունցի Սուլիհասի հիմնած գյուղը, որից սերում է Տալվորիկի բնակչությունը: Տալվորիկի ամենահին գյուղն է, ունի Սր. Կարապետ անունով մի մեծ եկեղեցի, կամարակապ և շեն, միայն քարից և կրից կառուցված: Պատերը լեռ քարեր էին, սակայն սրբատաշ, դուռը երկարից էր դրսից, ներսի ամուր փայտե դրանը մեծ ուժով մեխերով ամրացված: Եկեղեցու կամարի մեջ զանազան տեղեր 40-50 կարասների բաց բերանները միայն երևում էին ձայնի անդրադարձան համար: Կտանքը եգու տան մի թաղն էր հաշվում: Ի գու տան դպրոցի դասատուն կովկասից էր, ինչպես վկայում էր Թարբարը (93 տարեկան): Դժբախտաբար, այդ ուսուցչի անունը չի հիշում: Կովկասից Տալվորիկ դասատու գնացողը անպայման որոշ նույնական է գնացել, ոչ թե միայն տնտեսականի համար, այն էլ հավլվորիկում, ուր ժայռներից են հաց ստանում հողի սակավության պատճառով:

Հազմանք- 15 տուն Կտանքին մոտիկ, նույն Սր. Կարապետ եկեղեցուն էին աղոթում և նրա շուրջը գտնվող գերեզմանատանը քաղում մեռյալներին:

Յլողինք- 40 տուն հայ, ուներ Սր. Մամաս եկեղեցի, բայց ավերակ, և մի տարրական դպրոց: Յլողինք և եգու տան միջև կար լավ որակի երկարահանք, որ տեղացիք օգտագործում էին անտառից ստացած վատելափայտով հալեցնելով երկարաբարը:

Մազրա- 20 տուն հայ, Տալվորիկի Մազրա կոչված վտակի աջ ափի ակունքների վրա, Յլողինքից հարավ -արևմուտք:

Սպղանք- 25 տուն հայ, ուներ շատ իին մի եկեղեցի կամարակապ և ամուր կառուցվածքով, Մարապպա կամ Մարութա ճգնավոր, ուր 1901թ. բողկանցի հայտնի թեկ Բշարի Խալիլը հավաքում է իրեն Ենթարկվող բնատուրք, կոո և դրամ չվճարող այդ գյուղացիներից 34 հոգի ու լցոնում է եկեղեցու ներս ու զավիթում, ապա արտերից հնձված ցորենի քուկաշ է կրել տալիս, և կրակ տալով քուկաշին, իր գործով հսկում է, որ չփախչեն, մինչև այրվելը, մոխրանալը:²¹

Զմոյի հորինած «Սպղանքն այրվում է» ողբից ահա մի երկտող, որ նա երգում էր քրդերեն.

«Կուլ բջքավա մալա խալիլէ բշար

Զառուա ժըն ու զառ շավըտի կըրա աղ»

և այլն (թարգմ. ցավն ընկնի Խալիլէ Բշարի տունը,
Ինչպես կին ու երեխաներ վառեց, մոխրի դարձրեց):

Բշարի Խալիլն այդ այլող մարդկանց մոխրիներում մնացած ոսկորները հավաքել է տալիս, տոպրակի մեջ լցոնում և իր մարդկանց միջոցով անհայտ վայրում թաղում, իսկ եկեղեցու մեջ մնացած մարդկային մոխրը հավաքել է տալիս, թափում Տալվորիկի ջրի մեջ՝ ոճիռը ծածկելու նպատակով:

Սպղանք գյուղացի Տոնոյի Մակարը, մկրենքցի Գևորգը և Անդրածիկը 1902թ. բռնում են Բշարի Խալիլին Սուլշից Սասուն գնալիս, գլխատում և գլուխն ուղարկում Սպղանք, ուր նա կատարել էր այդ ոճիռը:

Եղարդ- 15 տուն հայ, ուներ կուս Մարիամ անունով մի ավերակ եկեղեցի դեպի Չորեր թաղը գնացող (արևմուտք) ճանապարհի կեսին, որ իբրև լուստուն էր ծառայում: Դպրոց չուներ: Եղարդը Տալվորիկ ջրի կիա ափին, գետի աջ եղեցին էր շինված:

Չորեր- 3 տուն հայ: Տալվորիկ ջրի աջ ափին մի փոքրիկ ծորակի եղերին, ծառապատ մի տեղում:

Ներինք կամ Ետինք- 48 տուն հայ, Սասուն թերդի արևմտյան անտառուտ մի բլրի ստորոտում, Տալվորիկ ջրի ծախ ափին Խոնծոծվանքի հյուսիս-արևելյան մասում, 5-6 կիլոմետր հեռավորության վրա: Ներինքում կար Սր. Մարտանա անունով մի կամարակապ եկեղեցի, դպրոց չկար: Ներինքին էր պատկանում Ավարաս թաղը՝ Տալվորիկ ջրի ծախ ափին:

Խոնծոծվանք- Դայ-քուրդ Խառն, 15 տուն, ունի Խոնծոծվանք անունով մի կամարակապ և շեն վանք, որը գյուղի հետ միասին գտնվում է Տալվորիկ ջրի ծախ ափին, 1-2 կմ թարձրության վրա: Սասունի թերդի արևմտյան մասում, անտառոտ մի լեռան կրծքի վրա:

ԽՈՒԹ ԿԱՄ ԽՈՒՅԹ

Խուրի կամ Խույրի սահմաններն են հյուսիսից Տավրոսյան լեռնաշղթայի այն մասը, որ Ծիրնկատարից դեպի արևելք երկարում է մինչև Սև Սարի արևելյան վերջավորությունը: Տավրոսի շղթայի այդ մասով Խուրը բաժանվում է Մշո դաշտից: Արևելքից Սալնո Չորը Բիթլիսի գետակով, հարավից Սոտկանի մի մասը, Դազզոյի և Խարլջողին սահմանակից, արևմուտքից բուն Սասուն և Շատախին սահմանակից: Խուրը բաժանվում է Երկու մասի, հյուսիս-արևելքում Բոնաշենը, իսկ հարավ-արևմուտքում Խուրը, որի համար և կոչվում է նաև Խուր-Բոնաշեն: Խանի կամ նամի ջուրը Խուր Բոնաշենը նույնպես բաժանում է Երկու մասի ամբողջ Խուրի Երկարությամբ և դեպի հարավ-արևելք հասնելով:

Խուրի գյուղերն են

Ճեն- 28 տուն հայ: Դին քաղաքի տեղ, դպրոց չուներ, ուներ չորս եկեղեցի Սր. Դակոր, Սր. Մարծնետ, Սր. Աստվածածին և Կուլառնա Սր. Զիավորը, բոլորն էլ շեն և կամարակապ, բացի Սր. Դակորից, որ գյուղից ջիշ դուրս էր, մյուս երեքը գյուղի մեջն էին: Կուլառնա Սր. Զիավորի շենքից մի քանի տեղ քանդված, քարերը թափված: Ճենի մոտիկ մի անկյունում ջերմուկ կար, որ գարնանը հիվանդները այնտեղ լողանում և առողջանում էին: Ճենի մոտ, Սարեր կոչված լեռ ժայռի մոտ կար Սր. Աստվածածին վանքը և սարն էլ կոչվում էր Աստվածածին սար: Այդ Աստվածածին վանքը մինչև 1915թ. կոտորածն էլ շեն էր: Գյուղի միջից անցնող գետը կոչվում էր Ճենա գետ, որ գնում թափվում էր Բարձանի ջուրը Փրա Բարձանի հյուսիսային մասում:

Ճենի շուրջն են գտնվում Արփի, Մրցանք, Ածփիկ, Բուկնոտ հայկական բնակավայրերը. Թաղավանք, որ ուներ կամարակապ եկեղեցի և 100 տուն, Վերին և Վարի Ճենիստ 35 տուն, Վերինը՝ 15 տուն, Ազրակ կամ Ազգարակ՝ 15 տուն, Թաղվու կամ Թաղու՝ 25 տուն, Գիլնը՝ 8 տուն, Թաղվնձոր՝ 10 տուն, Սարինգոլի՝ 17 տուն, Շահվերտի՝ 19 տուն, Սվարը՝ 6 տուն, Ջընջորը կամ Ջընջըկծոր, որ ուներ կամարակապ եկեղեցի, բայց քանդված. Օշուտ կամ Ցուշուտ՝ 36 տուն, շեն և կամարակապ եկեղեցի ուներ, Չորովայ՝ 30 տուն, Բլրիկ՝ 10 տուն, Սգրե Շիլը՝ 60 տուն, Ուշբափ՝ 20 տուն, Փերիվանք՝ 1տուն: Այս բոլորը գտնվում են հայկական գյուղերի էին: Քրդարանակ գյուղերն են Սալաբուկ 25 տուն, Բարձնքաղ՝ 40 տուն, Գործըվար՝ 180 տուն, Կոռ(ք)՝ 90 տուն, ուր կա մի կամարակապ եկեղեցու ավերակ, Գլածորի դպրոցի հիմնադիր Ներսես Մշեցու ծննդավայրը: Տափ՝ 250 տուն, Փղոնք կամ Փղոնք 20 տուն, Ռաբաք՝ 50 տուն, ուր նստում էր Խուրի մյուլիրը:²²

Բոնաշենի գյուղերն են՝

Օշակ՝ 25 տուն, Կծանք՝ 20 տուն, Դաշտադեմ՝ 30 տուն, Բլրկան (Բլոկան)՝ 35 տուն, Եզիան (ք) կամ Եզիանք՝ 60 տուն, Շամիած(ք)՝ 30 տուն, Շիրոնզրա, ավերակ է, Արինոք կամ Արենոք՝ 15 տուն, Կոստ՝ 5 տուն, պատմական մի վայր, ուր եղել է յոթը Եկեղեցի, որոնց ավերակները մինչև այժմ ել կմնան կիսականզուն։²³ Ընկուզեք՝ 25 տուն, Մահրաբան(ք)՝ 60 տուն, Արունք՝ 6 տուն, Լորդնձոր՝ 25 տուն, Դաշտամիրան՝ 10 տուն, Կնոտ՝ (Քնոտ)՝ 7 տուն, Կրպնիկ՝ 3 տուն։

Սր. Աղբերիկի (Սր. Աղբյուրիկ) Վանքը-Գտնվում է Սև Սարի հարավ-արևելյան Տառս գագարի փեշի վրա, մի դուրան տեղում, իբր թե Թաղեսոս առաջքան է շինել այդ վանքը։ Դա պատմական Կանդիր վանքն է, պատմական Աղճնիքի Եպիսկոպոսանիստ վանքը, ուր իր կյանքի վերջին տարիներն ապրել է Գրիգոր Մագիստրոսը՝ թողնելով Արարատյան գագարի իր հայրենի Բժնի գյուղը (10-րդ դար) և ապրելով այդ վանքում, որպես վանահայր, գրել է իր հոչակավոր թղթերը, Սասունի Թոռնիկյան իշխանության Թոռնիկ Սամիկոնյանի մասին։ Սր. Աղբերիկը կամ Կանդիր վանքը ժ-ժ դարերում եղել է Սասունի բագավորների դամբարանի վայրը և ամբողջ Սասունի ուխտատեղին թե հայերի և թե սասունցի քրթերի համար։ Առաջին վանահայրն է եղել Արդիշո ասորին, որ Մովսես կարողիկոսից ծեռնադրվել էր Եպիսկոպոս 508 թվականին։ Ս. Աղբերիկ վանքի Երկար դուռը նայում է դեպի Արևելք Բիրլիս, ուր 50 քայլի վրա կա մի մեծ աղբյուր, որի անունով վանքն էլ կոչվել է Ս. Աղբյուրիկ։ Վանքն ունի Երկու գմբեթ, մեկը վեղարաձև, մեծ և կարմիր քարերով կառուցված, իսկ մյուաց գանգակատուն՝ կապույտ քարերով շինված։ Վանքն ամուր պարսպապատ է և ծառայել է միաժամանակ որպես բերդ հարձակումներից պաշտպանվելու համար։ Վանքի մյուս դուռը նայում է դեպի Արևմուտք, դեպի Մուշ։ Վանքի շենքը, պարսպի ներսում շրջապատված էր Երկար ճաղերով, Եկեղեցու ներսի դուռը սադաֆով ծածկված էր և ուներ Երկու փեղկ, իսկ դուռի դուռը Երկարից էր և ամուր։ Եկեղեցու միջի սյուները քառակուսի էին, որը ցույց է տալիս այդ Եկեղեցու 5-6-րդ դարերի բազիլիկ լինելը։

Եկեղեցու ներսի Սաղաֆ դրան դիմացն էր գտնվում խորանը, որի Երկու, աջ և ձախ կողմերում կային մեկական մատուռ։ Վանքի Բիրլիս նայող դռնից մտնելիս, ձախ կողմի վրա, աղբյուր կար։ Եկեղեցին կառուցված էր կարմիր և գույնզգույն սրբատաշ քարերով։ Վանքի պարսպի Երկու դռները Բիրլիս և Մուշ ճամփին նայող, Երկար և Երկփեղկամի էին։

1915թ. խութեցիների ազատարար Սելիմ անունով բեկի պաշտ-

պանության տակն էր գտնվում վանքը և նրանց ուխտատեղին էր միաժամանակ։

Սր. Աղբյուրիկ վանքն ուներ Երկու վարդապետ և մի դպրոց գիշերօթիկ, ուր ընդունվում էին հատկապես որք Երեխաները։ Վանքի ներքևում Ձերձուկ կոչվող մի աղբյուր կար, ուր հիվանդները լողանում էին բուժվելու նպատակով։

Վանքն ուներ իր կալվածքները Երեք վայրերում, որոնք գտնվում էին Վանքի շրջակայքում։ Անասնապահության համար հատկացված Երեք վայրերից մեկում պահվում էին ոչխարներ, մյուսում՝ այժեր, Երրորդում խոշոր աղջերավոր անասուններ։ Վանքի Եկամուտը բավարարում էր և վանցին, և հյուրերին։ Ծերունի Խողեղանն ասում էր. «Լառ, Սր. Աղբերիկու վանքի («Դավատում խոստովանը զընքը» ասելով խաչակնցում է) թոնդիր տարին տասներկու ամիս կվատեր, ուխտ ու ըխտավոր կուտեր».²⁴

Ըստ որոշ հեղինակների, Խույթ և Սասուն նույնացվում են և ասվում «Խույթ կամ Սասուն»։ Դա առաջացել է նրանից, որ Խույթը Սասունի մեջն է գտնվում, ինչպես Տավորիկը, որ նույնպես Սասուն անվան տեղն է և գործածվում։ Խույթը, ըստ Ս. Խորենացու Վերագրված Աշխարհագրության, Սասունի մեջ չէր (5-րդ դարում), այլ Տարոն-Տուրութերանում։ Նույնիսկ 9-րդ դարից, խութեցի Յովնանի ժամանակից, Խույթը Սասունի մի գավառակն էր, ինչպես Սասունի մյուս 9 գավառները։

ՄԱՐԲԲԱՆՔԻ ԲԵՐԴԸ

Մահբբանք բերդը, որ կոչվում է նաև Ամիրի բերդ, գտնվում է Մահբբանք գյուղում Ծովասարի արևելյան փեշի վրա։ Ամիրի բերդի տերը Խույթ և Բոնաշենի տերն է եղել, խարճ ու խարած առել նրանց բոլորից։ Իշխանի անունը Բոնիկ է եղել, որից և այդ Երկիրը Բոնաշեն (Բոնիկի շինած է կոչվում)։

Այդ բերդի կառուցման մասին ավանդաբար պատմում են, թե Բրիստուի թաղենու առաջքալը գալիս է Խույթ-Բոնաշեն քրիստոնեություն քարոզելու համար։ Մահբբանք գյուղում կանգ է առնում իր ընկերների հետ միասին ճաշելու համար։ Գյուղից դուրս գալով դեպի Սև սար, ճանապարհին ժարավում են։ Թաղենու առաջքալը գավազանը զարնում է գետնին և մի աղբյուր է թխում։

Ամիրի Երկի Բոնիկ իշխանի հովիվներն էլ այդ շրջապատում իրենց ոչխարներն արածացնելիս են լինում։ Ամբողջ հոտի ոչխարները սկ

գույնի են լինում և երբ գալիս են այդ հորդառատ աղբյուրից ջուր խմելու, բոլորն էլ սպիտակ գույնի են դառնում: Նույնիսկ հովվի և շունն էլ, լակերով այդ ջրից, սպիտակում է:

Արար-սկամորթ հովիվը հնքն էլ է խմում և սպիտակամորթ դառնում: Երբ ոչխարը բերի են բերում, հովիվները պատմում են բերվորներին (Կրվորներին), որոնք իշխանի տունը վերադառնալով, այդ հրաշքի մասին պատմում են Բօնիկ իշխանին, Ամիրին, որը ձի նստած մեկնում է այդ վայրը, ուր աղբյուրի մոտ դեռ հանգստանում էին Թաղեռն ու իր ընկերները: Ամիրը Թաղեռսին հարցնում է, թե ինչ մարդ են: «Մենք,- ասում է Թաղեռուր,- տեղ ենք փնտրում վաճք շինելու համար»: Ամիրն ասում է. «Սի պայմանով միայն կրույլատրեն իմ հորի վրա վաճք կառուցել, եթե դուք բժշկեք իմ անդամալույշ միակ որդուն»: Թաղեռս առաջալը խնդրում է, որ իշխանն իր որդուն ուղարկի իր մոտ: Երբ բերում են անդամալույշ որդուն, այդ աղբյուրի ջրով լողացնում և խսկույն բուժում են: Ամիրան համաձայնվում է, որ վաճքը կառուցեն և բոլոր ծախսերն էլ ինքը՝ Ամիրը կատարի, պատերը ուսկուց և արծարից շինվեն: Թաղեռս առաջալը չի համաձայնվում ասելով, թե ոսկին և արծարը հափշտակվում են, որով և վաճքը կքանդեն: Վաճքը կառուցում են այդ աղբյուրի վրա, որի համար էլ վաճքը կոչվում է Սուլք Աղբյուրիկ կամ Սուլք Աղբերիկ: Վաճքի քարերը բերում էին Մշո դաշտի Մանիկ գյուղից:²⁵ Իսկ Ամիրան այդ ոսկին ու արծարը ծախսում է և Մահբբանքում, վաճքից 2-3 կմ հեռու բերդ է շինում, որ և կոչվում է Մահբբանքի կամ Ամիրի բերդ:

Ուարաքի բերդը գտնվում է Խուրի Ուարաք գյուղի արևմտյան մասում, մի բլրի վրա: Բերդի շուրջն անտառապատ է, «հին ժամանակու» բերդ է:²⁶

Բերդի պատերը քանդվել են, քարերը սրբատաշ են, մեծ և սեղանի մեծությամբ: Պատերի մի մասն էլ դեռ կանգուն է: Ուարաքի բերդը Ծովասարի արևելյան կողմումն է, 4-5 ժամվա ճամփա նրանից հեռու:

Բլրկա Բերդգոռ և Ընկուզկա Բերդը գտնվում են Ընկուզիկ և Բլրիկ գյուղերի միջև: Երկու բերդերն էլ բլուրների վրա են կառուցված: Այդ երկու բերդերի, երկու բլուրների միջից անցնում է քարակ ջուր, որ կոչվում է **Դեղկանց Զորը**: Զորը, որից ջուրն է անցնում, ժաղկավտն է: Այդ ծաղիկներից հերիմները դեղ էին պատրաստում, որի համար ձորն էլ կոչվել է **Դեղկանց Զոր**: Ըստ ավանդության, թե՛ Բլրակը և թե՛ Ընկուզկա բերդերը կառուցել է Բօնիկ թագավորը (իշխանը): Երկու բերդերի ջորս կողմերն անառիկ ժայռեր են և անտառներ, միայն մի ճամփա Ընկուզիկ գյուղից գնում է դեպի այդ բերդերը: Բերդերի միայն ավերակ պատերն են մնացել: Բերդի մեջ երկու ջրաղացքար գտավ Պողոս Ասլանյանը և զցեց իր ջրաղացի վրա, սակայն Հաջի Ֆերոն քուրդ

հայտնի մի աղա, եկավ գնեց ջորս ուկով և տարավ Զոլոսիկ՝ գյուղ Մշո դաշտում, իր ջրաղացի համար: Այդ քարերը ամիսը մի անգամ էին միայն ջրում և ամբողջ ամիսն աշխատում էին:

Կա նաև Ղաշտա Միրանի բերդ, որ նշանակում է Ղաշտա-Միրան (իշխանաց դաշտի) բերդ:

Այդ բերդի մասին տեղեկություններ չկան:

Յ.Ն. Սարգսյանն իր «Տարեգրութիւն ի Փոքր և Մեծ Հայս» աշխատության մեջ գրում է «Բոնաշեն» վերնագրի տակ. «Թաղեթի առաքելոյ քարոզութեանք եկալ ի կողմանս յայսոսիկ, և հրաշիւք բժշկեալ գորդի Բոնիկ իշխանին զաւառապետի երկրին, որ նստեր ի բերդի շինելոյ ի գավաքն միոյ ի լերանց, ուր և երկի ցարդ աւեարկ նորա...: Եւ Բոնիկ կատարեաց ըստ խրատու առաքելոյն: Յետ ժամանակաց շինեցաւ այլ եկեղեցի գմբեթաշն որմնակից եկեղեցւոյն թաղի»:

«Ե ի մենաստանիս և սուրբ նշան մականուաննալ գործեսպուրոյց իբր զի ի Մանազկերտ որդի զաւառապետի մանուկ մատաղ յանզգուշութեն ընտանեաց անկեալ ի բոնիր բորբոքեալ և այրեալ լինի գործելի, այն է ածուխ...»²⁷ Բուժվում է Բոնիկ իշխանի որդին Սր. Նշանով և Մանազկերտի ծովսը տրվում է Սր. Աղբերիկին:

Թաղեռսի վաճքի մասին Սելիքսեթ գրիչը գրում է, որ Խուրի մեջ 1426 թին եղել է Բենոգր գյուղաքաղաքը, ուր գտնվում է Վաճքիր անունով, Մեծին Թաղեռսի վաճքը: Գրիչի այդ հիշատակարանում կա նույն վաճքի կնիքով կնքված ավետարան, գրի վերջումն է կնիքը:²⁸

ՓՍԱՆԱՑ ԳԱՎԱՅՐ

Փսանաց կամ Բուսանաց գավառի սահմաններն են՝ հյուսիսից Խուր-Բոնաշեն և բուն Սասունի, Ծովասարի կողմի մասը, արևելքից Խաբըլզոզ, հարավից Խփանք և արևմուտքից Տալվորիկի ջուրն ու Տալվորիկը:

Փսանաց գավառում Ծովասարից հարավ ձգվող հայտնի բարձրություններն են՝ Յեղեցվորի, Մնկրորի, Սուլքան Աղբյուրի, Աղա Սանուկի և Պերմ կոչվող գագաթները, որոնք գրեթե բոլորն էլ ուխտատեղիներ են:²⁹

Փսանաց գավառի գյուղերն են՝

Գոմբ-23 տուն հայ, ունի Սր. Բառասուն Մանուկ եկեղեցի: Այդ գյուղին մոտիկ գտնվում է հոչակավոր **Գոմոց վաճքը** կամ **նկույթ վաճքը**:

Գոմոց կամ Սուլք Պետրոս Առաջալի ճկույթ վաճքը, Սասունի

Ազրե և Կրեծոր գյուղերը եղել են, որոնք 1894 թ. առաջ և հետո հետզհետեւ սկսել են անհետանալ բնակչության այլ վայրեր գաղթելու պատճառով:

Փսանք գավառը 1894 և 1904 թվականներին կոտորածի չի ենթարկվել և համեմատաբար քիչ է տուժել. քան բուն Սասունը և Տալվորիկը, որոնք ազատագրական շարժումների կենտրոնն են եղել միշտ:

ԽԱԲԸՆՉՈՎԻ ԿԱՄ ՀԱԶՋՈՅԻ ՇՐՋԱՆԸ

Դազգոյի շրջանը հետագայում է կոչվել Խաբջոզի շրջան և Դազգոն իր շրջանով վերջին ժամանակներում խաբջոզի շրջանի մասն էր կազմում: Խաբջոզի շրջանի սահմաններն են հյուսիսից Փսանքն ու բուն Սասունը, արևելքից Մոտկանի շրջանը և Խուր-Բոնաշենի հարավյային մասը, հարավից Խարզանի շրջանը և Խիանի հարավ-արևելյան մասը, արևմուտքից Տալվորիկի ջուրն ու Տալվորիկը:

Խաբջոզի կենտրոնն է կազմում խաբջոզ կոչված գյուղաքաղաքը, որ ունի մոտ 600 տուն, որոնցից 500-ը քրդեր, քիչ մասով և թուրք, որ գլխավորապես պետական պաշտոնյաններն են և 100 տուն հայ: Խաբջոզը կայճակամանիստ է, գտնվում Փսանքի հարավյային, Մասուրուկի արևմտյան, Դաշիսի լեռնաշարի հյուսիսային մասում: Խաբջոզում կար կամարակապ մի եկեղեցի Սբ. Ստեփանոս անունով, որի հիմքերն էլ 1904 թ. կոտորածի ժամանակ քանդեցին քրդերը կայճակամի կարգադրությամբ, տեղոն էլ վարեցին, արտի վերածեցին: Սահմանադրության ժամանակ (1908 թ.) ուներ դպրոց, այն գործեց մինչև 1915 թ. կոտորածը, որն իրագործեցին կայճակամ Ձեվդեք բեկը և խաբջոզի Խալըք աղան: Խաբջոզի հայ ազգաբնակչությունը շրջակա հայ գյուղացիներով, բվով 3500 հոգի, 1915 թ. մայիսին Կապաս և Կուս գետերի միացումով կազմված խաբջոզի ջուր կոչվող գետի եղբերքին սպանվեցին և քափվեցին գետը:

Դազգու կամ Դազգո- 500 տուն, որից 350 հայ, 150 քուրդ: Ուներ մի մեծ եկեղեցի իր երկու բաժիններով, մեկը քաջ Մուշեղ, մյուսը Սբ. Աստվածածին, և կառուցված էր մի մեծ ժայռի վրա, ուր հազար հոգի կարող էր տեղափորվել: Եկեղեցու բնի առջևում էր գտնվում քաջ Մուշեղի գերեզմանը իր գերեզմանաքարով, մոխրագույն մի քար: Ինը քահանաներ իրենց ժողովրդի հետ 1915 թ. մայիսի 13-14-ին կոտորեվեցին, Դազգոյի Մուլուր-Սեման է Ֆենտիի դեկավարությամբ, շեյխ Աբդուլ Շահմանի շեխ Դասանի և շեխ Բալինցի մասնակցությամբ: Մի մասը դեպի Ասի և Կուագետի լեռները փախչելով, ազատվել են և այժմ

ապրում են Աշտարակի շրջանի Ուջան գյուղում:

Դազգոյում Միացյալ ընկերության կողմից բացված դպրոց կար առջիկներինը և տղաներինը առանձին-առանձին, 5 սենյակից և մի դահլիճից բաղկացած: Դպրոցը Սասունի ամենամեծ դպրոցն էր, ուր 7-8 դասասուներ կային: Դազգոյի հյուսիսում Սարաթուկն է 40 կմ հեռավորության վրա և Խարիստիլ լեռը, արևելքում Նորաշենի սարերը, արևմուտքում Խանդիլի լեռները, ուր, ըստ ավանդության, իին Դազգու քաղաքի գանձերն են պահվել ու անհետացել, հարավում Խարզանի և Բշերիկի դաշտերն են տարածվում, որ Դազգոյից երևում են:

Դազգոյի բերդը- Դազգոն քաղաք է եղել իին դարերից ի վեր, ունի շատ իին մի բերդ ոչ թե կառուցված, այլ ժայռերի ներսում փորված կառուցված, ուր և պաշտպանվել են: Բերդից մինչև Եկեղեցին, ստորերկրյա ճամապարհ ունի, նույնանու և մինչև մեջիտը կամ ջամին: Բնական բերդի քարերը սպիտակ գույնի են: Բերդի տակը, ջրի ափին, գտնվում էր աղյ հեղուկ հանք և գիպսի հանք: Աղյ այնքան սպիտակ էր, և հեղուկը համեղ, որ մանուշակի հոտ է գալիս, ասում էին: Պատմում են, որ Դազգոյի բեկ Խըզըքը հայերին թույլ է տվել անցյալում այդ քաջ Մուշեղ Աստվածածին Եկեղեցին կառուցել միայն ջամին (մեջիտի) կառուցումն ավարտելուց հետո:

Դազգոն ունի Խըզբեկ (արմ. մաս), Սլեման բեկ, Շամդին աղա (հար. կողմ) անուններով մզկիթներ, որոնք մինարե չունեն: Քաղաքի առաջ, հարավյային կողմը, կար Դաշրէ բեկ (բեկի քար) կոչված մի հսկա քար, դաշտի մեջտեղը, շուրջը մաքուր հողային տարածություն, առանց որևէ քարի: Այդ տնկված Դաշրէ-բեկ քար էր. կողմից բարձրությունը 30, հյուսիսային կողմից 15 մետր է: Բարի բարձր կողերի վրա կային միջից բացված ջրամբարների հետքեր, քայց ջուր չկար: Այդ քարի վրա նկար, կամ գրություն, արձանագրություն չկար:

Ալըմբուկ քար Դաշր էլ բեկի հս. կողմում տարածվող դաշտում կամի ցցված քար 2-3 մ բարձրությամբ և 4-5 մետր լայնությամբ, սպիտակ, մոխրագույն, որի վրա սլմբում են երեխաները, պատմվում է, որ այդ Դաշր-էլ-բեկ քարերը երկնքից են ընկել, նկատի ունենալով նրանց խրվածքը և շրջապատում ուրիշ քարեր չլինելը: Դազգոյում մի մեջիտի վրա կա Բրանձ բեկ կոչված մինարե, որի վրա արաբերեն գրված է այս խոսքերը «Էմիր-էփրեմ-իբրահիմ դանա յափու թիր սամդա խանա...» և այդ մինարեն ունի 20-25 մետր բարձրություն և այնքան հաստություն, որ նրա կլոր գլանի միջից երկու աստիճաններ են բարձրանում մինչև մոլլայի եզան (աղոթի կանչելու) տալու տեղը մի կողմ լուսանուտով, մյուսը ոչ:

Խաբջոզ-Դազգոյի շրջանի գյուղերն են Սղնուտի աջ և ձախ ակերին:

Նորշեն- 111 տուն, քրդականը՝ 108, իսկ հայեր՝ 3 տուն:

Նորշենը գտնվում է Սոնուտ և Շատ (Շազզոյի) գետերի միացման վայրմ: Ունի մեծ վանք, որը կոչվում է Կոնոնոսի վանք, որի մասին հիշատակվում է Մատենադարանի Դայսմավուրքի գրքի մեջ: Կոնոնոս վանքի դոհան առաջ, հարավային պատի մոտ կա Շեխս Ամարի գերեզմանը, որն այդ վանքը ամիրաների հարձակումներից է պաշտպանել և ի հարգան նրա թաղել են այդտեղ: Գերեզմանաքարն ու հիշատակառն մնում են: Նորաշենի արևելյան կողմում Մարջու և Ասսու գետերի միացման կետում կա մի ավերակ վանք, սրբատաշ քարերով, որ կոչվում է Քաճատուն: Ըստ ավանդության, Առոճ Գնունու և Մանածիի Ռշտունու սպանության վայրն է եղել: Այդ Քաճատուն վանքի արևելյան կողմը ապրում էին Բաղրիսան կոչվող քուրու թեկեր, 7 եղայրներ, որոնք 1915 թվականին Շազզոյի իրենց ռայա հայերին ազատեցին կոտորածից, դրանք էին Բաղրիսանի որդիներ՝ Մահմուդ, Ռասուլ, Խուզի, Բոգե և Փուլս:

Կուսգետի ակունքում կա Վանդիր կոչված մի աղբյուր, որ 5 մասի բաժանվելով, կարող է 5 ջրաղաց պտտեցնել: Ըստ ավանդության, այդ աղբյուրը, որ գալիս է Սր. Աստվածածին վանքի առաջից, ունեցել է մեծ վանք Վանդիր անունով, որի անվամբ կոչվել է աղբյուրը, որ կայծակի հարվածից է բխել այդ վայրում և մեծ ուխտատեղի էր:

Դետագրքական է, որ այս վանքը Վանդիրը, կրում է Սր. Սոբերիկ կամ Վանդիր վանքի անունը, որոնք իրար մոտիկ են, թերևս և նույնը:

Կուս գետ. որին Խըլըխտա են ասում արաբները, ունի 80 տուն, հայ-քուրդ միասին, բաղկացած Կոտրծեր, Գոմը, Քարծեր, Ներքին թաղ, Վերին թաղ, Արմոքնին և Արևկոնք յոթ թաղերից: Կուսգետն ուներ մի եկեղեցի Սր. Աստվածածին անունով, որ նույնանուն տոնի ուխտատեղին էր: Կոտրծեր թաղի գլխին մի արտ կար, որի գլխին մի աղբյուր, այդ արտն արժեքավորված էր իր սահմանագծի վրա, իրար կպած, մեջիդիեներ (20 դուրուշ արժող դրամ) շարելով և որի համար մեջիդիեի արտ էին կոչում: Կուսգետից դեպի արևելյան Զունար լեռը 3 կմ հեռավորության վրա կար Քարդուռ կոչված անառիկ մի ճանապարհ, ինչպես Տալվորիկում, որից միայն մի մարդ կարող էր անցնել. անասուն կամ գրաստ այդ ճանապարհով չեր կարող անցնել:

Դոդոնուկ 15 տուն արաբախոս քրդեր են, խոսում են և հայերեն, մուսուլման չեն և չեն թվատվում:

Զորք- 45 տուն քուրդ: Զորքը գտնվում է Կուսգետի ծախ ափի վրա, երեք լեռների և երեք ծորերի մեջտեղ, որի համար էլ Զորք, Զորեր կամ Զորիկ է կոչվել: Զորքի հյուսիսային կողմն է գտնվում Քարմեթ կոչված անտառուտ սարը, ուր ժայռերի մեջ կա նույնանուն բնական մի քարանձավ, որ միշտ ծառայել է քուրքական կառավարության դեմ ա-

րաբախոս քրդերի ազատագրական շարժման ժամանակ որպես ապաստարան, ինչպես Զննգոլը Տալվորիկում: Թուրքական կառավարությունը մշտապես զավել և փորձել է կոտորել Մոտկանի շրջանի արաբախոս քրդերին: Քարմեթից դեպի ծոր հոսող աղբյուրից ծկներ են դուրս գալիս, գնում դեպի գետը և գետից դեպի աղբյուրն ու Քարմեթի խորքը, ինչպես մենք տեսանք Զննգոլը: 1915 թվականին, շնորհիվ Մոտկանի, հատկապես Զորքի արաբախոս քրդերի և Քարմեթի ապաստարանի, բազմաթիվ հայեր են ազատվում Շազզոյի և Մոտկանի կոտորածից և Կովկաս անցնելով, այժմ բնակվում են Աշտարակի շրջանի Ուջան, Թալինի շրջանի Ներքին և Վերին Սասունաշեն գյուղերում:

Քարմեթին ուխտատեղի է, որտեղ կա մի ավագան, աղբյուր Գյուռ Մանանա անունով, որի ջուրը ավագանից ոչ թափվում է և ոչ պակասում, հավանաբար, հաղորդակից նման այլ ավագան ունենալու պատճառով: Զորք գյուղի արաբախոս քրդերի դեկավարն է լինում Զաֆոյե Զայնաբ անունով մեկը, որի դեմ թուրքական կառավարությունն ուղարկում է 1500 հոգիանոց մի զորաբանակ նրան ոչնչացնելու համար: Զաֆոյի Զայնաբը Զորք գյուղի 7 մարտիկներով ամրանում է Քարմեթի կոչված ժայռի վրա, ուր օր դիմադրելով հարձակվող քուրքական զորքին կոտորում է և 1500-ից հազիվ 200 հոգի ազատվում, փախչում են, Զաֆոյե Զայնաբը վերադառնում է գյուղ և գերծ է մնում նման հարձակումներից:³¹

Զողուտ 10 տուն քուրդ: Կուրտնե անունով գազանաբարո մի քրդի գյուղն է: Կուրտնին իր հողին մենակ տիրելու համար սպանում է իր եղբորը և նրա որդիներին: Կուսգետի քուրդ աղաներից մեկը գալիս է ծողուտցի Կուրտնեին պատմելու: Կուրտնեն իր տան մեջ սպանում է և այդ աղային, որի արյունը թափվում է պատահմամբ օջախի առաջ դրված և գլցի ալրով լցված տաշտի մեջ: Երբ Կուրտնեի կինը վերցնում է տաշտը դուրս տանելու այսուը թափելու, Կուրտնեն հանգիստ սրտով չի թողնում և այդ այսուը շաղել, թիսել է տալիս, գլցի արնոտ հացն ուտում:

Ասսի- 52 տուն, 5 տուն հայ, 47 տուն քուրդ: Գտնվում է Կուսգետ կամ Ասսու գետի աջ և ձախ ափին: Քրդերն արաբախոս և հայախոս են: Ասսի կամ Ասսու նշանակում է ամառիկ: Այդ գյուղի մոտ է Յին Ասսու բերդը:

Շեփեր Նույն գետի աջ և ձախ ափերի վրա 5 տուն ունեցող քրդական գյուղ է:

Ղըրի 20 տուն քուրդ, Կուսգետի աջ ափից 2 կմ հեռու:

Ցրտուտ Կուսգետի ձախ ափի ճյուղի Մոտկանա ջրի ձախ ափին, այնտեղ, ուր Մոտկանի և Կուս գետերն իրար մոտենում են, բայց դեռ

չեն միանում: Մոտկանի ջուրը կոչվում է «Ձոջ (մեծ) ջուր» իր շատ վառար լինելու համար:

Լինեք 30 տուն ջուրը, գտնվում է Կուսաբետի և նոր կամ Մոտկան գետի միացման կետում, աջ ափի վրա: Լինեքը լիբն է թզենի և նշենի, ոչ միայն ընտանի, այլև վայրի տեսակի ծառերով: Լինեքի և Ռարա գյուղի միջև կամ մի ճանապարհ, որ կոչվում է Սաղսրտիկ, որտեղից մարդ, հավասարակշռության վրա հսկելով միայն կարող է անցնել, իսկ անասունները չեն կարող անցնել:

Ռարի՝ Սղունտ գետի (նոր գետ) աջ ափին քրդական գյուղ, 50 տուն: Կուս և Մոտկանի գետերն իրար միանալով կոչվում են Սղունտ գետ, և ավելի հարավ իջնելով՝ աջ ափից ընդունում են իրենց մեջ Դազգոյից եկող գետը, որ կոչվում է Շատ գետ կամ Դազգոյի գետ:

Փասյար՝ Շատ գետի Սղունտ թափվող գետաբերանի աջ ափին, քրդական գյուղ, 50 տուն:

Եեխգեղ՝ Շատ և Սղունտ գետերի միացման վայրից դեպի հարավ հոսող գետի աջ ափին, այնտեղ, ուր ժայռեր կոչվող լեռնաշարը ճեղքում է այդ գետը. Սասունից դուրս հոսում դեպի Բշերիկի դաշտը:

ճաման՝ քրդական գյուղ, 200 տուն զազաներ են, մի սարի վրա փոս վայրում գյուղից վերև կա մեծ աղբյուր: Մոտկանի շրջանի մեջն եր հետագայում:

Եղիկ՝ քրդական գյուղ 250 տուն: Կորտիան կամ Կուրտիան քրդական գյուղ, 60 տուն: Քոլանս՝ քրդ. գյուղ, 200 տուն, Մոտկանի սահմանակից և երբեմն Դատվանի կայմակամությանն էին ենթակա: Դոլանք՝ քրդ. գյուղ 40 տուն Սղունտ գետին մոտիկ:

Զման՝ հայ, գյուղ, 20 տուն, Մոտկան գետի ձախ կողմը: Յրորք 30 տուն հայ, իին ավերակ քաղաքի տեղ, ունեցել է հինգ եկեղեցի Սր. Կիրակոս, Սր. Սարհանա, Սր. Մանկաս, Սուրբեղ, Սր. Կիրակոս, որոնք կամարակապ են եղել:²²

Արտրեր՝ հայ և քուրդ խառը գյուղ, մեծ աղբյուր ուներ, որ պատեցնում էր գյուղի ջրաղացը: Սղունտ 70 տուն հայ, ունի երկու եկեղեցի Ս. Շմանիկ և Ս. Դակոր: Արսան քրդական գյուղ, ունի մեջիտ, առանց մինարեի: Դաճախ այս գյուղերը Մոտկանի շրջանին են ենթարկվել: Փիրշենք 15 տուն հայ: Ծնկուգեք 4 տուն քրդ, Նորք 10 տուն քուրդ:

Մշկատար՝ հայ-քուրդ խառը 15 տուն: Յով՝ հայ-քուրդ խառը 18 տուն: Խադորան 8 տուն հայ: Դազորթա՝ քրդ գյուղ՝ 15-16 տուն: Կող՝ հայ-քուրդ խառը, 45 տուն, մեծ մասը հայեր էին: Խարիսար 32 տուն: Շաք, Այնառաս, Պալո, Խալիլան, Այնմար, Դարակուզի, Մազրախալք, Զրնաղը կամ Զոնախեթ, Մանկիկ, Զարգամո, Մշրեթան, Մաներա, Փափուր, Դամմոխ, Եեխան, Շնիւղի, Ոշնիկ, Թզի,

Մանշկուտ, Գետկից, Խնձորտա, Տազաներ, Գետեր, ճակուտ, Չորիկ, Վիժնանք, Ադո, Թանլմանք, Զալալիք, Հարնուվանք, Ներքին Շաք, Սոլլա Զալո, Ղըջի, Ռարի և Գոլանիս անունով հայ-քրդական կամ քուրդ-հայկական խառը գյուղեր, որոնցից Մանկիկը, Շնիւղիը, Թզին, Սանշկուտը, Գետկիցը, Գետերը, Չորիկը, Վիժնանքը, Հարնուվանքը, ինչպես իրենց անուններից էլ երևում է, հայկական են եղել, որոնց հետզինետե կոտորածի կամ գաղթի միջոցով կորցրել են իրենց հայ բնակիչները և դարձել են քրդական գյուղեր, ուր երբեմն կամ վանքերի կամ եկեղեցիների ավերակներ ու մնացրդներ: Նորգեղը հայ գյուղ էր մի քանի քուրդ բնակիչներով: Արծվիկ 35 տուն հայ: Խասնփի 12 տուն հայ-քուրդ խառն, Կոոթեր 7 տուն հայ: Վարդինոց 5 տուն հայ: Խոջարենք 14 տուն հայ-քուրդ խառն: Տօգետ 16 տուն հայ: Յրեկոնք 7 տուն հայ-քուրդ խառը: Կոշակ հայ-քուրդ խառն 12-15 տուն: Իրիցանք 10-13 տուն, հայ-քուրդ: Արեգեմ 8-10 տուն հայ-քուրդ: Գոմրդեր կամ Գոմըլորեր քուրդ-հայ, հայերը 8 տուն: Յաղը՝ քուրդ-հայ: Յրուտ հայ-քուրդ: Կորով՝ քուրդ-հայ, Առվտոց՝ քուրդ-հայ: Յաթիի հայ-քուրդ: Բադրմուտ հայ -քուրդ: Երուր 4 տուն հայ: Յապըշտուդ 2 տուն հայ: Բարկից 5 տուն հայ: Զորաղը քրդական գյուղ, մի տուն հայ: Գոմեր 5 տուն հայ: Խարզեր 7 տուն հայ: Յորանք 5 տուն հայ: Գելիե Սնդուս 3 տուն հայ: Դալըրձոր 7 տուն հայ, 10-15 տուն քուրդ: Խասորի՝ 20 տուն հայ: Ոշնիկ 15 տուն հայ: Դրատ 10 տուն հայ:

Ըստ «Արաքս» գրական և գեղարվեստական հանդեսի 1895թ., էջ 84, հ.հ.. 86-93-ում եղած վիճակագրական տվյալների, Խարզանում եղել են նաև հայկական Շեկալենք՝ 15 տուն, Ռմխանք՝ 8 տուն, Խոջարիք՝ 10 տուն, Կորդեր՝ 15 տուն, Վարդինոց՝ 7 տուն և Զակուտ գյուղերը, որոնց ազգաբնակչությունը ըստ Երևույթին, կոտորվել կամ արտագաղթել են ու այժմ, որպես հայկական գյուղեր չկան, անհետացել են բողնելով միայն ավերակներ:²³

Ժրենց վանք- Խարզանում կա Ժրենց անունով մի վանքի ավերակ: Այդ վանքը Թալիշի վանքի (Աշտարակ) մեծության չափ է եղել, կամարակապ, սյունազարդ, ծածկը նույնպես կանարածն, մի մասը մնում է: Այդտեղ եղել են յոթ վանական վարդապետներ:²⁴

Սր. Աստվածածին վանք- Նույնպես մեծ և ավերակ վանք է համանուն լեռան ստորոտին՝ Յրուտ, Ասի և Սղունտ գյուղերին մոտ: Պատմում են, որ այդ Սր. Աստվածածին վանքից մինչև Փսանաց գավառի Գոմուց վանքը անցկացված է եղել մի քարակ շղթա, (զնջիլ) երբ Գոմուց վանքի զանգակը հնչեցնում էին, ինչում էր և Սր. Աստվածածին վանքի զանգակը և, ընդհակառակը: Սր. Աստվածածին վանքից մինչև Սասունի բերդի ջուրը, Կապասգետ և Կուսաբետ, անցկացված է եղել

բունել վտանգի և պաշարնան ժամանակ այդ գետից ջուր ստանալու համար, իսկ խաղաղ ժամանակ Մարաթուկի սարի աղբյուրից խողովակով ջուր էր բերված Ար. Աստվածածին վանքը: Մանուկ Մնջոյանի պատմաժի համաձայն, շատ հին ժամանակ Զոհիք Փռա բեկը հարձակվել է Սասունի վրա և Ս. Աստվածածին վանքը, և Սասունը թալանել, իսկ երկու վարդապետներին ու մի քանի քահանաներին գերի է տառել Զոհս կամ Չոկ, հետո՝ Սղերդ: Այն ժամանակվանից Ար. Աստվածածին վանքը այլևս վաճահայր չի ունեցել: Ար. Աստվածածին վանքը Խարզանի հյուսիս-արևելյան մասում է գտնվում Խութի սահման կազմող սարի ստորոտին, որը կոչվում է Ար. Աստվածածին սար:

Մարաթուկի Ար. Աստվածածին վանքը, փոքր մի վանք է Մարաթուկի գագաթի վրա: Առավոտյան արևածագին Մարաթուկի գագաթից երևում են Սիփանը և Սասիսը: Դեպի հարավ, Դիարբեքիրի կողմը նայելիս, երևում է Դիարբեքիրի խարաժտախի սարը, որը հինգ օրվա ճանապարհ է հեռու Մարաթուկից: Մարաթուկի վրա ամեն տարի վարդավարին ուխտի են գնում և Խարզանի, և Խարչոզ (Հազզոյի), և Սոտկանի, Փասնքի և այլ շրջանների սաստուցիմերը. 3-4 օր մնում: Առաջին օրը Մեծ Մարաթուկի գագաթի վրա (երկու գագաթ ունի Մարաթուկը, մեկը մյուսից փոքր, բայց ոչ երկու Մասիսների գագաթների նման) մատաղներ էին անում, երկրորդ օրը փոքր Մարաթուկի վրա, երրորդ և չորրորդ օրերը պարի, նշանառության, լարախաղաների խաղի օրերն էին: Մեծ հոչակ էր վայելում այն մարդը, որ նշանառության առաջնությունն էր խլում և կոչվում էր «Նշանդար», այսինքն թիրախին անվենապ խփող: Մեծ Մարաթուկի գագաթից թիզ ցածր Շարանքարեր կոչված մի գյուղ կա, ուր հովիվն իր ոչխարների հետ քարացած է: Ըստ ավանդության, մի հովիվ Մարաթուկի լանջին, ամառվա շոգ ժամանակ, իր ոչխարներն արածացնելիս ջուր չի գտնում, ու սիրոտ կակծում է ոչխարների մղկտալուց: Կերցնում է իր սրինգը և բարձր մի ժայռի վրա նստում ու սկսում նվագել, խնդրել «Բանձրիկ Ար. Մարաթուկին», որ իր ոչխարներին մի պար աղբյուր տա, խնմեն ու չմղկտան խստանալով նոխազին մատադ անել: Այդ ժայռի ստորոտից, որի գագաթին հովիվը նստած սրինգ էր ածում, բխում է մի աղբյուր, որի հոսանքի շուրջը ոչխարները հավաքված սառնորակ ջուրն են խնում, ինչպես և հովիվը իր պապակ շրբունքներն ու սրինգն է հովացնում, սակայն նայում իր նոխազին, որ ոչխարի առաջն անցած դեպի արոտն է գնում: Հովիվը նոխազին չի մատադում, և ինքը բերանին դրած սրինգն սկսում է նվագել, որ հոտն արածի: Այդ ժամանակ քարանում են քոլորը, կազմվում է Շարանքարերը, որ փոքած է Մարաթուկի լանջին:

ՄՈՏԿԱՆԻ ՇՐՋԱՆ

Մոտկանը պատմական Գգեխի արևելյան մասն է, հարավից է Քեղի մի մասը: Մոտկանի շրջանի սահմաններն են հյուսիսից Խույր-Բոնաշենը, արևելքից՝ Բիթլիսի Թուխ գետն ու Սալնոձորը, հարավից Բշերիկի և Սլյվանի դաշտերի արևելյան մասը, արևմուտքից՝ Խարչոզ կամ Հազզոյի շրջանը:

Մոտկանի գլխավոր կենտրոնն է Դատվանը, որն ունի 60 տուն և կայմականանիստ է Դատվանի շուրջը տարածվող Մոտկանի լեռներն են Մարաթուկի արևելյան շղթան, Կուչի, Դորմոր, Շնազ, Փորակ, Սագիքար, Խալըմն և Նքուն բարձրությունները («Դամբավարեր», 1916 թ., նո. 42, էջ 1334): Մոտկանից անցնում են Կապասգետը կամ Քեպերցու, Սցու, Բոկմոտու և Երախու վտակները, որոնք միանալով Մեյդան գետին, հոսում են հարավ և Զոհս քաղաքի մոտ թափվում Տիգրիսի մեջ:

Մոտկանում կամ բերդեր Գգիսու բերդ, Մազիքար, Ուրուսի, Տարիի, Կալիոկ, Բոկմոտ և Թիրվու, որոնք անառիկ վայրեր են և տեղացի արար, հայ, քուրդ ժողովուրդներն իրենց ըմբռությունների և քուրքերի դեմ մղած պատերազմների ժամանակ ապաստանել են այդ բերդերում ու քարանձավներում:

Նիշ. 80 տուն, կես հայ և քուրդ, Եսայի Նչեցի հայտնի փիլիսոփայի ծննդավայրն է. Ասու գետի ծախափնյա վտակի ակունքի մոտ, վտակի ծախս ափի վրա, այն մասին մտիկ, ուր Արսանի և Կրիսոյի կամուրջը է կառուցված: Նիշն ուներ երեք վանք կամ եկեղեցի Կարմրախաղ. Ար. Գևորգ և Ար. Սարգիս, երեքն էլ կամարակապ և հին եկեղեցիներ էին: Գյուղի միջից թիում են 30-ից ավելի աղբյուրներ: Նիշի կողքի բարձրությունները կոչվում են Շինաղ, Մատղնա և Հարպոք, վերջինը՝ անտառապատ:³⁵

Նիշի Փսխտուրը. 40 մ բարձրությամբ մի լեռնաքար է, որի խարսխի մոտ բավական բարձրից մի մեծ աղբյուր է ջրվեժում, որը ջրաղաց է պտտեցնում: Այդ ջրվեժի տակից ջրվեժի և Փսխտուր ժայռի արանքով է անցնում ճանապարհ: Կյուտեղ եղել է Գոմք անունով մի գյուղ՝ Նիշից հին: Գոմքի փոքր կամարակապ եկեղեցին շեն էր մնում մինչև 1915 թվականն էլ: Պատմում էին, թե Փսխտուր են կոչել այդ ժայռը ու քարը, որովհետև այդ տեղերը արջերը աղբյուրի վրա գնացող անաստուններին փախցնում էին (պատառոտում): Նիշը վերջին տարիներում պատկանում էր Բափեր աղա կոչված մի քրոյի: (Տվյալները վերցված են Մոտկանի Կրիսու գյուղացի Խորայել Հովհաննիսյանից և Ուստա Ակորից, որոնք 1947 թ. ապրում էին Ուշանում):

Մարմանդ. 200 տուն, քրդական գյուղ, հայտնի Դրբոյի Մաճադի գյուղն էր, որի միջից բխող աղբյուրը պտտեցնում է գյուղի ջրաղացը: Գտնվում էր Նիշից Դատվան գծի հյուսիսային մասում, Վտակի ձախ ափում: Այդ գյուղացի էր Էջմիածնի Բարսեղ կարողիկոսը (1678թ.):

Արփի. 100 տուն հայ, ունի շեն և կամարակապ եկեղեցի:

Շեն. 60 տուն հայ, իսկ Բրդի Շեն կամ Բոնաշենն էլ նրան մոտիկ և մեծ գյուղ է: Դայկական Շեն գյուղում կա մի եկեղեցի՝ Սր. Շովիաննես անունով, որը կամարակապ է: Շենը հատկապես ընկուզենի և տանձենի ծառերի մի անտառ է, ծառերից «արեգ մարդու վրա չեր դիաչի»:

Քաշախ. 200 տուն հայ, ունի շեն և կամարակապ եկեղեցի: Քաշախն աղբյուրների գյուղ է, ըստ Սղունդ գյուղացի Աղոյան Բարի ասածի, 366 աղբյուր ուներ: Դարուստ նահապետական ընտանիքներ էին ապրում այդ գյուղում «Դաշոյի տունը 60 շունչ էր, տասներկու խաչերկաթ էր դրուկ վըր մեծ թունտրին»²⁶:

Գգեխ կամ Նիզեն. պատմական իին քաղաք է Գգեխի տեղը, որ հիշվում է Սովուս Խորենացուն Վերագրված «Աշխարհացոյցի» մեջ: Այժմ 60 տուն է հայ, ունի շեն և կամարակապ եկեղեցի: Գգեխի մոտիկ է Խալամսը սարը:

Մցի կամ Մցը. 120 տուն հայ, ուներ շեն և կամարակապ եկեղեցի:

Մեյդան. 50 տուն, քրդական գյուղ, որի տերն էր հայտնի քուրդ Նամադի Դրբոն, որի սարսափը տարածված էր շրջանի վրա և ասելիք էր դարձել «Ազրէ փալասոտ մը թզվեն և նամադէ Դրբո դը բարի» (Նամադի Դրբոյի հրացանից կայծակ կտեղա):

Կրիսո. 100 տուն հայ և քուրդ, խառը, ուներ երկու կամարակապ եկեղեցի Տերնաղերե և Սր. Դակոր, որոնց շեն էին:

Սղունդ. 70 տուն, հայ և քուրդ, ուներ մի տարրական դպրոց և երկու եկեղեցի, Սր. Դակոր և Ծամոնյան, երկուսն էլ շեն վիճակում:

Տորիս- 70 տուն քրդական գյուղ, գյուղի տերն էր Ուշին Զնտո անունով քուրդ աղան:

Արսան. 30 տուն, քրդական գյուղ: Մոտկանի քրդական գյուղերը ջամի (աղոթատուն) չունեին և բնակիչներն ընդհանրապես նամագ չին կատարում:

Ջրտո կամ Ջրտու. 80 տուն հայ, ուներ կամարակապ, բայց հաճած եկեղեցի:

Ջորը. 40 տուն հայ, որից մի քանիսը միայն քուրդ:

Տնկետ. 30 տուն հայ, 2-3 տուն քուրդ:

Առվտոց. 60 տուն քուրդ:

Բոյնուտ. 30 տուն հայ, նաև Բողնուտ է կոչվում, իսկ Մշո առաջնորդարանի ցուցակում Բոկնուտ:

Չորմեզ. 60 տուն, հայ և քուրդ խառն:

Մարկոկ. 100 տուն հայ, շեն, մեծ և կամարակապ եկեղեցի ուներ, անունը հայտնի չէ, չեն հիշում պատմողները:

Աղբժներ. 80 տուն հայ, ուներ մի շեն և կամարակապ եկեղեցի:

Քոլանս. 100 տուն քուրդ, գյուղի տերն էր Դաշի Ֆարո աղան:

Շաման. 120 տուն քուրդ, տեղացի և իր մոտ շրջաններից Շամդին աղան, որպես խաֆիրություն, հողե պուտուկներ անգամ պահանջում էր, դա ընդհանուր բան էր և նյութ խաֆիր աղանների համար:

Լանդադարան. 8 տուն քուրդ, Անարի Քեֆոյի գյուղը, որին էր պատկանում նաև Սղունդ գյուղը:

Դայկադարան. 5 տուն հայ և մեկ տուն քուրդ:

Բընավոկ. 7 տուն քուրդ:

Աշկըրոտ. 5 տուն քուրդ: Կարմունջի գլուխ՝ 10 տուն քուրդ:

Մեծ Զոր. 30 տուն քուրդ: Ռաման՝ 30 տուն քուրդ:

Քրուտք. 25 տուն հայ: Դոլաք՝ 25 տուն քուրդ: Խուր(Մոյանք)՝ 30 տուն հայ: Ուրուս՝ 10 տուն հայ: Քրդի Խուրտյանք՝ 30 տուն քուրդ:

Մրցանք. 25 տուն հայ: Խարտգող՝ 10 տուն հայ: Մրցանք և Ուրուս գյուղերը տանձաստաններ էին:

Ըստ Մշո առաջնորդարանի ցուցակի, Մոտկանի մեջ էին նշնում նաև հետևյալ գյուղերը. Կորվու՝ 20 տուն հայ: Կարբը՝ 10 տուն հայ: Մզուք կամ Մզրուք՝ 30 տուն հայ: Միրիթաղ՝ 10 տուն հայ: Աբութաղ՝ կամ Հակոս թաղ՝ 15 տուն հայ: Աղբըներ՝ 100 տուն հայ: Կնծու կամ Կնծավ՝ 50 տուն հայ: Արտեր՝ 15 տուն հայ: Օրծենք՝ 15 տուն հայ:

1897 թ. Սոտկանի հյուսիսային մասում գտնվել են հետևյալ գյուղերն էլ. Արծվիկ կամ Արծվիք՝ հայկական գյուղ էր, տների թիվը չի հիշատակվում, Եղգիկ՝ քրդական և Նարմանտ նույնպես քրդական գյուղերը:²⁷

ԽԻԱՆՔ

Խիանքի սահմաններն են հյուսիսից Անդոկ և Կեփին լեռնաշղթան, Արևելքից Տալվորիկը, հարավից Տալվորիկի ջուրը, Խայսերից սկսած Խազալիկի դաշտը և համանուն գետը, արևմուտքից Խուլքի շրջանը: Խիանքի աչքի ընկնող բարձրություններն են՝ Սպիտակ, Ռշկանի և Վասլինի սարերը հյուսիսային մասում, իսկ Ռախման սար Պշտա ճիե և Ֆարիհանդու սարերը հարավային մասում Ֆարիհինի կողմերը, արևելքում Տալվորիկի Գաբլոր և Մզրա բարձունքները, արևմուտքում Խուլքի բարձունքները: Խիանքով հոսում են Սևիք գետը, որը բխում է Կեփին լեռան հարավային ստորոտից,

ճամ գետը՝ Անտոռի հարավից Գելիե Ընգըվի (Մեղրաձոր) ծորից, որոնք իրար միանալով՝ բափկում են Կանիա- Բահջի (Տալվորիկի ջուր) գետի մեջ Խայսեր գյուղի մոտերքը:

Խիանքի. Կայմականության կենտրոնն է **Փասուրը**, որ ունի 200 տուն հայ, ջուրդ և քիչ թվով թուրք ծառայողների տներ, և գտնվում է Խուլքի ջրի աջ եզերքին 1-2 կիլոմետր հեռու, **Ներջիշի դիմացը**:

Իշխանձոր. Իշխանձոր կամ Իշխնձոր վերջին անունը, ունի 90 տուն, իինգ թաղ Խզրկու արտեր, Կալիք, Խրվարդ, Միջին թաղ և Նորիհան, մի եկեղեցի կամարակապ և շեն, որ Սք. Մամաս էր կոչվում, երեք լուսատուն Խորասմամաս, Ս. Թօնիս Մանուկ, որ գտնվում է գյուղի արևմտյան ծայրին: Ըստ ավանդության, այս չորս սրբավայրերը չորս կուս քույրերի անունով է կոչված, որոնք շատ գեղեցիկ են եղել և կորապաշտ թագավորին չեն ենթարկվել իրենց քրիստոնեական կրոնը փոխելու խնդրում և փախել, եկել են Սասուն, Անդոկի փեշի խոռուս Մասուն կոչված տեղը, այնտեղից է Իշխանձոր, որպեսզի իրենց չգտնեն: Դա հիշեցնում է Սք. Յոհիվսիմեի փախուստը Տրդատ թագավորից, թերևս 4-րդ դարուն նման դեպք պատահել է և Տարոնում, իսկ ճգնավոր կույսերին հարմար վայր էր Անդոկի Անտոն ճգնավորի վայրը, ուր և գնացել են այդ չորս կույսերը:

Օսկի թրի տեղը. գյուղի մեջ եղած Սք. Մամաս եկեղեցուց քիչ ցածր հին մի եկեղեցու ավերակ կա, ուր, ըստ ավանդության, Ոսկի թուր է եղել պահված, կորապաշտները քանդել են այդ եկեղեցին, իսկ բնակիչները նախապես Օսկի թուրը պահել են այդ եկեղեցու ավերակի առաջ գտնվող հսկա ժայռի տակ, որտեղից հանելու անհնար է: Այդ քարը իր շրջապատի ամենամեծ քարն է. «Օսկը թուր ու որ էլա 10-15 կիգ գաբրցու» (Ոսկե թուրը որ գտնվի 10-15 գյուղ կապրեցնի):²⁸

Ընկուզնակ. 80 տուն հայ: Ուներ կամարակապ մի եկեղեցի Սք. Մամաս անունով, Ապաղքա կոչված մի հողամասում, անտառուտ տեղում եղել է մեծ Ապաղք վանքը, որ ուստատեղի էր, նրա կողքին էլ մի լուստուն Սք. Յակոբ անունով, և Աք. Ստեփանոս, որի կողքին էր գերեզմանատունը: Այդ ապաղքի վանքի ավերակների և անտառի մեջ յոթը մասուր և իին քաղաքի մի ավերակ կա, ուր «վանքերու դիխ տներու դիխ քիս ու ջըլսից է շինած»²⁹: Սք. Յակոբի վանքից մի քիչ հեռու կա Թլճա աղբյուր, որի վրա մշտապես թասեր էին կախված (Երբ Դիարբեքիրից, Սասունից ուստավորներ էին գալիս) ջուր խնելու համար: **Սեծակ Աղբյուր**, որ ջրաղաց էր պտտեցնում և հոսում դեպի Սևիք, կազմում Սևերի գետը: **Սալուկ Աղբյուր՝** գյուղի մեջ: **Ընկուզնակի Ապաղքու** սարը և ծիծառ թարը: Գյուղի բարձունքներն են Կավրե Պիրես՝ (Պառավի քար) նույնպես: **Խզնը թար** կամ ծիծառքարը միակտոր մի ժայռ է, միջին դուռ թա-

ցած, մի թարանձավ է, շատ խոր, գտնվում է Ընկուզնակ գյուղից արևմուտք, մի ժամ հեռավորության վրա, թարանձավը հորի պես է, դոնից կախ լինելով միայն փորձել են իջնել մեջք, թայց պարաներից կախվող մարդը հատակին չի հասել և ետ են քաշել: **Խզնըքար** նշանակում է գանձի թար, քանի որ թար գցելուց բավական ժամանակ անց նոր միայն լսվում էր ծայնը:

Գյուղն ընկուզենիների մի անտառ է, որից և Ընկուզնակ է կոչվել:

Յեղին. 70 տուն հայ, ունի կամարակապ ամուր եկեղեցի՝ Սք. Եղիա Մարգարե, որ ամբողջ սասունցիների համար ուխտատեղի էր: Շուրջը գտնվող անտառը բաժանված է ըստ Սպսունի ավանի գյուղերի, որի բնակիչները 7 տարին մեկ անգամ գնում են ուխտի, կտրում կանաչ անտառի տերևուտ ճյուղերը և անտառից մինչև վանքը, ծեղքից ծեղք տալով, փոխադրում են վանքի կտորի վրա, ծածկում: «Թամբում» են ասում այդ գործընթացին, որովհետև, ըստ ավանդության, Եղիա Մարգարեն հող չի «հմլում» (ընդունում) համբարձել է և իր վանքի կտորի վրա միայն կանաչ տերև և դնում ծածկի համար, առանց հող գործածելու: Գյուղի մեջտեղը մեծ աղբյուր կա, որ պտտեցնում է գյուղի ջրաղացը: Ուխտագնացության ժամանակ մատաղած միսը եփում են 7 տարի առաջ կտրած և վանքի կտորի վրա «թամբած» ժառի ճյուղերն այրելով և ոչ մի ճյուղ չթողնելով հողի վրա կամ ոտատակ:

Արտկունք. 70 տուն հայ: Ունի ութը թաղ՝ Միջին, Չորեր, Ընկուզեք, Կուա, Յեղինկապագ, Միրանդիր, Կպովիտ, Դաղբրնին: Միջին թաղումն է գտնվում Ս. Յակոբ կամարակապ եկեղեցին ծոերի բուժչը: Արտկունքն ուներ դպրոց: Կանգնմեռ կոչված մի վայր ունի, ուր ըստ ավանդության, արտ ջրողը ջրտուքվորը արտ ջրելիս կրբնում է իր ջրտուքին և այդ դիրքով կանգնած նեռնում: Քիչ հետո կինը հաց է բերում և կանչում մարդին հաց ուտելու: Մարդը չի գալիս: Կինն ստիպված է լինում գնալ արտի մեջ, իր մարդու մոտ, տեսնի, թե ինչու չի խոսում: Մարդը ջրտուքին կրբնած հավասարակշռությունը կրոցնում, ընկնում է գետնին, որի համար վայրը Կանգնմեռ (կանգնած նեռնոյն) է կոչվում:

Ըստ ավանդության, Արտկունք գյուղը հիմնադրել են յոթ եղբայրներ, որոնք գյուղատեղի փնտրելով եկել են այդ անտառուտ վայրը, հանդիպելով անտառի մեջ մի մատուցի, որոշել են այդտեղ կառուցել իրենց գյուղը և կառուցում են, ապա սպիտակ սարից մեծ առու հանում և առատ ջուր հասցնում հիմնական գյուղին: Մի օր հանկարծ առուն ցամաքում է, փոքր եղբայրն ուղարկում են ջուր բերելու: Փոքր եղբայրը Սպիտակ սարի ստորոտին մոտենալիս նկատում է, որ երկու

«ջանավարներ» (վայրի կենդանիներ) կովում են ջրանցքի մեջ և առյունվա եղած, ջուր կտրած, իրարից չեն բաժանվում: Փոքր եղայրը քաշում է իր դանակը, մոտենում այդ կենդանիներին, կտրում նրանց ականջները և երկու զազանները սարսափած, կաղկանձելով փախչում են: Փոքր եղայրը ջուրը կապում է ջրանցքի մեջ, չորս ականջները ծեղթին վերադառնում գյուղ և մեծ եղբօրը պատմում, թե երկու «կատուներ» մտել են առու, կովում են, ջուրը կտրել են իրենց մարմիններով և թափած հողերով, ինչն էլ կտրեց նրանց ականջները, նրանք փախան գոռալով, ահա չորս ականջները:

Մեծ եղայրը, որ աշխարհ տեսած մարդ էր, այդ ականջները տեսնելով զարմացած ասում է. (Դու կտրել ես ոչ թե կատվի, այլ մի առյուծի և մի վագրի ականջները) «Եթու ու պլընգը անկըզնին ըս տու գդրը»:⁴⁴

Արտկունքի վայրերի անուններն են Մազարա, Սմնադ, Աղենծիկ, Յորասկ, Ամուց Զոր, Փալավուզիկ, Կարթակ, Ծոտիկ, Ազդարնիկ, Կոմա, Դարմո (Դարմոյի գոմ), Պարադոզ, Զարդուզ, Ասոտալեն և այլն:

Պերմ. 150 տուն հայ: Ունեն դպրոց և մեծ կամարակապ երկու շեն եկեղեցներ Ար. Գևորգ և Ար. Աստվածածին: Պերմ գյուղը շինված է Բուրկանք կոչվող անտառուտ սարի ստորոտում: Այդ լեռան վրա կան մանր-մանր հայկական և քրդական գյուղեր: Պերմը հնում մեծ է եղել:

Բացի. 30 տուն հայ, ուներ կամարակապ եկեղեցի: **Բացի** գյուղին մոտիկ կա իին անարիկ բերդ, որի ավերակները մնում են:

Արխունտ. 50 տուն հայ, երկու տուն քուրդ, ուներ կամարակապ, բայց քանդան ենթակա եկեղեցի: **Արխունտն հայտնի է իր աղիանցերով,** որոնք հեղուկ վիճակով առատահոս են, այդ հեղուկը պղինձներում (կաթսա) եփում են և ստանում մաքուր սպիտակ աղ ու սպառում: Թուրքական կառավարությունը չէր մշակում, այլ տեղացիները «աղիանատերեր» աղիանցի տերերն են գործածում:

Սևիթ. 11 տուն հայ, ուներ մի վանք **Սևիթի** կամ **Սևթաս** մասում, **Սևիթ** անունը, ըստ ավանդության, ծագել է նրանից, որ Ար. Մամասի այդ ուխտի ժամանակ երեք եղնիկներ (Սե-Վիթ) անտառներից և սարերից ինքնակամ գալիս են այդ վանքի առաջ իրենց սիրուն գլուխները երկարացնում, որ կտրեն մատղեն Սե- Վիթ վանքի համար, որի պատճառով գյուղը կոչվեց **Սեվիթ** (երեք եղնիկ), իսկ եկեղեցին՝ **Սեվիթի** մամաս կամ **Սևթաս** Մամաս, Սև թա՛ Սուրբ (ս.) **Մամաս, Սև թաս Մամաս:**

Սաղտուն. 110 տուն հայ, ուներ կամարակապ, բայց ավերակ եկեղեցի, գտնվում է Խուլբա ջրի ծախս ափին, գետից 4-5 կմ հեռու,

Ներքըկի մոտ: **Սաղտուն** անցյալում ավելի մեծ գյուղ է եղել, ունեցել է դպրոց:

Շուղեր. 120 տուն հայ: Խուլբի ամենահարուստ, գեղեցիկ պարտեզներով շրջապատված գյուղ: Ունի կամարակապ եկեղեցի գյուղի արևմտյան մասում, կոչվում է **Ար. Մարծաք:** Քրդերեն այդ գյուղին ասում են **Շառլեք:**

Ուաքա. 5 տուն հայ, կողքին իին քաղաքի ավերակ և իին գեղեցիներ, որոնց ավերակների մասին գրում է Գ. Սրվանձտյանը իր «Թորոս Աղեար» աշխատության մեջ:⁴⁵

Փառկա. 100 տուն հայ, 1895թ. ունեցել է 400 տուն հայ, (տես «Արագս» գր. և գեղ. հանդես, 1895թ., էջ 85, Ս. Պետերբուրգ), որոնք կոտորածի և գաղթման հետևանքով մնացին 100 տուն, իսկ 1915թ. բոլորովին ոչնչացան կոտորածի ընթացքում:

Արսեկ. 20 տուն հայ և 10 տուն քուրդ:

Բահմտա. 58 տուն, որից 28-ը հայ: Բահմտան 1895 թվականին ունեցել է 100 տուն հայ, Յոդա՝ 8 տուն հայ:

Թիախս. 60 տուն հայ: **Շուղեր կամ Շառլիքից** հետո ամենագեղեցիկ գյուղն էր:

Դառաշ. 40 տուն հայ: Տանձաստան էր, որից և Տանձ անունն է ստացել:

Տանձ. 4 տուն հայ, 65 տուն քուրդ:

Շեխիամզա. 110 տուն քուրդ:

Փոսա. 35 տուն քուրդ, որից 4 տուն հայ:

Բիրզպիա. 12 տուն քուրդ:

Սնդա. 30 տուն քուրդ:

Փարզք. 12 տուն քուրդ:

Սամըկան. 60 տուն քուրդ:

Ինիկա կամ Ինըկա. 70 տուն քուրդ:

Մալա Մլբե. 55 տուն քուրդ:

Կոտրնի կամ Կոտորնի. 20 տուն քուրդ:

Գիլանի. 32 տուն:

Սինոռ. 23 տուն քուրդ:

Շեշտեր. 20 տուն քուրդ: Այդ գյուղն ուներ կամարակապ կիսաշեն մի եկեղեցի **Շեշտերի** հողերի Զավիա Դերե (եկեղեցու կալվածք) էին կոչվում, որից երևում է, որ այդ գյուղը հայկական է եղել և պատկանել է եկեղեցուն:

Խայսեր կամ Կայսեր. 15 տուն: Այս գյուղը կալվածքն էր Սիեի Ամար կոչված մի քուրդ աղայի, որը հայտնի էր Սասունում որպես բռնակալ և աղդեցիկ, ինչպես նույն Խայսերի թոռ Սլո կոչվածը:

Զաջաս. 50 տուն քուրդ: Այս գյուղում նույնպես կար մեծ կամա-

րակապ, բայց ավերակ եկեղեցի: Այդ գյուղը պատկանում էր Ալոյե Մալա Խոյի հայտնի քրդին:

Հիս. 15 տուն քուրդ:

Գյանջը Բամիա. 7 տուն քուրդ:

Շեխըկա (նը). 30 տուն քուրդ: Բառացի նշանակում է շեխեր, հոգնակին հայերեն «եթ» գրաբարյան մասնիկով, որ տվյալ շրջանի քրդական լեզվի, հատկապես անունների մեջ է պատահում, որը ցույց է տալիս հայոց լեզվի ազդեցությունը քրդերենի վրա և այդ գյուղերի նախկինում հայկական լինելը, որ հետագայում հայերի անհետացումով դարձել են քրդական գյուղեր: Ընանաք կամ Ընանք՝ 7 տուն, որից 4-ը հայկական:

Միր Ջաջի. 8 տուն քուրդ: **Գրեխոխե.** 30 տուն, որից 8-ը հայ: **Թարը.** 2 տուն քուրդ: **Ալոխ կամ Սլոք** 5 տուն քուրդ: **Մալա Բադե.** 150 տուն քուրդ: **Գառախիլ.** 5 տուն քուրդ: հայտնի ավազակ Նահմոյե Ասիի գյուղը: **Կանիա Պամու (Բամբակի աղբյուր).** 12 տուն քուրդ: **Շեղկանք.** 40 տուն քուրդ: Ունի կամարակապ մի եկեղեցու քանդված շենք: **Դոդիկ.** 8 տուն քուրդ: **Ոզան.** 7 տուն քուրդ: **Չախար.** 12 տուն քուրդ: **Նավոռ.** 15 տուն քուրդ: **ճամ.** 12 տուն քուրդ: **Գոման.** 100 տուն քուրդ: **Ներջըզ.** 4 տուն քուրդ: Այս գյուղի տեղը, ըստ Դ. Ակինյանի, **Թղիմար** պատմական հին քաղաքի տեղն է:

Աստղանբերդ-Մի բերդի ավերակ է, բնակչ չունի: Ըստ Գ. Արվանձտյանցի՝ դա պատմական **Աստղանբերդն** է:

Խիանքի տեր քուրդ իշխանն էր Սլեման աղան, որ միաչքանի էր և թոռ Սլո էին ասում, ուներ իր կալվածքները և որպես պետական պաշտոնյա նստում էր **Փասուրում:** Խիանքի հայերի 1915թ. կոտորածի կազմակերպողը և անձամբ դեկավարողն է եղել Միերի Ամարի հետ միասին:

ԽՈՒԼՔ ԿԱՄ ԽՈՒԼՓ

Խուլքի սահմաններն են՝ հյուսիսից Միմն կամ Կուրտըզ լեռան արևմտյան լեռնաշղթան՝ Խոզմոն գագարով, արևելքից Խիանքը, հարավից Խաղալիկի և Ալիվանի դաշտը, արևմուտքից՝ **Գենջի,** Լճայի և **Յավետիկի** շրջանները, որոնք Սասունի մաս չեն կազմում, կից են: Խուլքի գլխավոր կենտրոնն է **Արտուշենը,** որ գտնվում է այդ շրջանի հյուսիս-արևմտյան ծայրին և **Գենջի** սահմանի վրա:

Արտուշեն. 150 տուն մեծ մասը դմիկ գագաներ (քրդական մի ցեղ) են, ապա թուրքեր և հայեր: **Արտուշեն** հնում մեծ քաղաք է եղել, կան

և ավերակները: Ունի մի կամարակապ և մեծ վանքի ավերակներ: Թուրքերն ունեն դպրոց, իսկ դմիկներն ու հայերը չունեն: Արտուշենի վայրը գեղեցիկ դաշտավայր է:

Արտուշեն անունը տվել են, որովհետև ամբողջ շրջապատով արտ ու շեն է: Ըստ ոմանց **Արտաշի շեն** է, Արտաշեն թագավորի անունով:

Ընձքար. 350 տուն հայ: 1015 շունչ: Ունի ինը թաղ՝ **Մսքրծոր,** Բանոկ, Ցուրտանակ, Վանք, Զնա թաղ, Սազրեր, Խեցեր և Ոմրիկ: **Ընձքար** գյուղում է գտնվում **Ընձքար Սր.** Գևորգ հոչակավոր ուխտատեղին, ուր գնում էին ուխտի բոլոր սասունցիները: **Ս. Գևորգի վանքի** դիմաց մարմար քարով սալահատակված էր, իսկ գերեզմանը բեմի տառածն էր սպիտակ մարմարե գերեզմանաքարով: **Ընցքրա Սր.** Գևորգը ընդհանուր ուխտատեղի էր և քրդերի համար, որոնք մեծ պատրաստությամբ էին գալիս ուխտի: Ուխտի օրերին **Փասուրից** 10-12 զավթիա (ոստիկան) էին գալիս, որպեսզի բազմաթիվ այդ մարդկանց մեջ կարգ ու կանոն և ապահովություն լիներ: Նոկա եկեղեցին սյուն չուներ, մի աչք ուներ շենքը երկու խորանով, երկուան էլ կամարակապ: Եկեղեցու առաստաղում «Փարզի պես բոնտիր գեր», - ասում է Արքինը նկարագրելով արձագանքող սափորները:

«Յըր դերդրնին ու վարտարեդինին զկարտին խրնգում գնցներ իինկ, թա տու գասեր զանգուագնին է գգարգըն» (երբ տերտերն ու վարդապետները կարդում էին, զրնգուն էր լցվում մեջը (եկեղեցու), կարծես թե զանգակներն են հնչեցնում):

ԽՈՒԼՔ

Բանասեր Գ.Արվանձտյանցը իր «Գրոց ու Բրոց» աշխատության մեջ, խոսելով **Ընձքար** գյուղի մասին, ուր նա անձամբ եղել է Դիարբերիրում եղած ժամանակ, ասում է, որ **Ընձքարն** ուներ մի նեղ անցը ունեցող քար, երբ չըեր կանայք մտնեն այդ անցքից և անցնեն կարող լիինեն հյոյ մնալ (էջ 28):

Խավանաբար **Ընց-քար,** անցքար, այդ միջից անց-նելիք քարի անունով **Անցք-քար** կամ **Ընցքար** է կոչվել:

Գեղրվան. 80 տուն հայ: Ուներ մի վանք Սր. Ստեփաննոս անունով. կամարակապ հին շենք և շեն ու օգտագործվում էր: Ուներ դպրոց: Կյուղի մեջ կային Սր. Գևորգ, Սր. Թուխմանուկ, Սր. Սարգիս լուսունները: **Գեղրվանի** և շրջակա գյուղերի 1915 թ. կոտորածը կատարել է **Փասուրի** կայմակամ Ուսութ թեկը: **Գեղրվանում** կա մի մեծ քարանձավ, որ կոչվում է **Փրփրաղբրան** զաղեն, ուր պաշտպանվել են

մի քանի տասնյակ գեղրվանցիներ, որոնք 1916 թվականին ոռուսական բանակի Մուշը գրավելու ժամանակ գալիս են Մուշ և ազատվում:

Աիրոնք. 80 տուն հայ: Ըստ «Արաքս» գր. և գեղ. ամսագրի 1895 թ. էջ 85-ի տվյալների՝ այդ ժամանակ եղել է 200 տուն: Ուներ կամարակապ և մեծ եկեղեցի՝ կաքավների զարդարանդակներով: Եկեղեցու շենքը սրբատաշ քարերով և «քարուկրով» էր շինված:⁴³

Աիրոնքում կար Դայոց Միացյալ Ընկերության ծախսերով պահվող մի դպրոց: Դպրոցի համար հատուկ շենք էր կառուցել տվել Սշո Ա. Կարապետ վանքի վանահայր և 1915թ. Մուշի առաջնորդ. Աիրոնք գյուղացի Վարդան վարդապետ Դակորյանը: Գյուղի մեջ կար երկու մեծ աղբյուր՝ մեկը վերին, մյուսը՝ ներքին: Սասունի ամենահարուստ գյուղերից մեկն էր Աիրոնքը, գեղեցիկ երկիարկանի տներով: Գյուղի վերևուն կային Արքարեր, Սատանի քիր ու Սարբանդա գած կոչված գագարները անտառուտ վայրերում:

Եղնիարաբերդ. անունով մի բերդի ավերակները կան այդ գյուղին կից, որ ըստ ավանդության, Եկին, Կեկին, Ֆիլին անունով երեք եղբայրներ են կառուցել, թե այդ բերդում գանձ կա թաղված, սակայն որքան փնտրել են, պեղել, դեռ չեն գտել:

Թիուք. 30 տուն հայ: Ուներ կամարակապ և շեն եկեղեցի Ար. Սարգիս անունով, կոչվում է Շիուա:

Գասկե. 101 տուն, որից 50- հայ, 51-ը՝ քուրդ:

Գրեմորե. 8 տուն հայ, 1895թ. եղել է 30 տուն (Արաքս, 1895 թ.):

Շեն. 60 տուն քուրդ: Անդրկի ուղիղ արևմուտք, մի գեղեցիկ դաշտի արևմտյան ծայրին:

Կապրնիճ. 3 տուն: Կապրներ նշանակում է Խուղեր, հյուղեր:

Խրոճ. 37 տուն, որից 7-ը հայ, 30-ը քուրդ: Թիախսա. 90 տուն, որից 10-ը հայ: **Քեւ.** 48 տուն, որից 3- հայ: **Կակուաս.** 30 տուն քուրդ: Արխադին. 42 տուն քուրդ: Թաղանառուալ. 15 տուն քուրդ: **Դմլկեր.** 70 տուն քուրդ: Կրման. 90 տուն քուրդ:

ճնար. 30 տուն քուրդ: Մազալե. 20 տուն քուրդ: Պապեջանիս. 25 տուն քուրդ: Սաղմեկան. 12 տուն քուրդ: Տուտերվան. 30 տուն քուրդ: Շօրվան. 20 տուն քուրդ: Խարամ. 8 տուն քուրդ: Խոշրկան. 5 տուն քուրդ: Բոզկան. 15 տուն քուրդ: Կըրնտիք. 10 տուն քուրդ: Պերոկ. 10 տուն քուրդ: Խադարան. 100 տուն քուրդ: Գելիե մինար. 30 տուն: **Ղեւեք.** 42 տուն: **Սոսրտո.** 10 տուն քուրդ: Ջարբաք. 8 տուն քուրդ: Գելիե մսուր. 40 տուն հայ, 40 տուն քուրդ: Ունի երկու եկեղեցի Ար. Անթանիա և Ար. Կիրակոս: Երկուսն էլ ավերակ: **Դուտերիկ.** 50 տուն քուրդ: Բաբեջան. 30 տուն քուրդ: **Խուչ.** 30 տուն քուրդ: Թլմին. ավերակ գյուղ, ուր բնակիչ էլ չկա: **Լաճըկան.** 40 տուն քուրդ: Գելիեգանըման. 19 տուն, միայն 2- քրդական: **Գելիեմսուր.** 28 տուն, որից 7-ը

քրդական: **Դալավակածե.** 22 տուն, որից 15-ը քրդական: Վարչական բաժանմանը այս երեք գյուղերը մտնում են Խուլքի շրջանին մեջ: Այս երեք գյուղերը տերիտորիալ ծևով Խուլքի սահմանում են ընկնում, բայց վարչականորեն երեքն ենթակվում են **Շատախին՝ Տափլքի** կայսարակամին: Ի դեպ, պետք է ասեմ, որ այդպիսի անբնական բաժանմներ Սասունում սովորական էր և մի նպատակ էր հետապնդում բաժանել իրարից Սասունի գյուղերը, տարբեր վարչական մասերի կցելով, որպեսզի ուժեղ միավորումներ այդ շրջաններում չգոյանան և հեշտ լինի զապել նրանց և կառավարել:

Խուլքի շրջանին կից, բայց **Յավետիկ** կոչված շրջանի գյուղերից են հետևյալ գյուղերը, որ երբեմն Խուլքի վրա էին հաշվված:

Մելիքան (մելիքներ և նշանակում) 120 տուն քուրդ, որտեղ նստում էր մյուղիրը: **Մեղախ.** 100 տուն քուրդ: **Խամըկան.** 60 տուն քուրդ: **Դայըկան.** 30 տուն: **Մաշտակ.** 30 տուն հայ: **Թըլքը.** 16 տուն, որից 10-ը հայ: **Յաջանա, Խոխան, Սատիկ,** Գառըկան, **Շեյնեբոբան, Պինին, Յըլըկ** (խոր զավակ է նշանակում) և **Չըռըկ:**

Խուլքին սահմանակից և հարավ արևմտյան մասում կա Լճայի շրջանը **Լճա** գլխավոր կենտրոնով, ուր նստում էր կայսարակամը:

Լճայում, Շամշան (350 տուն) և **Յարբախն** (50 տուն) հայկական գյուղերին մոտիկ, **Անթախ** (80 տուն) քրդական գյուղին մոտիկ, **Անթախ** կոչված սարի մի բարձր ժայռի վրա կառուցված է **Խուլքի Ար.** Առարելոց վանքը, որը ուստատեղին էր, Խուլքի և Լճայի շրջակայի հայերի համար: Կամարակապ մեծ վանքը ուներ զանգակատուն: 1915թ. այդ վանքի վանահայրն էր Սասունի Յեղին գյուղացի Կահան վարդապետը, որ Սշո առաջնորդարանի որոշմանը **Սշո Ար. Կարպետ վանքից**, որի միաբանն էր, ուղարկվել էր այդ վանքը, ուներ 60-70 աշակերտներով մի դպրոց, առանձին տնտեսություն, որով պահում էր այդ վանքը:

Շամշան և **Յարբախն** հայկական գյուղերն են ունեին կամարակապ եկեղեցիների ավերակներ: Որանցից հարավ կար Կանիա Սպի (Սպիտակ աղբյուր), որից սկսում էր դեպի հարավ փոքր Սլիվանի դաշտը:

Էդինակի բերդը⁴⁴ (Կալա Էդինակ) Սասունի Խուլքի շրջանի **Շեն** գյուղից դեպի Փատուր գնացող ճանփի վրա է գտնվում. **Շենից** 10 կմ չափ դեպի Փատուր:

Էդինակի բերդը գտնվում է մի բլրի գագաթի վրա: Բերդի կողքով են անցնում **Շենիկից**, Թարխուչից և **Խոզմոն** սարից հոսող ջրերը, որոնք բերդի մոտ Խուլքա ճամ են կոչվում: Բերդը գետի աջ ափին է: Խուլքից դեպի Փատուր գնացող ճանփարից **Էդինակի** բերդի կողքով է անցնում: Բերդի տեղը մոտիկ է **Գոլա Ների** (Վայրիների այժ) կոչված նեղ կիրճին, որի վրայից թռել է վայրի այծը, անունն էլ մնացել է **Գոլա**

Ների: Այդ բերդի տիրոջ անունը էկին է եղել, որ ունեցել է երկու եղայր՝ մեկը Ֆիկին՝ Կանդալա Հեշինի տերը, մյուսը՝ Կիկին՝ մեծ եղայրը, որին պատկանել է Ռախման Սարի բերդը: Էկին, Ֆիկին, Կիկին երեք հայ իշխաններ են եղել Սասունի Խովը ու Խիանի տերերը:

Եղինակի բերդի պատերը քար ու կիր են (քըլս ու ջըլս), կլոր, բրգաձև, ոչ անկյունավոր: Կանգուն մնացած պատերը հասնում են երկու մետր բարձրության: Բերդի վրա ոչ ոք բարձրանալ չի կարող, ասում են, որ նրա ճամփան գետի կողմից է եղել, իսկ գետը, դարերի ընթացքում խորանալով, բերդի մուտքը մնացել է բարձր ժայռածորի կողերի մեջ: Բերդի չորս կողմերը խորխորատ է և ճամփա չունի, անմատչելի մի զագաք է: Բերդի պատերը բոլորը սպիտակ են երևում, «կաք ու կիր» են.- ասում է 96-ամյա Յակոբը:

Կանդալա Հեշինը Ֆիկին եղեղոր բերդն է, որ գտնվում է Սասունի Խիանի շրջանի Ակրոնք գյուղի հողի վրա: Եղինակի բերդից դեպի Փասուր, դարձալ Խովքա ճամ գետի աջ ափին: Արևմուտքում և հյուսում գետն է հոսում, արևելքում դուրս է, հարավը լեռ ու ժայռոտ: Բերդի ետևի կողմով անցնում է Փասուր-Շեն-Մուչ գնացող ճանապարհը: Կանդալա Հեշին բերդը սև քարից է կառուցված: Գետի կողմը նայող պատերը 2,5-3 մետր բարձր են, իսկ ճամփի կողմը պատերը քանդվել և գետնին են հավասարվել: Բերդի շուրջը ցանցառ ծառեր կան:

Ռախմանա սարի բերդը պատկանել է մեծ եղբորը՝ Կիկինին: Բերդը գտնվում է Ռախման Սարի գագաթին: Սարի ստորոտին մոտիկ գագաթից 7 կմ ցած անծայր մի քարայր կա, «ուր ժամերով գնացել ենք հետքը շենք գտել», - ասում էր Յակոբը: Եղել է դեպք, որ մարդիկ կորել են քարայրում և դուրս չեն եկել: Բերդը կրաքարից է շինված, սպիտակագույն է: Բերդի շուրջը անտառուտ է: **Փասուրից Ֆարխին** (Տիգրանակերտ) գնացող մայրուղուց հինգ կմ հեռու Ռախմանա Սարի ստորոտից է անցնում Խովքա ճամի ջուրը:

Տավրոս լեռներից մինչև Խալդին-դադ լեռները և Ազնվաց Զորից մինչև Աշմուշատ (Արշամաշատ), Սասունի տասը շրջաններում քաջանաքիվ բերդեր, որպես քարել լեզուներ, մեզ պատմում են Սասունի լեռնային Արմենիայի կենտրոնի կատարած պատմական դերը, որն իր արտահայտությունն է գտել հայ ժողովորի «Սասունցի Դավիթ» եպոսում և այս լուր վկաների բերդերի մեջ, որոնք անխորտակելի պատվարներ են հանդիսացել Ասորեստանի, մեղացիների, արեմենների և հետագա պարսիկ, արաք, մոնղոլ ու բուրք զավթիչների դեմ:

«Սասու» և «Զուզա» պատմական բերդերը, որից առաջինը իշխվում է մ.թ.ա. 736թ., Ասորեստանի Տիգլաք-Պալասարի արշավանքների և բողնված արձանագրությունների մեջ, իսկ Երկրորդ Զու-

զա, որ իշխվում է Տիգրա բերդի հետ միասին, Աքեմենյան իշխանության բազավոր Դարեհ Ա Վշտասայանի արշավանքների ժամանակ (522-519 թթ. մ.թ.ա.) Բիհիստունյան կամ Բիսիթունյան երեք լեզվան արձանագրության մեջ, որպես Արմենիի ամենահզոր բերդերը, մեր կարծիքով և վերոհիշյալ պատմական փաստերով, Սասուն կամ Դավիթի բերդ և Սուսա (Չուզա) կամ Սուսանց բերդերն են, որոնք գտնվում են բուն Սասունի՝ Քոզկանի, Քաղքիկի և Սասունի Շատախի Տափըկ գյուղի մոտ և իրենց կառուցվածքներով, ավերակ վիճակում իսկ, ապացուցում են իրենց անցյալի հզորությունը՝ որպես պաշտպանական վայր դարձնելով Սասունը:

ԽԱՐՁԱՆ ԿԱՄ ԽԱՐՁԱՆՔ

Խարզանքը Սասունի ամենահարավային շրջանն է, որից հետո սկսվում է Միջագետքը: **Խարզանքի** սահմաններն են հյուսիսից Խարզողի կամ Յազզոյի և մասամբ Մոտկանի շրջանները, արևելքից Մոտկանի հարավային մասը, հարավից Քշերիկի և Սլիվանի դաշտերը, իսկ արևմուտքից Խիանի մի մասը և **Ֆարխինի** հյուսիսային մասը: Այդ շրջանի կենտրոնն է Զոխը:

Պրոֆ. Գր. Ղափանցյանն իր «Ուրարտուի պատմություն» աշխատության 17-րդ էջում գրում է. «Ոեն մինչև հինա էլ Խարզանի շրջանում (Սղերդի մոտ) ապրում են քրեթեր, որոնք իրենց «Խալդան» են կոչում» (21 գյուղ են), այստեղ կաև «Խալդի դաշ» սարը.⁴⁵

Զախ 200 տուն հայ և քուրդ խառն, որտեղ նստում է կայմակամը, ուներ եկեղեցի փայտածածկ և դպրոց:

Մլաֆան. 400 տուն հայ և քուրդ: **Մլաֆանում** մյուղիր էր նստում: Ուներ մեծ կանարակապ եկեղեցի, բայց ավերակ: Մլաֆանը հայտնի է իր աղի հանքերով, որոնք հեղուկ վիճակում են և գոլորշիացնելով ստանում են մաքուր սպիտակ աղ մեծ քանակությամբ:

Ողվան. 400 տուն, որից քիչ քրեթեր են, մյուսները հայ և ասորի: **Ողվանը** Խարզանի երկրորդ կայմակամանիստ գյուղաքաղաքն է: Ունի Սար Գորգիս անունով եկեղեցի շեն ու կանարակապ, որի ներսում և դրսում խորան կա:

Յոպե. անունով նշված է Յերողոտի աշխատության մեջ: 50 տուն հայ: **Յոպ** կամ **Յոպե** գյուղի մոտն է մի հին քաղաքի ավերակ, որ պատմական հին քաղաքի ավերակն է **Յիոպե** անունով: **Սղունտ** գետի ձախ ափին Զոխից 15 կմ հեռավորության վրա:

Բգեղիկ. 60 տուն հայ: **Ղըբա**՝ 40 տուն ասորի և հայ:

ԲԵՐՈՒ. հայ, ասորի և քուրդ, տների թիվը հայտնի չէ:

Հասիհաս. ասորի և հայ, խառն գյուղ: Ունի կամար և շեն եկեղեցի:
Մարմարոնա. ասորի և հայ: **Փալոնի** կամ Խրաբ բաժառ (Ավերակ քաղաք) Արզն քաղաքի տեղն է:

ԶՈՒՂՈՒՐ. 30 տուն քուրդ: **ՇԵԽԻՀՈՆԵՍ** կամ Կատաշեն. հայ-քուրդ խառն գյուղ: **Թալիբա,** Կանի Բարազա (Վարազների աղբյուր), **Զաֆան** (քրդ.), **Զամիսատին** (քրդ.), **Շկավտա,** Բատրան, Գոլա Մասիս (Զեների աղբյուր), Բախրզա, Գրե Թալո, Ռաշե դարա, Նոր Գեղ, Սեվկան, Յարբալուզ, Նարե (Նաուալա), **Նեշվան,** Ներքին Բարզան, Վերին Բարզան, Թոժկան, Սոջան, Բարեր, Մըզե, Թոխ (Վերին, ներքին), Զիարեթ, Բլուանս, Յույար, Սյանըս, Զազնե. ունի աղիհանք: **Մամլայե.** ունի աղի հանք: Սղունդ, Յաշկադարան, Չառ և Զման. ունեն առաստ աղահանք: **Քուչալան,** Շերկան, Գոլայե, Ընգարըս, Յրորը, Զման, Սարտուտ (ծոտուտ), Տերճոն. ունի իին հայկական վանք: **Շարաֆկան,** Մերկան, Նաուալա, Տրոպ, Զոմանի. որ ուներ մի վանք՝ ավերակ է: **Բեռւադ,** Բըրահ. ուներ կամարակապ վանք քանդված: **Զուուայց** (**Զվահեգ կամ Զուվեյց**). հայ-քրդ.: **Զոխայտ.**⁴⁶

Սուսումանական կրոնի կենտրոնավայր, Ավղիսահարը հայտնի շեխերի պետն էր, որի գլխով երդվում էին («քը սարե շեխն Ավղիսահար»- Ավղիսահար շեխի գլուխը վկա):

Դիմսարք. հայ, Յաքամի. հայ Վերին և Ներքին: **Թոխա.** հայ-ասորի: **Այնխասր հայ-քուրդ:** Այնխասրը քուրդ բեկ Բշարի Չարոյի գյուղն էր: **Մարիք.** հայ-քուրդ: **Սահտրտու.** քրդ., Կալամարան (Օձաբերդ) քրդ., Ղադմա. քրդ. 40 տուն: **Գյոզալդարա.** 40 տուն հայ: **Բայսատուն.** 30 տուն հայ, **Մելիա.** հայ, Բաստոխ. անմարդաբնակ գյուղ: **Մազիհան.** անմարդաբնակ: **Զիուրկ.** 40 տուն քուրդ: Խնասր. եզրիական գյուղ, որի բնակիչներին 1896թ. կոտորեցին, մնաց անայի: **Զուշան.** քրդ., Դուսատակ. 60 տուն քուրդ, Դուշա և Միլախար. հայկական գյուղեր Սղունտա ջրի աջ կողմում, ունեցել են կամարակապ եկեղեցի կտուրները հետազայում փայտով ծածկած: **Խուրին.** հայ, Յաջըր. եզդ., Ավիսկ. եզդ., Խորըխ. քրդ. **Բիմեր.** 50 տուն հայ: **Կանի խուլլ** (ծակ աղբյուր) հայ. ունի երկու վանք ավերակ, Գրե Յասան. հայ, Նազդար. հայ, **Բերըկ.** քրդ., Կանի Մեմո. հայ, Սըրիի. հայ. **Բառնջ.** 60 տուն հայ, որտեղ նստում էր մյուլիիրը: **Բաջաֆթ.** հայ, Յարֆաս. հայ, Զալդակա. հայ, Խուլըկ. հայ, Դալա. հայ, Լիծըկ. քրդ., Ռաշըկ. քրդ., Մերկե Ռաջալ. հայ-քրդ., Դարարի. քրդ., Խիլկա. քրդ., **Մերինա.** հայ, Յաղիհադք. հայ, **Տապի.** հայ, Յզնամիր (Իշխանի գանձ) 60 տուն հայ, Թաղարի. հայ-եզդ., Կալիոկ. հայ, Բոլընդ. քրդ.. **Զըկընգ.** եզդ., Եղիների մեծի Բշարի Չոլո աղայի գյուղը: **Կալե Շեխ Բաժ.** իին բերդաքաղաք, պարսպապատ, որ այժմ էլ գոյություն ունի:

Հազզոյից 15-20 կմ դեպի հարավ: **Կենտրոնական գյուղ Զոխի բերդը** իին է, 1915թ. կանգուն էր:

Սասունի հարավ-արևմտյան սահմանի, **Գենջի** մուքասարիֆության մեջ մտնում էին երկու շրջան՝ **Բադկան** և **Բագրան**, (Խարլոզի մեջ), որոնք մշտապես շփում ունեին խուլքի հայերի հետ: Դրանցից մի քանի գյուղեր նշենք՝ Վերցնելով Մուշի առաջնորդարանի ցուցակից (տես դպրոցական տեսուչ Ուլթենի (ազգանունը չկա) ցուցակը՝ Յայստանի Պատմության բանգարանի ազգագրական բաժնում): Այդ երկու շրջանների՝ **Բադկան** և **Բագրանի** գյուղերը քրդական են, բացի Ռաբարից, որ հայկական է:

Քրդական գյուղերն են Խոչկան. 40 տուն, Ռշկան. 45 տուն, Յավիտան. 30 տուն, Մալխարզի. 15 տուն, Մամկա. 20 տուն, Գոավարելե. 32 տուն, Գոարշտալիե. 24 տուն, Կըրկըրիա. 15 տուն, Շարութկա. 25 տուն, Ախըտա. 50 տուն, Արաշկա. 24 տուն, Բանըկա. 100 տուն, Կառըտր. 6 տուն:

Բադկանի Վերոհիշյալ 13 գյուղերի քրդերը աճումը բարձրանում էին Սասունի լեռներն իրենց բազմաթիվ անասուններով և արածեցնում արոտներում, որի համար սասունցիների և բադրկանցիների միջև միշտ ընդհարություններ էին տեղի ունենում: Բադրկանը Գենջի մուքասարիֆությանն էր Ենքակա:

Մյուս շրջանը՝ **Բագրան**, որը բագրանցիներն են, մտնում է Խարլոզի կայմականության մեջ և ուղիղ Սասունի հարավում էր ընկում: **Բագրանի** գյուղերից են Շաուլիքա. 16 տուն, Մայիլտա. 7 տուն, Ջենքատ. 30 տուն, Շառըտա. 30 տուն, Չլըկա. 35 տուն, Թոլանի. 8 տուն և Ռաբար. 12 տուն: Ռաբար 12 տուն հայ, 84 շունչ: Թերևա սաայն նույն Ռաբարն է, որի մասին գ. Սրվանցտյանցն իր «Թորոս» Աղբար աշխատության էջ 374-ում հիշեցնում է. ուր կային հինգ եկեղեցներ:

Սասունի Վերոհիշյալ տասը գավառների վարչական բաժանումը բուրք կառավարությունն այնպես էր անում, որ նրանք իրարից կտրված և բաժան-բաժան լինեին, որի համար մի մասին կցում էր Մուշի մուքասարիֆության, մի մասին Բաղեշին, մի մասին Սղերտին, մի մասին Գենջին և **Փատուրին**, որպեսզի նրանք իրար հետ շատ չշփվեին: Բուն Սասունը, իր կենտրոնական գյուղերով, մի 50-60 տարի առաջ, դեռ մինչև այժմ ապողոներն ու հիշողներն են պատմում, կցվում էին Դիարբեքիրին, ուր 3-4 օր ճամփորդելով հազիվ էին հասնում, այնինչ Մուշը ընդամենը 4-5 ժամվա ճանապարհ էր բուն Սասունից: Այս «բաժանեա զի տիրեսցի» քաղաքականությունն էր, որ կիրառվում էր Թուրքիայում: Սասունի հարավային մասի բադկանցի, բադրանցի (Բագրանցի), Խիանցի և այլ գյուղերի քրդերին Սասունի լեռների ա-

բոտավայրերն եր հատկացվում, որպես այդ մասի «ամառային» բնակիչների, որպեսզի թափառաշրջիկ այդ քրերը տեր դառնային, «տեղավորվելին» Սասունում և ընդհարումներ առաջանային, ինչպես և լինում էր 1820-30 թթ. մինչև 1915թ. կոտորածը, երբ Սասունը մնաց առանց սասունցիների:

Սասունից դեպի հարավ հոսող ջրերը կազմում են երկու մեծ գետեր՝ Բարձմանի և Խազալիկի, որոնք իրար միանում են Սասունի հարավային ծայրին, Բահմդա և Կամհոկ գյուղերի մոտ, իսկ քիչ հյուսիս՝ Դահլըկ կոչված գյուղի մոտ Տալվորիկի ջրի ծախ ափից նրանց միանում է Ծովասարից Սասունի բերդի կողերով հոսող Կապասգետ և Կուսգետի իրար միացած Խաբլոզից անցնող գետը: Խազալիկ-Խովը ջուր գետերի վրա կառուցված է Փռա Գերքոն (Գերքոյի կամուրջ) քարաշեն, կամարակապ ամուր կամուրջը, իսկ վերոհիշյալ գետերից կազմված Բարձման-սուլի վրա Փռա Բարձման հոչակավոր կամուրջը:

Փռա Գերքոն (Գերքոյի կամուրջը) Խազալիկի ջրի վրա, Կամհոկ (քրդ.) գյուղի մոտ կառուցված մի քարաշեն կամարակապ կամուրջ է: Կամուրջը կոչվել է կառուցող Գերքոն վարպետի անունով և կամուրջը, որի վրա կա և նրա հիշատակարանը: Փռա Գերքոյի և Փռա Բարձմանի կառուցման քարերը նույն կարմիր գույնի քարեր են:

Փռա Բարձման (Բարձմանի կամուրջ) կամուրջը կառուցված է, ըստ ավանդության, Բարձման անունով մի վարպետի ծեռօթով, որից և նրա անունով է կոչվել: Փռա Բարձմանն ունի 50-60 մ երկարություն և այնքան լայն է, որ երկու մեծ ավտոմեքենաներ միաժամանակ ազատ անցուղարձ կարող են անել եզերքներով էլ մարդիկ անց ու դարձ կատարելով: Գետի մակերեսից կամուրջը 4-5 մետր բարձր է, կամրջի երկարության տակ հինգ գույքեր (սյուներ) կան: Կամրջի երկու ծայրերին, գետեցերների մասում երկու կամարակապ խցիկներ կան, որոնց մեջ երկու զինված պահակներ են մնում մեկը դեպի հարավ, մյուսը դեպի հյուսիս նայող լուսամուտով հսկելու համար: Բարձմանի կամրջի հիմնադրման մասին պատճենում է հետևյալ ավանդությունը. Բարձմանը իր կամրջի հիմքը գտնելիս, հաջորդ օրը գալիս է տեսնում, որ հիմք չկա, ջուրը տարել է: Այս բանը մի քանի անգամ կրկնվում է, մի օր էլ երազում տեսնում է մի ծերունու, որ ասում է հիմքում մի մարդ կամ կենդանի ողջ-ողջ պիտի դնել և պատը նրա վրա, այն էլ առավոտյան առաջին հանդիպող մարդու կամ կենդանուն: Բարձմանն առավոտյան աշխատանքն սկսելիս նկատում է, որ իր սիրած կինն ու որսի թագին գալիս են, հուզվում է, բայց նկատի ունենալով, որ շունն առաջ է գալիս, մի քիչ ուրախանում է, որ գոնե շունը «կզոհվի»: Սակայն հաց բերող կնոջ ոտքին քար է կացում: Զեռքից կերակրի ամանն ընկնում է, և

շունը գրաղվելով թափած կերակրի լպստելով, ուշանում է, իսկ մինչ այդ կինը հասնում է ամուսնու մոտ: Բարձմանը տիսրում է, կինը հարցնում է տիսրության պատճառը, մարդն ասում է իր կնոջը տեսած երազի մասին: Կինը թե մահը մահ է, ես էլ քու շինած կամրջին մատադ լինեմ, իսկ դու շինիր հավիտյան չքանդվող կամուրջը, ու քու աշխատանքը թող անմահ լինի:

Բարձմանը կնոջը ողջ-ողջ դնում է կամրջի հիմքում ու սկսում հաջող կառուցել կամուրջը, որի պատերի բարձրացման հետ իր աչքի առաջ բարձրանում է կնոջ չքնաղ արձանը կամրջի հարավային ճակատի մեջ, որի կրծքերի պատուեներից կարնաղբյուր է հոսում, անցող-դարձող ճամփորդներն էլ իրենց ծարավն են հագեցնում: Բարձմանի վարպետական տաղանդի մասին պավանդաբար պատճում են, թե նա աշակերտն է եղել Դիարբեքիրի պատմական կամուրջը կառուցող վարպետի և նախքան այդ կամրջի կառուցումը խնդրել է իր վարպետին, որ նույն նախագծով քոյլ տա իրեն Բարձմանի վրա կամուրջ կառուցելու, խոստանալով Դիարբեքիրի կամրջին անհրաժեշտ բոլոր քարերը ջորիներով ուղարկել Բարձմանից Դիարբեքիր: Վարպետը համաձայնվում է ու միասին սկսում են կառուցել: Երբ Բարձմանն իր կամրջի վերջին քարն է դնում, իր վարպետի ջորիների քարավանն է գալիս քար տանելու: Բարձմանը միայն մի քար է ուղարկում, քարավանը դատարկ ետ վերադարձնում: Բարձմանը գրում է. «Զեզ մի քար է միայն պակասում»: Իրոք, Դիարբեքիրի կամրջի համար միայն մի քարի պահանջ է եղել, սակայն վարպետն իր աշակերտին քննելու, ստուգելու համար փոխանակ մի ջորի ուղարկելու քարավան է ուղարկում: Երբ ուսուցիչ-վարպետը տեսնում է քարավանի դատարկ վերադառնալը, միայն մի քար ու իր աշակերտի երկտողն է ստանում, շտապ մարդ է ուղարկում և Բարձմանին կանչում իր մոտ: Բարձմանը գնում է: Վարպետը հարցնում է, թե ինչու միայն մի քար է ուղարկել: Նա պատասխանում է Զեզ միայն մի քար պետք է պակաս մնացած լինի: Վարպետը տեսնում է, որ իր աշակերտն արդեն իրեն գերազանցել է, ավելորդ է համարում այլևս իր ապրելը և իր մուրճը տալով Բարձմանին, ինքնասպան է լինում:

Փռա Բարձմանի կամրջի մասին նախաքրիստոնեական պավանդության մեջ էլ է հիշվում: Երբ Գրիգոր Լուսավորիչը Տարոնում, Սր. Կարապետի վանքի տեղում հեթանոսական կենտրոնը քանդում էր, քրմերին կոտորում, Ղեմետը և Գիսանե պետերին սպանում և այրելով նրանց մարմինը, մոխիրներն էլ ուղարկում է «Փռա Բարձմանի» մոտ ջուրը թափել տալիս, մի կադ քուրմ գալիս խնդրում է, որ իրեն չսպանեն: Գ. Արվանձտյանցն իր «Գրոց ու Բրոց» աշխատության մեջ խոսելով այդ մասին, էջ 68-ում գրում է

«Լուսավորիչ ժողովեց դիւան լցեց զնդան,
Կաղն դեն եկաւ ասաց, յաման,
Զիս մի դներ մութք զընդան
Կեղնիմ վանքին եւ փոշեհան
Տանեմ թափեմ Փրե Բարձան
Մինչ օր Քրիստոս գա դատաստան»:
Փրա Բարձանի նասին սաստիցի ժողովուրոց շատ այլ ավանդու-
թյուններ էր պատմում և այժմ էլ պատմում են դեռ:
Փրա Բարձանին նոտիկ է Տիգրանակերտը (Մարտիրոսաց քաղա-
քը):

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԸ (ՄՈՒՅԱՐԿԻՆ, ՖԱՐԻԽԻՆ)

Աղջնիքի հարավային նասի մեջ էր գտնվում, ըստ Պլուտարքոսի, Տիգրանակերտ քաղաքը, որ «Տիգրանին հաճելի բան արած լինելու համար բազմաթիվ շինություններով գեղեցկացրին Տիգրանակերտ քաղաքը»:⁴⁵

Ըստ իին հումական աշխարհագրագետների տվյալների, Աղջնիքի այդ մասումն էլ «Մասիուս մի լեռնաշղթա կար, որ բաժանում էր մի բարձր լեռնագագաթ, դա Սասու սարն է և Մուշկի երկիրը (Սասուն, Մուշ)»:⁴⁶

Տիգրանակերտը, որ այժմ կոչվում է Ֆարիխին, կոչվել է նաև Մու-
ֆարկիին, Միաֆարիսին և Մարտիրոսաց քաղաք: Դա կառուցված է Տիգրան Մեծի (2-րդի) ժամանակ և գտնվում է Տիգրան 2-րդի ժամա-
նակվա պատմական Դայաստանի կենտրոնում Տավրոս լեռն հարա-
վային ստորոտում:

Տիգրանակերտը շրջապատված է զույգ պարիսպներով՝ մեկը մյու-
սից չորս մետր հեռավորության վրա: Յուրաքանչյուր պարսպի հաս-
տությունը մոտ երկու մետր ժեռ քարից շարած: Բաղաք մտնելու հա-
մար չորս դռներ կան պարսպապատ: Մեկը կոչվում է Աղբյուրի դար-
պաս, մյուսը՝ Ղալֆայի դարպաս, երրորդը՝ Դյուսիսային դարպաս
կամ Ֆարիհանդի (այդ կողմի շրջանի անվամբ) դարպաս, չորրորդը՝
Տիգրանի միջնաբերդը, իշխանական բերդը, մի ապառաժ բլուրի
վրա, որ և կազմել է բուն Տիգրանակերտը բազավորի գինվորական-
ների և պալատական իշխանների բնակավայրը ու գորանոցները:
Դարսպի մեջ իրարից որոշ հեռավորության վրա կան և քառանկյունի,
և կլոր բջջեր (բերդեր): Տիգրանակերտից գետ չի անցնում, ունի ե-
րեք աղբյուրներ հյուսիսային դարպասի դրսի մասում, հարավային

դարպասինը ներսում և մեծ աղբյուր է: Դրսի աղբյուրների ջուրը բեր-
վել է Ղալֆայի սարի ստորոտից, քաղաքից ոչ հեռու: Դրանք փաստո-
րեն ջրանցքներ են, որոնց ջրով շրջապատի դաշտն էր ջրվում: Պատ-
մում են, թե պատերազմի ժամանակ այդ ջրերը հոսեցնում էին երկու
պարիսպների միջի տարածությունում, ստեղծելով արհեստական օ-
ղակածեւ անանցանելի լիճ, «ջրապարիսպ»: Այդ կատարվում էր
պարսպից դուրս բնակվողներին ներս՝ միջնաբերդը ընդունելուց, տե-
ղափոխելուց հետո: Չորս դարպասները փակում և զիթքում (ծյութում)
էին, որ ջուրը դուրս չինուի:

Առաքելոց կամ Թարգմանչաց վանքը գտնվում է Սասունի Միմ
(Կուրտըկ) լեռան ծիրնկատարի հյուսիսային ստորոտում, **Մուշ** քա-
ղաքի հարավ- արևելյան մասում, Մուշից 3-4 կմ հեռու, մի բարձրու-
թյան տափարակ վայրում, որից երևում են Բերդակ և Արադ գյուղերը,
որոնց միջի փոքրիկ դաշտը Մշո դաշտի մի լեզվակն է կազմում, որ եր-
կարել է դեպի ծիրնկատար գագարի ստորոտը, դեպի Դավատվորիկ
գյուղը:

Այդ վանքը Սասունի թոռնիկյան բազավորության ժամանակ (ժ-ժ9
դդ.) եղել է կրոնական կենտրոն և բազավորների պանթեոն: 1073
թվականին նորուուանել Մամիկոնյան բազավորն իր հայրական գյուղը
Բերդակը տալով Առաքելոց վանքին, իր գերդաստանի համար պան-
թեոնի տեղ է ստանում այդ ժամանակվա վանահայր Պողոս Տարոն-
ցուց: Այդ գրված է «Սասունցի Ավետարանի» և «ճառընտիրի» մեջ, ո-
րը գտնվում է մեր մատենադարանում, կշռում է 32 կգ (տես ծեռագիր
նո. 7729): Առաքելոց վանքի եկեղեցու դուռը գտնվում է Դայաստանի
Պետական Պատմության թանգարանում, այժմ (1949թ.) Լինինգրադի
Երմիտաժում ժամանակավոր ցուցադրում հանարակված է:

Առաքելոց վանքում թաղված են Մովսես Խորենացին, Ղալիք Ամ-
հաղը, Սամբրե, Եզնիկ Կողբացին, Դավոր Մշեցին, Ղազար Փարպե-
ցին, Ասողիկը, Գլակա Եղբայր Եղիազարը, Պողոս Տարոնեցին, ճոր-
տուանել հայոց աղքան (արևելյան կողմ), Սահակ և Դամակասպ իշ-
խանները (հյուսիսային կողմ), որոնք խաչքարեր ունեն իրենց վրա:⁴⁷

Ստորև դնում ենք արձանագրություններ: Վերցված Յ.Ն. Սարգսյա-
նից:

«Եւ էն արձանագրութիւնք իւրաքանչիւրոցն այսոքիկ սկսեալ ի հա-
րաւոյ (Առաքելոց վանքի գերեզմանագրերից):

ա) Ի թշ՝ ՇԴԳ կանգնեցաւ խաչը ի բարեխաւտուրն ստեփի: նոնկանն
ննշեցելոց ի քս յիշ աղաւ. զմեղաւոր գԳործ նոնակ:

բ) Ի թշ՝ ՇԴԳ կանգնեցաւ խաչը ի բարեխաւտուրն տն Ղալիք Ամյաղը
փիլհատվիաի յիշեցեք ի քս աղաշեմ զմեղուցեալս Գեորգ-նոնակս յի-
շե...»:

գ) Պողոս վարդապետ հանգուցեալ ի քս յս (զոմանէ ասեն աւանդութեամբ թէ Տարօնեցին է):

դ) Տր Ղազար և տր Ստեփանոսի ի թթ: ԾՇ: Կանգնեցաւ խաչս և նորոգեցաւ խաչս և նորոգեցաւ սր. առաքեալքս ած ողորմի աշխատողաց սորա...»:

Ե) ... Եւ պատուական Պետրոս քահանայ որ կանգնեաց գխաչս, զայս ի բարեխաւասութիւն... ԾՇԲ զեսու գծողս.

գ) (Անգիր)

է) Ի թթ ՈՒԾ Թումա վարդապետ հանգուցեալ ի քս յս ի տր մեր:

ը) Ի թվականորն հայոց ԾՂ կանկ: (Ի կողմանէ)... Պետրոսի քահանահ և Կոստանդէ յիշեսջիք ի քս աղաչեմ և զգործողս... ի սու... ի նվարի...ժ. կա:

թ) Ի թՎԿ Յ ՈՒԾ Ես Խաչիկ որ գխաչս կանգնեցի փրկութեան հոգոյ իմոյ և ծնողաց իմոց յիշեսջիք ի քս աղաչեմ:

Ընդ մեց հինգերորդին և Վեցերորդին կայ միւս ևս անգիր: «Մենաստանս Առաքելոց կոչի և Գլածորոյ վանք, թերևս վասն խորանունդ ծորոյն որ է յաջմտ մենաստանին, իսկ ստուգութիւն անուանակոչութեանս է ի յիշատակարանի գրոցս այսպէս. Գրեցաւ սուրբ աւետարանս ի բուականութեանս հայոց ԶԵ-ի գաւառս, Տարօնոյ ի վասն Գլածորոյ ի դրունս սուրբ առաքելոցն, յառաջնորդութեան սուրբ ուխտիս Թաղենու Եպիսկոպոսին»: Այլ է ի նմանէ և Գլածոր վանք ի Վայոց ձոր գաւառի յաշխարհեն Սիլինեաց»:⁵¹

ԱՌԱՋԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Դրանք թվով տասը գեղաքանդակ խաչքարեր էին, որ դրված էին քարե պատվանդանի վրա: Ավանդությունը «Թարգմանչաց գերեզման» է կոչում այդ լուս հիշատակարանները: Նրանցից մեկի վրա ես կարդացի հայոց անպարտելի փիլիստիքի Ղավիր Անհաղի անունը:

Երկու փոքրիկ տապաններից մեկը Սովետս Խորենացու, իսկ մյուսը Սամբրե Վերծանողի տապաններն են: Մի դամբարան ս. Ղազար Փարպեցունն է: Այդտեղ քաղված են Սահակ և Դամագասպ իշխանները»:⁵²

Սր. Կարապետի կամ Գլակա վանքը կոչվում է նաև Սշո Սուլբան Սր. Կարապետ, որ գտնվում է Սշո դաշտի հյուսիս-արևմուտքում Երկարող Քարկէ կամ Իննակնյան լեռան հարավային, դեպի Սշո դաշտը նայող ստորոտի վրա, դաշտի տափարակությունից 3-4 կիլոմետր քարձոր, Սորդար գյուղի հյուսիսում և Կվարս ու Բաղլու գյուղերի միջև:

Եկեղեցու վրա կառուցված էին Երկու մեծ զմբեր խորանի կտուրից

բարձրացող և մի զանգակատուն Եկեղեցու դռան մասի վրա, որը շատ քարձոր էր ութք մարմարյա կլոր սյուների վրա կանգնած: Նրա մեջ կախված զանգերի ծայնը դողանքում էր Սշո դաշտի գյուղերի այն մասի վրա, որ գտնվում էին Արածանիի ծախափնյա դաշտում:

Վանքը պարսպապատած էր, ուներ Երկու դարպաս, մեկը դեպի դաշտ (հարավ.) Յավատամքի կողմը, մյուսը դեպի հյուսիս՝ լուսադրյուրի կողմը: Վանքի պարսպի ներսում, Խորաշեն կոչվող մասում կար Սր. Յարությունի մատուռը, ուր հեթանոսության ժամանակ, նախքան Յայաստանում քրիստոնեության ընդունվելը, հեթանոսական կրոնի օջախն ատրուշան է եղել և Ղեմետը ու Գիսանն քրնապետներն են պաշտամունք մատուցել: Ըստ Զենոր Գլակի՝ այդ վանքի առաջին վանահոր և Յովիան Սամիկոնյան կարողիկոսի «Տարօնոյ պատութիւն» գրքերի, քրմատունը Գրիգոր Լուսավորչի ծեռքով քանոված է և տեղն այդ մատուռը կառուցված:

Սր. Կարապետի Եկեղեցին կառուցված է 16 մարմարյա հաստ սյուների վրա, որոնց վրա էլ հենվում են Եկեղեցու 25 կամարները կազմելով Եկեղեցու կամար ծածկը, որի մեջ 1500-2000 մարդ էր տեղավորվում: Եկեղեցու դռան առաջ ճարմարյա սալահատակ էր, ընդարձակ և կիսաշրջանաձև մի տարածություն, որի շրջագծի վրա 1-2 մետր բարձր մարմարյա սյուներն իրար միանում էին Երկարյա ցանցաճաղերով: Վանքի խորանի աջ կողքին, Եկեղեցու մեջ առանձին մի մատուռ կար միայն Ս. Կարապետի գերեզմանի համար, ուր կանանց մուտքն արգելված էր կրոնական օրենքով և ուխտավոր կանայք մուտք չեին գործում այդ մատուռը, թէ չէ «կծուին» (կիսելագարվեին): Սր. Կարապետի վանքումն են բաղվել Մամիկոնյանք, Գայլ Վահանի, ինչպես և Սասունի բագավորության հիմնադիր Թոռնիկ Մամիկոնյանի աճյունները: Ըստ Արիստակես Ուտիհայեցի պատմիչի գրածի Թոռնիկը Փիլարտոսի դեմ մղած հաղթական պատերազմից հետո, դավադրությամբ սպանվում է և զլիսի Թասակը Փիլարտոսի հրամանով բերում են իրեն, որի մեջ, խնջույքների ժամանակ գինի էր լցնում և խմում, իսկ Թոռնիկի մարմինն այրել է տալիս և աճյունը բույլ տալիս տամել, քաղել Սր. Կարապետ վանքում: Փիլարտոս Անանոսը Մարաշի հայ իշխանն էր, որ ուզում էր Թոռնիկյանների իշխանությունը Ենթարկել իրեն:

Սր. Կարապետ վանքում կար ժառանգավորաց գիշերօրիկ դպրոց 60-80 աշակերտներով : Վանքի Վերջին վանահայրը Սասունի Ակրոնք գյուղացի Կարդան վարդապետ Դակորյանն էր: Յարուստ վանք էր, ուներ իր կալվածքներն ու բազմաթիվ անասունները (տողերիս գրողը 1900-1907 թվականներին սովորել է այդ վանքում): Նրա գանձարանն ու ծեռագործը 1916թ. նույն վանքի դպրոցի դասաստու Դակոր Ստեփա-

նյանը ազատել, փոխադրել է Եջմիածին: Զեռագրերից «Գավազանագիրք»-ը գտնվում է Մատենադարանում (Նո. 2901), որի հեղինակն է նույն վանքի լուսարար Կարապետ վարդապետը:

1915թ. Սշո Ար. Կարապետի վանքի միաբանությանը կոտորվում, իսկ վանքը թնդանորմերով քանդում են: Կոտորածից ազատվում են երկու ուսուցիչներ՝ Սկրտիչ Տ. Մկրտչյանը Սասունի Արքոնք գյուղացի և Դակոր Դանիելյանը Տարոնի Ջիարեթ գյուղացի, որի հայրը նույնպես Սասունի Արքոնք գյուղից է եղել, իսկ նայու մշեցի և ապրել են Ջիարեթում:

Ըստ Դակոր Դանիելյանի՝ ականատեսի պատմածի, 1916թ., երբ ուսուական բանակը գրավում է Մուշը ու Ար. Կարապետի վանքը, ինքը՝ Դակորը, Եջմիածնի կողմից նշանակված մի հանձնաժողովի կազմով մեկնում է Ար. Կարապետի վանք: Այդ հանձնաժողովի անդամներն են եղել Ավետիք Տ. Պողոսյանը, Բահատուր Բահատրյանը և մի ուրիշ սարկավագ, Դակորի անդամությամբ: Դակորը 15 տարի ապրած լինելով Ար. Կարապետ վանքում և աշխատելով որպես ուսուցիչ, մեղվարուց և հետո էլ վանքի «վերակացու» (ընդհանուր հսկիչ) և Ար. Կարապետի վանքի գաղտնի գանձարան-պահարանի վայրին տեղյակ մարդ եր: Պահեստները երկուսն են լինում. մեկը բուրքերի կողմից հայտնաբերված, իսկ մյուսը՝ որի մեջ են եղել գույքի խոշոր մասը, հանձնաժողովը գտնում է, երկու սայլերի վրա բարձում և տեղափոխում Եջմիածնի վանքը՝ ցուցակների հետ միասին: Այդ գույքի մեջ է եղել «Դերումի մի ավետարանը» և նույն վանքի «Գավազանագիրքը», գոված վանքի վարդապետներից մեկի Կարապետի ձեռքով: «Գավազանագրքում» գոված է նաև Տարոնի վերջին տարիների դեպքերի նկարագրությունը:⁵⁹

Ըստ այդ հուշերի, Ար. Կարապետ վանքի և կալվածքների հատակագիծը ինքը՝ Դայկ Դանիելյանն է Մակար Խարախանյանի՝⁶⁰ հետ գծել և ուղարկել Երուսաղեմ Սահակ վարդապետ Աստվածատրյանին: Վանքն ունեցել է երեք ընդարձակ կալվածքներ՝ «Վերին փագա», «Ներքին փագա» և «Վանից Չոր» կամ Միրաշ կուտա, որ ընդարձակ տարածությամբ անտար էր:

Վանքը 1914-15թ. ունեցել է 1500 ոչխար, տասներկու «լուծք» քաշող ուժ, յուրաքանչյուր լուծքը երկու գոմեշ և երկու եզից բաղկացած, ընդամենը 24 գոմեշ և 24 եզ լժքաշ, չհաշված կրու և այլ խոշոր եղբարակը անասունները: Վանքի թեմին էին պատկանում Խնուսը, Սանագերտը, Բուզանուխը, Մշո դաշտը, Վարդոն, ճապաջուրը, որտեղից վանքն ստանում էր ցորեն, յուղ, պանիր, ոչխար, ուլ, գառ, մատադացու որպես «պտղի» (նվեր՝ ըստ կարողության) Ար. Կարապետի ուխտի օրը: Տոնը վարդապառն էր, ուր այդ օրերին 8-10 հազար ուխտ

տավորներ էին գալիս մոտիկ և հեռու վայրերից՝ նույնիսկ Կովկասից և արտասահմանյան երկրներից: Այդ օրը տոնավաճառ էր լինում, հատուկ խանութներ էին շինում Մուշի և այլ վայրերից եկող առևտրականները, Դիարեթիրից, Բիթլիսից, Երզրումից ապրանքներ էին բերում, ուխտավորներին վաճառում: Փակլամանների (լարախաղաց) մրցություն էր լինում, որին մասնակցում էին 15-20 փակլամաններ: Աշունների, երգիչ-պարողների մրցություններ էլ էին տեղի ունենում:

Վանքի դպրոցն ուներ 80 աշակերտ՝ ուսման յոթը տարվա ընթացքով: Վանքի միաբաններն էին վեց վարդապետ, վանահայրը Սասունի Արքոնք գյուղացի՝ Վարդան Վարդապետ Դակորյանը, և 50-55 այլ միաբաններ՝ տնտես, հովիվ, նորադար (պահակ), կաթ մշակող տնտեսութիներ, մի կույր ժամագործ Խաչո անունով, որ կույր վիճակում զարրուցիչ ժամացույցներ էր պատրաստում:

Սշո. Ար. Կարապետ վանքը հանդիսացել է մշակութային գլխավոր օջախներից մեկը Տարոնի և Սասունի համար, որի մտավորականությունը մեծ մասամբ այդ վանքի, նաև Առաքելոց և Շովիաննու վանքերի դպրոցների շրջանավարտներն էին: Նրանք Տարոնում և Սասունում ուսուցչական աշխատանքներ էին կատարում: Ար. Կարապետ վանքում Խորհման Դայրիկի և Գարեգին Սրվանձտյանցի ջանքերով 1863թ. մինչև 1865թ լույս է տեսնում «Լրատար Արծվիկ Տարոնոյ» ամսագիրը, որի տպարանը նույն մարդկանց միջոցով բերված էր Վարագա վանքից: Այդ մասին Գ. Լևոնյանը գրում է.

«1863 թ. Խորհմանը նշանակվում է Մուշի առաջնորդ: Նա գնում է Տարոն հետը տեղափոխելով և իր տպարանը: Այնտեղ Գլակա (Ար. Կարապետի-Վ.Պ.) վանքում իր աշակերտ Գարեգին Սրվանձտյանցի խմբագրությամբ սկսում է լույս տեսնել «Արծվիկ Տարոնոյ» ամսագիրը՝ իր գոյությունը պահելով մինչև 1865 թվականի կեսը»:⁶¹

Ար. Շովիաննես վանքը Ար. Կարապետի վանքի հակադիր՝ Սշո դաշտի հարավի, Սասունի Կուլուտը լեռան արևմտյան շղթայի հյուսիս ստորոտում է շինված և ինչպես Ս. Կարապետից (հյուսիսից), այնպես էլ Ար. Շովիաննես վանքից (հարավից), երևում է Սշո ընդարձակ և հարք դաշտավայրը, որին կիսում է Արածանի կամ Մուլադ գետը՝ Արևելյան Եփրատը, ծախ ափի կեսը բողնելով Ար. Շովիաննես վանքի կողմը, իսկ աջ ափը՝ Ար. Կարապետի կողմը:

Սասունի պատմա-ազգագրական տեսությունը, նրա մանրամասն տեղագրությունը և Վերջինիս պատկանող ավանդությունները, որ մենք մինչև այժմ գրեցինք, Վերաբերում են պատմական Սասունին, որը գտնվում է Թուրքիայում և, որպես տերիտորիա, բաժանվել է Սղերդի, Մուշի և Բաղեշի նորակազմ Վիլայեթների վրա, ըստ որի, մեծ մասն ընկնում է Սղերդի վիլայեթի մեջ:

Պատմական Սասունի ազգաբնակչության այն մասը, որ 1915թ. կոտորածին, դիմադրելով թրքական դաժան սրին ու զարհութելի ոճիրներին մինչև ոռուսական բանակի Մուշ հասնելը (1916թ. մարտ), ազատվելով, հասել է Կովկաս ու բնակություն հաստատել Ալաղյազի լանջերին, Խորհրդային Հայաստանի չքնաղ այդ լեռնամասում, իր նոր Սասունից, Վերին և Ներքին Սասունաշեն, Վերին և Ներքին Բազմաբերդ, Կաքավածոր, Պարտիզակ, Ազարակ, Ավան, Ուջան, Մաղդա (այժմ Լեռնարոտ), Դիան, Իրինդ, Շղարշիկ, Ոսկեթաս, Ահազի (այժմ Զովասար), Այնալու (այժմ Դավթաշեն), Մեհրիբան (այժմ Կարնաղբյուր), Աշնակ և այլ գյուղերում, սիրել իր նոր կյանքը:

Այդ գյուղերում այժմ ապրող Սասունի հին սերնդի ներկայացուցիչները, որոնք իրենց եռանդը դրել են նոր կյանքի ստեղծման գործում, հանրիսացել են աղբյուր իմ «Սասունի Ազգագրություն» աշխատության թե՛ հին Սասունի և թե՛ նոր Սասունիկի համար:

Սասունցիաբնակ վերոհիշյալ գյուղերը գտնվում են Աշտարակի և Թալինի շրջաններում:

ՍԱՍՈՒՆ ԳԱՎԱԾՈՒ ՏԱՍԸ ՇՐՋԱՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՏՆԵՐԻ ԵՎ ԸՆՉԵՐԻ ԹՎԻ

1. Բուն Սասուն-Բոզկան	16 գյուղ
2. Շատախ	7
3. Տալվորիկ	12
4. Խուր-Բոնաշեն	42
5. Փսանք	41
6. Դազզո (Խաբլչող)	108
7. Սոտկան	61
8. Խիանք	56
9. Խուլք	68
10. Խարզան	128

Ընդամենը՝ 539

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԵՊՈՍՈՒՄ ՆՇԿԱԾ ՎԱՅՐԵՐՆ ՈՒ ԳՏՆՎԱԾ ՏԵՂԵՐԸ

Անունը	Գտնված տեղը
1. Անդրա գետ	Տիգրիսի հյուսիս-արևմտյան վտակների մեկը:
2. Արքիկ	Բուն Սասունի մի գյուղն է բնրդից 8-9 կմ հարավ-արևմուտք
3. Բաթմանի կամուրջ	Փրա Բաթմանն է (տես նկարագրությունը)
4. Դեղդիս կամ Տեխտիս	Գյուղ Սասունում
5. Դաշտու-պատրիալ	Գյուղ Սասունում, հավանաբար Խուրի Դաշտամիրը
6. Խլաթ, Ախլաթ	Միջնադարյան հայտնի քաղաքը, այժմ Խլաթ գյուղը
7. Ծովասար	Սասոն հայտնի լեռներից մեկը, «Դավթի բերդի» հյուսիսում՝ 5-6 կմ
8. Ծծմակաքիթ	Կուրտուկ-Ծիրնկատարից արևելք մի լեռ, որ քրածն իջնում է Մշո դաշտը
9. Կարնաղբյուր	Սարութա սարի վրա՝ աննահության աղբյուր
10. Կանաչ քաղաք	«Դավթի բերդի»-ին կից թաղթիկ, այժմյան Այգեշատ գյուղը
11. Կապուտկող բերդը	Կապուտ բերդը, Խլաթի իշխանին պատկանող բերդ:
12. ճապաղջուր	Տարոնի Գուրգուռուց արևմուտք դեպի Բալու
13. Մարաթուկ	Սարութա սարն է, Զղլա գյուղն սուրբ Մարաթուկը
14. Մատղվանք	Փսանքի Գոմուց վանքը, որ Սատնականք էլ է կոչվում
15. Մարաթկա ջուր	Մարաթուկի մոտից անցնող գետը,
16. Մարութա Աժածին	Սասոն ջուր է կոչվում
17. Մուշ	Մարութա սարի սուրբ Աստվածածին վանքը, ուխտատեղի
18. Նեմրութ (սար)	Տարոնի մեծ քաղաքը Կուրտուկ լեռան հյուսիսային ստորոտում
19. Պղնձե քաղաք	Մշո դաշտի արևելյան ծայրում, որից արևելք Վանա ծովն է:
20. Սասուն (Սասուն)	Սոասպելական քաղաք, լարիինթոս Դավթի բնրդը, որի անվանք կոչվում է ամբողջ Սասունը (տես)
21. Սեղան Սար	Սար Մուշի և Սասոն սահմանում, Տավրոսի միջին մասում
22. Սև սար	Սասունի Բոնաշենի հյուսիսում, անտառապատ սար
23. Ֆարկին (Ֆարխին)	Բուն Տիգրանակերտը՝ այժմ Ֆարխին, Սասոն հարավային ծայրում:

ՏԱՐՈՆԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տարոնը Սասունից բաժանվում է Տավրոսյան լեռներով, որոնք արևելքից Սև Սարից մինչև արևմուտք՝ Խոզմո գագաթը երկարելով, Սասունի և Տարոնի սահմանն են կազմում: Այդ Տավրոսյան «պարհապջ» Տարոնի հարավային սահմանն է կազմում: Տարոնի արևելյան սահմանն են կազմում Նեմրութ, Սիփան և Գրգուռ լեռները՝ ձգված հարավից հյուսիս, որոնցով բաժանվում է Վանի վիլայեթից: Դյուսիսային սահմանը կազմում են Իննակնյան կամ Քարքե, Քոսուրի և Շարաֆեղին լեռները՝ արևմուտքից արևելք ձգված, որոնցով բաժանվում է Երզրումից: Արևմտյան սահմանը վերջանում է ճապաղջրով, Բալույով՝ սահման ունենալով Գուռգուռը (Չըվեժն Արածանու) և Ուրուխից Կվարս հարավից հյուսիս ձգվող սահման-ները:

Տարոնի (Աշո դաշտ) ափսեածե հարթությունը, որ ձգված է արևելքից արևմուտք ուղղությամբ, ողողվում է Արածանի (Սուրաղ) գետով և Մեղրագետով, որոնց մեջ հոսում են Տավրոս լեռների, Նեմրութի, Սիփանի, Գրգուռի, Իննակնյանի և Քոսուրի լեռներից հոսող բազմաթիվ գետեր և գետակներ:

Տարոնի մասին, նրա բնակչության մասին Մովսես Խորենացին գրում է.

«Յետ նաև լոյ թսիսութրիայ ի հայս և դիպելոյ ցամաքի, գնաց, աստ, մի յորդոց նորա կոչեցեալն Սիմ ընդ արևմուտս հիւսիսոյ դիտել գերկիրն, և դիպեալ դաշտի միում փոքր առ երկայնանստի միով լեռամբ, գետոց ընդ մեջ նորա անցանելով, ի կողմանս Ասորեստանի դադարե առ գետովն երկլուսնեայ աւուրս, և անուանէ յանուն իւր զլեան Սիմ, և դառնայ անդրեն յարևելս հարաւոյ ուստի եկն, իսկ ի կրտսերագունից որդոցն նորա Տարբան անուն երեսուն ուստերօք և հնգետասան դատերօք և նոցին արամք մեկնեալ ի հօրեն, բնակէ անդրեն ի նոյն գետեգերքն, յորոյ անուն և զգաւառն անուան Տարոն»⁶⁰:

Արածանիի աջ ափին մինչև այժմ կան ավերակներ, որ «Տարոն» (Տարոնքի) էին կոչվում բնակիչների կողմից:

Տարոնի առաջին բնակիչները, ըստ Մովսես Խորենացու, եղել են Սիմ նահապետի սերունդը, որ ջրհեղեղից հետո եկել էին Տարոն-Տուրութերանի հարավային լեռների՝ այժմ՝ Սիմ (Կուռտըկ) լեռան լանջերի վրա բնակվելու և Սեմ նահապետի անունով լեռն էլ Սեմ (Սիմ) է կոչվել:

Տարոն անունն էլ Սեմ նահապետի փոքր որդու՝ Տարբոնի անունով, որին բաժին ընկած վայրը եղավ Տարոնը:

Տարբոնն ունենում է բազմաթիվ տղաներ ու աղջիկներ, որոնք Տարբոնը ապրելով՝ կենտրոնական բնակավայրից «ցրվում են», այդ վայրի անունը մնում է Ցրոնք, որ մինչև 1915թ. էլ այդ անունով եր կոչվում գյուղը, և գնում Տարոնի զանազան վայրերում բնակություն հաստատում և ամրող դաշտն էլ կոչվում է դաշտ Տարոնի:

Ըստ Խորենացու, Բաբելոնի աշտարակաշինությունից հետո Դյակ Նահապետն էլ Տարոնի Դարք գագառն է իրեն բնակության վայր ընտրել: Դարք նշանակում է «Դյաց առաջին բնակավայր»: Տարոնի արևելյան սահմանին կանգնած Նեմրութ սարն էլ այն վայրն է, ուր Դյակը Բելին (Նեբրութին) սպանում է իր նետի հարվածով:

Տարոնի անվան ծագումն արաբ պատմագիր էլ Վակիրը (748-823) իր «Միջագետքի և Դյայաստանի նվաճնան պատմություն» գրքում բխեցնում է «Աղջիկ Տարոնի» պատմությունից: Ըստ որում, Տարոնը Խարի բազավորի, Խոյի և Սալմաստի տիրոջ դրւստրն է, գեղեցիկ և քաջամարտիկ: Նրան շատ ուզողներ են լինում, բայց ինքը ոչ ոքի չի հավանում: Սասունի Սանասար իշխանի որդին է Մուշ(Եղ)ը: Դայ իշխանները կոչվում են արարների դեմ: Սանասարի որդի Մուշեղն ու Տարոնը նույն կովին են մասնակցում և սիրահարվում, բայց Բակուրը Տարոնին փախսնում է և անցնում արարների կողմը: Դետագայում Տարոնը ազատվում է, վերադառնում Դյայաստան և ամուսնանում իր սիրած Մուշ(Եղ)ի հետ և ապրում այն երկրում, որ Տարոն հերոսուհու անունով Տարոն է կոչվում, իսկ այդ երկրի գլուխ-քաղաքն էլ Մուշ(Եղ)ի անունով Մուշ է կոչվում: Մուշեղը ոչ միայն Տարոնի, այլև Սասունի տերն է դառնում:

Մուշի և Տարոնի մանրամասն տեղագրության, տնտեսական կենցաղի, նյութական մշակույթի, սոցիալական հարաբերությունների վրա կանգ առնելը մեր նյութից դուրս է և այդ մասին կարելի է ծանոթանալ «Լումայի» 1897-98թթ. գրական հանդեսում, և «Ազգագրական Դանդես»-ի 20-21-րդ հատորներում: Ես կանգ են առնում միայն պատմական վայրերի նկարագրման, տեղերի որոշնան և 1915թ. կոտորածից առաջ եղած վիճակագրական տվյալների վրա:

Մամիկոնյանների տերիտորիան են կազմել և Տարոնը, և Սասունը, որի համար նրանց պատմական իրար հետ առնչվում է, եթե չասենք նույն է եղել, իսկ 1915թ. Սասունի գոյամարտը և վիճակագրությունը և Տարոնի, և Սասունի տվյալները ցույց են տալիս այդ երկու հայաշատ գավառների գոյության, ծաղկման և ողբերգական

կործանման իրական տվյալները, որոնք անցնում են պատմության գիրկը:

Տարոնի արևելյան մասից՝ Չուխուրի դաշտից հոսում է Մեղրագետը:

Մեղրագետի ակունքի մասին պատմում են, թե մի բռնիր է եղել: Գյուղի երեցի կինը հաց թխելիս մի աղքատ է զալիս և քրիստոնի սիրու համար մի բարձա հաց խնդրում: Տիրուհին տալիս է հացը, ապա աղքատը նույն աղերսով պանիր է խնդրում, տիրուհին պանիրն էլ է տալիս: Աղքատը քրիստոնի սիրու համար մի համբույր էլ է խնդրում, տիրուհին իր սիրուն դեմքն է մոտեցնում, և նա մի համբույր տալիս: Երբ աղքատը տիրուհուն համբուրելիս է լինում, քահանան տուն է մտնում և տեսնում: Մոտենալով տիրուհուն՝ զայրացած հարցնում համբույրի մասին: Տիրուհին ասում է, թե աղքատը քրիստոնի սիրու համար հաց խնդրեց, տվի, պանիր խնդրեց, տվի, քրիստոնի սիրու համար համբույր խնդրեց, չկարողացա մերժել, համբույր էլ տվի: Քահանան զայրացած ասում է քրիստոնի սիրու համար քեզ զցիր վառ բռնի մեջ: Տիրուհին իրեն զցում է վառ բռնի մեջ: Բոցավառ բռնիրն իսկույն լցվում է մեղրահամ ջրով: Տիրուհին դառնում է ծուկ, մնում գետի ակունքի մեջ, իսկ գետն էլ կոչվում է Մեղրագետ:

Մշո դաշտը գրեթե զուտ հայաբնակ էր և ուներ 102 մեծ և փոքր շեն գյուղեր մինչև 1915թ. հունիս ամսի 28-ը՝ երեխայից մինչև զառամյալ ծերունի, երկսեռ ազգաբնակչությունը գազանաբար բնաջնջվեց թուրքական կառավարության հրամանով: Ահա այդ գյուղերի ցուցակն ըստ 1915 թ. ազգաբնակչության:

ՏԱՐՈՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳՅՈՒՂԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1. Բուրդմեյլան	50	301	2	15
2. Շեխան	93	670	1	1
3. Ավգաղբյուր	42	336	4	27
4. Արտխոնք	40	178	18	90
5. Փողոկով	48	286	25	140
6. Խորոնք	23	136	11	55
				Սովուս Խորենացու ծննդավայրը
7. Ջարձոր	60	320	7	48
				Կալվագործական գյուտ
8. Անձնութ	26	190	-	-
9. Ղզլաղաջ	130	1300	-	-
10. Գոմեր	70	630	-	-
				Կալվագործական գյուտ
11. Բըլել	22	154	-	-
12. Փերար	35	297	-	-
				Սասունցի Սամուկի ծննդավայրը
13. Բրիմոկ	8	67	3	24
14. Ա. Դովիհաննես 5	85	-	-	Ուներ համանում վանքում ապրողներ, միաբաններ
15. Ա. Կարապետ	1	120	-	-
				Ա. Կարապետի միաբանության շունչը
16. Կվարս	50	400	95	760
17. Բազու	21	248	41	328
18. Քասանավա	25	300	27	214
19. Ասլըգան	48	384	3	24
20. Ասրդար	56	360	3	17
				պետք է լինի Սորդար (Կ.Պ.)
21. Ուսուդ	60	480	10	80
22. Զիարեթ	182	1127	-	-
23. Մեղրի	32	230	-	-
Անձնուկ	-	-	-	-
24. Բաղլու	35	229	-	-
				Բերի Օվոյի գյուտը
25. Տոճ	23	184	10	80
26. Նորակ	12	96	8	64
27. Կեմիկ	10	80	30	240
28. Խեյրիան	122	830	8	40
				Ներսես Եպիսկոպոս Խարախանյանի ծննդավայրը
29. Գոմս	115	705	-	-
				Գոմսա Խոյի (Կորյունի) գյուղը՝ ծննդավ.
30. Ալատին	20	253	8	40
				Պետք է լինի Ալատին (Կ.Պ.)
31. Քերկերտ	36	259	1	5
32. Ավրան	217	1320	3	17
33. Ղերըկ (Աշտիշատ)	51	350	1	8
				Այստեղ բաղկացած է Սաշտոցի ընկ. Սահակ Կաթողիկոսը

34. Կուրավու	130	1237	-	-
35. Ծխավու	60	486	4	17
				Ծախսու էր կոչվում (Վ.Պ.)
36. Սատնավանք	1	15	-	-
				Վանքի միաբանության թիվը
37. Արթերտ	105	747	7	50
				Կոչվում էր Արտերտ
38. Աղջան	123	1125	8	35
39. Սուլուն	133	1120	-	-
				Սուլունի կամարակապ կամուրջը՝ Արածանիի վրա . որ կոչվում է Սուլուն կամուրջ:
40. Դաշդալքաղ	51	342	4	29
41. Խոփիեր	37	340	4	17
42. Բրլից	53	394	-	-
43. Ռունան (Յունան)	84	584	-	4
44. Ալիջան	113	1120	-	-
45. Շեխ-Ռևուժ	43	303	3	25
46. Շեխ-Բրին	20	200	3	16
47. Խարթոս	60	345	10	88
48. Ցրոնք	244	2559	-	-
49. Օրգոնց	93	550	20	104
50. Քրդազոն	161	1288	20	160
51. Արլուտիար	32	278	5	50
52. Թիլ	55	450	105	715
				հունաց Վասիլ կայսրի (867թ.) ծննդավայրը
53. Դվինիկ	55	360	12	56
54. Զացիկ	30	251	7	55
				Մաշտոցի ծննդավայրը
55. Իրիզակ	70	700	7	40
56. Բռատացենդ	100	977	1	5
57. Գառնի	125	1000	-	-
58. Զրիկ	85	620	50	400
59. Ծակնա	40	196	-	-
60. Ասինք	120	610	-	-
61. Ասինցվանք	48	400	4	30
62. Սոկոնք	79	417	10	38
63. Տափե	20	160	-	-
64. Դերգեվանք	75	460	-	-
65. Օղունք	90	620	5	35
66. Սոխզոն	104	832	8	64
67. Ալիզոնան	33	218	1	2
68. Առաղ	91	698	5	32
69. Բերդակ	150	1020	-	-
70. Սոացելոց վանք	1	11	-	-
				միաբանության թիվը
71. Յավատվորիկ	165	1250	-	-
				Սատունի Խոնօվանքից ներգաղթածներ
72. Սատնիկներ	35	282	3	18
				երկու Մատնիկներ են՝ Վերին, Ներքին
73. Տալասեղ	19	72	-	-

74. Ազրե	8	54	-	-
75. Բնդիսներ	16	143	1	4
76. Ծնլակ	49	295	5	33
77. Խասգեղ	423	2776	24	149
78. Բոլոսիկ	29	232	100	750
79. Նորշեն	400	2000	-	-
				Միակ գյուղը, որի բնակչութերը կարողիկ էին
80. Սկրագոն	78	800	4	20
81. Երիշտեր	80	800	-	-
82. Ալվահնջ	165	1840	6	44
83. Ծղակ	50	356	19	179
84. Ծոգետ	20	160	35	200
85. Վարդիսաղ	25	200	45	360
86. Խվճեր	44	352	35	280
87. Ավգուտ	77	461	11	38
88. Մրագ	30	200	6	50
89. Արքավանք	54	800	-	-
90. Ուշուան	40	300	8	30
91. Ալիջրբուն	50	485	2	47
92. Դրմերդ (Տրմերտ)	109	372	2	16
				ունի բնեղ.. արձանագր.թերդ և վանք (բլրի վրա). անգլիացի Լայարդը սխալ է գրել տեղի ամունը («Իրմերգ» լատիներեն.....ի շփոթելով)
93. Ավզադբյուր	98	792	2	8
94. Անմիստ	70	600	2	10
95. Արուբահար	-	-	-	Ունի համանուն վտակ և ծոր
96. Արտոնք	147	1050	-	-
97. Վարդենիս	189	1512	-	-
98. Սարե Գոլե	30	240	60	480
				Նշանակում է լճի գյուխ, Սեղրագետի ափին է այդ լիճը. որից նա բխում է, իսկ Սեղրագետի աջ ճյուղը բխում է և սեմլուքի ստորոտից: մոտիկ է Օձ քաղաքի ավերակները
99. Մոզակ	10	80	22	176
100. Մուշաղշեն	60	480	30	290
				մոտիկ է Օձ քաղաքի ավերակները
101. Երուն	10	80	60	480
102. Օղկան թերդ	-	-	-	-
103. Միխակ	-	-	-	-

Մուշ քաղաքն ուներ 30000 բնակիչ, որից 15000-ը հայեր էին և 1915 թ. հունիսի 28-ից հովհանու 1-ը երեք օր դիմադրելով կոտորվեցին:
Այս հարյուր և երեք գյուտերը հայաբնակ գյուտեր էին փոված Մշո
դաշտի վրա, Արածանիի և նրա մի ճյուղը կազմող Սեղրագետի աջ և
ձախ ափերին, մոտիկ և հեռու վայրերում: Դաշտի հյուսիսային լեռ-
ներն Իննակնյան կամ Քարքե, քիչ արևելք այդ լեռները կտրվում են
Աշտիշատի և Սուլունի միջով անցնող Մուրադ գետով, Արածանի, որի

ձախ ափին սկսվում են և դեպի արևելք ձգվող Աբլուտիարի և Շոսուրի լեռները: Արևելքի լեռներն են Սիփան, Գրգուռ և Նեմրութ, հարավից հայկ. Տավրոսի Սասնո լեռներից Խոզմո, Կուռտըկ (Սիմ). Ծիրնկատար, Սև քար՝ արևալուտքից-արևելք ձգվող կատարներով, իսկ դաշտի արևամտյան մասում լեռներ չկան: Խապաղօտրի և Գենջի տարածություններն են: Վերոհիշյալ լեռնալանջերի վրա և դաշտում փոփում են պատմական քաղաքների և բերդերի ավերակները, որոնցից գլխավորները հետևյալներն են.

Ողկան կամ Ողական բերդը բոլորան մի ամրոց էր և գտնվում էր Մշո դաշտի արևամտյան ծայրի Արածանիի աջ եզերքի վրա, ուր ցից ժայռերն սկսում են գետը նեղացնել, Գուրգուռային մոտիկ:⁶¹

Ողկան բերդի հյուսիս-արևամտյան կողմում կան «Ծիծեռն» քաղաքի ավերակները, որոնք երևում են մինչև այժմ է (1915թ.), որին մոտակա քրդերը «Զիգեռն», Զիգեռն (արծաթ գիվ, զեռն ոսկի) են անվանում: Ծիծեռն քաղաքի գերեզմանատան տապանաքարերը մինչև վերջին տարիները դեռ կանգուն էին: Տեղացիներն երկու բացատրություն են տալիս «Զիգեռն», «Ծիծեռն» քաղաքին: Քաղաքը առաջին «Ծիծեռնակի» խաչի ու վաճքի անունով է կոչվել և երկրորդ երբ Ծիծեռն (Զիգեռն) քաղաքը պարսից հարձակումներից ավերվում է, բնակչությունն իր աճքող ոսկին և արծաթը քափում է մի խոր ջրի մեջ, և դուռը փակում, ծածկում, որից և կոչվել է Ոսկու և արծաթի քաղաք:

Ողկան կամ Ողական բերդին մոտիկ է Արածանիի Գուրգուռա կոչված ջրվեժը, Մշո դաշտի արևամտյան ծայրում, որի համար ժողովուրդն ասում է.

«Ենդուր համար կըսեն Կուրկուռայ, չումքի ձեն կիտայ ուր ձեն իրեք սիաթվայ ճամբայ կերպայ, ու էտ տեղաց բոլորն էլ գիտեն որ շատ անրձն պտի գայ»:

Ամեն ժամանակ չէ, որ այդպես ուժեղ ձայն է հանում Գուրգուռեն, ուժեղ ձայնը դրա հաճար է կապված է անձրևաբերության հետ:

Ողկան բերդի և Գայլ Վահանի մասին ժողովուրդը մինչև այժմ էլ պատմում է հետևյալը.

«Են վախտն որ պարսիկները գորեցան ու եկան մըր աշխարի զմզի թալնելու ու հեսիր տանելու, կէր մեկ Գայլ Վահան անունով մարդ, որ շատ կտրիծ էր, երոր տեսաւ, որ պարսիկներն շատ նեղութիւն կիտան ժողովրդին, նա եկաւ ու էս Կուրկուռայ սարի զլիխին գետ անառիկ բերդ շինեց ու գետին վրեն էլ կարմունջ շինեց զննիլներով, ու էտ բերդի մէջ պահեց զուր ասքար, երոր պարսիկներ կզօրեղնային Գայլ Վահանի վրեն, ինքն զժնիլներնի կրակեր որ պարսիկներնի չընցնան ուր բերդ, երոր ինքն կզօրեղներ զննիլներնի կրալեր գետի վրեն ու կընցներ են դին, հմըկայ լէ կա ուր կարմնջի օղերը, որ մեկ մազի չափ

ե»:⁶²

Ծծմակաքիր, Ծծմակ կամ Ծծմբակի մասին Յ. Սարգսյանը⁶³ գրում է. «Ընդ մէջ Մորիսայ և Օծ քաղաքի առ ստորոտով երկայնանիստ լերին միոյ ի դաշտ է Զերմուկ կոչեցեալ ի բնակչաց Կէրմաւ, և ջուր նորա առողջարար հիւանդութեանց, և այլ ջերմուկ գաղց և ծծմբահոր որ թիւ ի ներդուստ լերին և կոչի Ծծմակ, որ թուի լինել ծծմբակ, և լեռունդ երկայնեալ ծգի ի դաշտն կոյս կոչեցեալ Ծծմակայ թիթ, իբրև երեց ժամաւ հեռի ի Մշոյ յարևելս կոյս ընդ երկայնութեան լերանցն Տօրոսի»:

Օծ քաղաքը շինել է Աշոտ Մսակերի որդի Դավիթ Բագրատումին. «Օծ քաղաքի մեծադիր և ամուր բերդը Շամբի եզերքը և լերան կից քաջապես կերպի դեռ ևս իր բլրան բարձր դիրքի վրա, ուր մեծ-մեծ աղբյուրներ կը գտնուին և որուն մօտեն կանցնի Ներքովքեն իշնող վտակ մը, որ Շամբեն անցնելով Մեղրագետ կը կառնուի»:⁶⁴

Օծ քաղաքի մասին ականատես Գ. Սրվանձտյանցը գրում է.

«Օծ քաղաքը Մեղրագետի ակի մոտն է, որի շուրջը սալարկված են քարերով և անոր մոտ գմբեթ մը կայ, ակը բազմաշեայ է, այժմ Մուշեն է անունը»:⁶⁵

Վիշապաքաղը Աշտիշատի մոտի այն գյուղն է, որ այժմ Բաղ-Չայ են կոչում, իսկ Տարոնի պատմիչ Յովհաննես Մամիկոնյան եպիսկոպոսը Վիշապ անունն է տվել»:⁶⁶

Վիշապ քաղաքը, Վաղարշակի օրերում իհմնեցին հնդիկ գաղքականներ, որը այլ անունով կոչվում է Տերակատար քաղաք:

Մատնավանքը կամ **Մատավանքը** գտնվում է Մշո դաշտի հյուսիսային երկայնքի միջին մասում, Աշտիշատից կամ Դերըկից մի ժամ հեռավորության վրա, դեպի դաշտ, ուա մի փոքր վանք էր և մինչև 1915թ. էլ շեն վիճակում էր:

Ծիրնկատար կամ Տիրինկատարի մասին Յ. Սարգսյանը գրում է. «Անդ էր ի հնում պատկեր Անհայտ կոոց ի դեպ ընտրեալ վասն նորա զվայրն ամենացանկալի և վսեմատես, իբրու ակնարկողի ի վերայ անենայն գաւառին մշտատես խնաճակալու լինել ըստ հեթանոսական մըսոց»:⁶⁷

Զյունակերտ կամ Զիւնկերտ քաղաքը կառուցել է Վախրանգ զորավարը և իր կնոջ անունով կոչել է Պորպես:

«... Նորոգեալ ի Վախտանգի Պարսից զօրավարէ կոչեցաւ Պորպես, մերձ էր Օծ քաղաքին յարևելից հարաւոյ նորա, և յաւերակաց նորա են անշուշտ որ երկին ցարդ ուրեք աննշանք ի Մորիս գիւղն կոչեցեալ Քեաֆիր Մորիս, որ առ երի կայ անընդմիաբար Գրգուռ և Նեմրութը լերանց»:⁶⁸

ԱՍՏՂԱԲԵՐԴ (ԱՍՏՂԱ-ԲԵՐԴ)

Տավրոսի թևերից մեկի վրա, Մուշի հարավ-արևելյան կողմը, դեպի Սասուն քարծունքների վրա, նայում է դեպի Մուշն ու Մշո դաշտը: Դայոց Աստղիկ դիցուհու ամրոցը, ուր հյուր էր ընդունում հրածին Կահագնին, որ հանգստանում էր Աստղիկի մոտ վիշապամարտերից հետո: Բերդի վիրխարի աշտարակներից և պարիսպներից մի մասը դեռ կանգուն մնում են: Կան վիճաքար սենյակներ և քարյուներ: Սասունցիները Մուշ գնալիս կամ Մուշից վերադառնալիս այցելում էին այդ Աստղաբերդը և հետաքրքրությամբ դիտում հսկա բերդի հիմքի ճեղքերից դուրս եկող մրջյունների քարավանը, որոնք կորեկի կամ ցորենի հատիկներ էին դուրս բերում լեռնածածկ ամրոցի գաղտնի պահեստներից մինչև 1915 թվականն էլ:

Դետագայում դա հայտնի է որպես որսորդ Ավոյի բերդ, սակայն ժողովուրդը միայն որպես Աստղնաբերդ է ճանաչում:⁷⁰

ՄՄԲԱՏԱԲԵՐԴ

Մշո դաշտից դեպի հարավ-արևելք, Բընդախնի և Մառնիկ գյուղերի միջև, յուրաքանչյուրից 5 կմ հեռավորության սարի վրա, անտառոտ մի վայրում է գտնվում Մմբատաբերդը: Բերդի հյուսիս և արևմտյան կողմերը ժայռոտ են, իսկ հարավ-արևելքը՝ տափարակ: Բերդի երկարությունը կլինի 30 մ, լայնությունը՝ 25 մ: Արևելյան և հարավային պատերը դեռ 1914թ. կանգուն էին, իսկ հյուսիսարևմուտքը քանդված է: Սառնիկ գյուղի երիտասարդներս, մոտ վառելով և դարձան թափելով էինք բերդի ներսը մտնում, որ չմոլորվեինք, մնայինք բերդի մեջը: Մմբատաբերդի ներսում գտել են մի մեծ սենյակ լիքը կավե թրծված կարմիր խողովակներով, որոնք սկսել են տանել Մառնիկ քոնրան ակ և տների առաջ փակ առուներ շինելու համար:

Մմբատ թագավորը Մուշի տերը, շինել է այդ բերդը: Բերդավայրի սարը կոչվում է Խուռելին, որ բարձր սար է, հարավային փեշի վրա ալոճի և քարմինի (վայրի տանձ) մեծ ծառերի անտառ կա: Բերդի հյուսիս-արևմտյան կողմը խոր ծոր կա, որից անցնող ջուրը գալիս է Մառնիկի վրա, անցնում Դավատորկա տակ, Բերդակ և Արադ գյուղերի արանքով, Սողոմ գյուղի կողքով անցնում և թափվում է Մեղրագետ ձախ ափով:

Մմբատաբերդի արևմտյան կողմը՝ Խուռելասարի ստորոտում, գտնվում է Կարմիր վանքը, որի միայն պատերն են մնացել մեկ ու կես մարդաբոյի չափ: Վանքի ավերակի վայրում լուսառուն էր, ուր մոմ էին վառում: Աղբյուրը վանքի արևմտյան մասում էր, մի քահի չափ ջուր ուներ, գետնից բխում և հոսում էր: Աղբյուրից մինչև Կարմիր վանքը 100 մ չափ էր: Վանքի պատերի քարերը կարմիր էին, որի համար էլ կոչվում էր Կարմիր վանք: Սմբատաբերդը Մուշից դեպի հարավ-արևելք է մոտ 20-25 կմ հեռավորության վրա⁷¹:

Տարոնում Կավ-կավ քաղաքը եղել է Ողկան բերդին մոտիկ, որի ավերակները չկան, իսկ բերդինը կային մինչև 1915 թ:

Տարոնումն է եղել և Սծուրք քաղաքը, որն ըստ ավանդության, Սանատրուկ արքան է կառուցել, որի ավերակների վայրը նույնպես հայտնի չէ:

Տարոնի Թիլ ավանից երևաց երեւլի հայ կայսր Վասիլը, որ Բյուզանդիայում 867թ գահ նստավ, իսկ նրա թոռ Կոստանդին Պերճեռութեն նույնպես նշանավոր կայսր Եղավ և միաժամանակ գրեց իր պապի պատմությունը, որը լի է նրա քազմարիվ մեծագործություններով: Դայաստանը շատ կայսրներ ու մեծ զորապետներ է տվել թե Շոռմին և թե Բյուզանդիային, ուր նրա որդիներն այժմ գնում են ծառայություն անում:

Տարոնի քաղաքների առիվ Ռաֆֆին գրում է. «Բոլորը կորավ, բոլորը անհետացավ, մնաց որբացած Մուշը միայն, որ այժմ մոայլ դեմքով նայում էր բարձրադիր բլուրի գագաթից...»:

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐՆ ԵՆ

1. Բերդ	126	940	-	-
2. Եկմալ	17	160	-	-
3. Այնա Խոցա	40	360	-	-
4. Օղջին	11	90	-	-
5. Ակներ	57	422	-	-
6. Խանօղլի	28	254	-	-
7. Ղերզկ	25	728	-	-
8. Ուստամ Գեղուկ	210	1411	-	-
9. Խոտանլու	50	400	-	-
10. Մարմուս	37	300	-	-
11. Բաղդե	28	297	-	-
12. Ղարախայա	28	725	-	-
13. Սոլլաբաղ	17	110	-	-
14. Թունդրակ	24	171	-	-

15. Խասմիկ	67	663	-	-
16. Խարաք Խասմիկ	31	234	-	-
17. Նորադին	145	1710	-	-
18. Սոլլա Մստովա	30	217	-	-
19. Սուլթանլու	18	110	-	-
20. Դասե	9	72	-	-
21. Կուշտյան	6	52	-	-
22. Տոլախինոց	40	300	-	-
23. Դասան Վիաշա	6	47	-	-
24. Կանկոր (Կոկիր)	5	54	-	-
25. Դիգնուգ	44	438	-	-
26. Զարբուհուր				
27. Գյումզյում				
28. Ամասիա				
29. Գյունդեմիր				
30. Ֆրֆոհիկ				
31. Տիրբան				
32. Սվրիս				
33. Բուրգաշեն				
34. Ալազյազ				
35. Խանիկ				

ԲՈՒԼԱՆԾԻՆԻ ԳՅՈՒՂԵՐԸ

1. Կողակ	55	417	160	1430
2. Խոշգյալդի	170	1428	48	772
3. Փիոնք	66	572	60	444
4. Ագրակ	40	283	12	70
5. Բրգաշեն	74	561	25	78
6. Արդի	35	210	140	650
7. Լիզ	244	1698	30	205
8. Աստկոնք	109	720	24	120
9. Գերոլան	29	256	83	436
10. Սոլաքենդ	70	457	130	667
11. Ռունջուր	191	1295	12	57
12. Թեղուտ (Սեղուտ)	165	1168	93	677
13. Դարաղըլ	165	1315	4	60
14. Ցոնջալու	263	1560	12	100
15. Կոփի	650	5106	75	390
16. Սեղիղլու	120	850	-	-
17. Սերբար	50	772	-	-
18. Բեքերլու	189	1506	11	42

19. Փիրան	64	446	26	149
20. Ծեխաղուր	200	1200	-	-
21. Խարաբաշեհիր	77	606	10	95
22. Ս. Դանիել Վանք (Կարմիր)	1	10	-	-
ուներ միաբանություն				
23. Խազիկ գ. Լճին մոտիկ				
24. Խաչլի լիճ				
25. Արի				
26. Իհրան				
27. Սելսիկ				
28. Կանի սիրի				
29. Դերս				
30. Սիլկան				
31 Կարկառուտ				
32. Դաջի բեկ (ներքին)				
33. Զիրինգ				
34. Բայրաման				
35. Բեջան				
36. Կատանլի				
37. Սերկիսան				
38. Ակպինար (Սպիտակ աղբյուր)				
39. Ալի գետիկ				
40. Դերըկ				
41. Կարմունջ				
42. Սիսկ				
43. Սյուկուրտ				
44. Դատվան				

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես իմ «Սասունի աշխատությունները», «Սասունի ազգագրություն» աշխատության համանուն գյուղը:
2. Գելենգուզան գյուղի մասին պատմել է նույն գյուղացի 90 տարեկան Դակոր Շովսեփյանը, Թալինի Սիազչի գյուղացի:
3. Սեմալ գյուղի մասին պատմեց նույն գյուղացի Գալուստ Բոբանյանը. 80 տարեկան, ապրում էր Թալինի շրջանի Իրինդ գյուղում:
4. Շենիկի մասին եղած բոլոր տվյալները մենք վերցրել ենք նույն գյուղի բնակչի և ուսուցիչ Կիրակոս Երեցյանից:
5. Այսո Տոնոյանը Սասունցի Դավթի բերդին մոտիկ Խոժոժավանք գյուղացի է:
6. Սելզոն Սկրտչյանը Սասունի Սպղանք գյուղացի է, 1915 թ. գերի է մնում Բաղդիկ քրողերի մոտ, այժմ ապրում է Աշտարակի Լեռնարոտ գյուղում:
7. Գենջո Պետրոսի Գրիգորյանը Սասունցի Դավթի բերդին կից Սարեկան գյուղացի է, այժմ ապրում է Աշտարակի շրջանի Սասունիկ գյուղում:
8. Սասունցի Թարոյի Սկրոն, որպես ականատեսի, պատմում է բերդի և նրա գերեզմանաքարերի մասին: Սկրոն 80 տարեկան է և ապրում է Թալինի շրջանի Դիան գյուղում:
9. Դավթի Ջալեպի բերդի մասին պատմողն է Սասունի Ջոսներ գյուղացի Արե Խաչատրյանը՝ ծնված 1880 թ., ապրում է Թալինի շրջանի Ներքին Սասունաշեն գյուղում:
10. Դ. Ն. Սարգսյան:
11. Տեղեկագիր Ջայկ. ՍՍՀ ԳԱ, 1945 թ., էջ 22:
12. Նույն տեղում, էջ 23:
13. Տեղեկագիր Ջայկ ՍՍՀ ԳԱ, 1945 թ., էջ 31:
14. Նույն տեղում:
15. Սասունի Տափլկ գյուղացի Տոնեն 80 տարեկան է և ապրում է Թալինի շրջանի Ագարակ գյուղում. Չուզա բերդը նրա սեփական հողանատումն է եղել համանուն գետի եզերցի մի բլիր վրա:
16. Սասուն Տարոնի պատմական իմ քարտեզում Սուսանա բերդը Սուսանա գետի ձախ ափին՝ Ծովասարի փեշին է դրված: -Վ.Պ.
17. Ջաջոյի Սկրեն և Ազգոն՝ Խլիովիսի Երկու Եղայրներն են պատմել: 75-80 տարեկան են և այժմ 1947 թ. ապրում են Թալինի շրջանի Ծղարշիկ գյուղում (Նախկին Սղացի):
18. Թարար Թողոյանը 93 տարեկան առողջ մի ծերունի է. Տալվորիկի եգու տուն թաղից. 1947 թ. ապրում էր Թալինի շրջանի Ծղարշիկ (Նախկին Սղացի) գյուղում:
19. Սույն աշխատության հեղինակը անձամբ եղել է այդ վայրում և ուսունասիրել:
20. Սույն աշխատության հեղինակը 1908-1911 ուսումնական տարիներին այդ գյուղում ուսուցիչ էր: Տարրական մի դպրոցի՝ 25-30 աշակերտներով, այդ առթիվ լավ ծանոթ է Տալվորիկի տեղագրությանը:

21. Օճո Օհանի Սկրտչյանը Սասունի Սպղանք գյուղացի է, 98 տարեկան էր նաև և 1947 թվականին ապրում էր Աշտարակի շրջանի Մազդա գյուղացիներին եկեղեցում այրելիս և երգ է հորինել այդ դեպքի համար:
22. Մյուղիր կոչվում էր զավառակի կամ մի քանի գյուղերի պետք (պետական պաշտոնյա) որ իր տրամադրության տակ ուներ ոստիկաններ՝ հարկահավաքի համար:
23. Վ. Յան, «Լուսայ», «Մշո Աշխարհ», Թիֆլիս, 1897թ., էջ 138:
24. Խողեղանց Խուրի Դաշտադեմ գյուղացի է, 91 տարեկան և 1947 թվականին ապրում էր Թալինի շրջանի Իրինդ գյուղում: Նա պատմեց Ար. Աղբերիկ վանքի մասին:
25. Մառնիկ գյուղի մոտիկ Գյալառաշ (Սև ծոր) կոչված քարհանքից:
26. Խուրի Խան գյուղացի Օհանը 85 տարեկան էր, 1947 թվականին ապրում էր Թալինի շրջանի Կացավածոր գյուղում: Նա պատմեց Ուրարի, Բլրկա և Ծնկուզկա բնողերի մասին:
27. Դ. Ն. Սարգսյան, «Տարեգրութիւնը ի Փոքր և Մեծ Հայս», Վեճեսիկ, 1864 թ., էջ 238-239:
28. Սատենաղարան, ծեռագիր նո. 3456-ի հիշատակարանը:
29. Ա. Սուրայլյան, «Բազմավեպ», Խողկ. Սասունի ուխտավայրերը, Վեճեսիկ, 1934 թ., էջ 65:
30. Թալինի շրջանի Սշնակ գյուղացի Մանուկ Մեղոյանը պատմեց Գոմուց վանքի մասին:
31. Կուսգետի Ջակոբը 68 տարեկան մի որմնադիր էր, որ 1947 թ. ապրում էր Աշտարակի շրջանի Ուշան գյուղում: Նա 1915 թ. ականատես է եղել. թե ինչպես Զաֆոյի Զայնարը պաշտպանել է հայերին:
32. Ջրորդ գյուղացի Օվե Գևորի Ավետիսյանը 78-80 տարեկան էր և 1947 թ. ապրում էր Աշտարակի շրջանի Ուշան գյուղում: Ջրորդի հինգ եկեղեցիների մասին նաև է պատմել:
33. Ա. Բիւրատ, «Եղիղօցեն Սասուն», Կ. Պոլիս, 1912 թ., էջ 613:
34. Խարլոցի Սանուկ Սընջոյանը ականատես է և այցելող է եղել այդ վանքերին, որոնց մասին պատմեց ինքը: Սանուկն ապրում է Թալինի շրջանի գյուղում և ջրամանն է:
35. Սատղնա անունն ըստ ավանդության դրել են նրա համար, որ մի մոր միակ զավակը այդտեղ արջ որսալու ժամանակ, բազմաթիվ արջեր են հարձակվում և այդ որսորդին ուստում, մնում է նրա զենքը նույն վայրում: Որվեկորույս մայրը և գյուղացիները փնտորելիս կոտորածի միայն զենքն են գտնում և ոսկորենը և ի պատիվ գյուղի վրա հարձակվող արջերին սպանող որսորդի, այդ սարի անունը դնում են Սատղնին (մատուց Եղածներ): Ինչպես Երևում է արջերը այլ որսորդներ էլ էին որսում, որովհետև Սատղնին-մատուց Եղածներ-մատուցներ է նշանակում: Սուտկանի արժեքը հայտնի են իրենց կատաղությամբ:
36. Տվյալները վերցված են Սուտկանի Կըլսու գյուղացի Խորայի Ջովհաննիսյանից և Ուստա Ակորից, որոնք 1947 թ. ապրում էին Ուշանում:

37. ա) Մոտկանի շրջանի գյուղերի սույն վիճակագրական ուսումնասիրությունը կատարել են Մոտկանում ապրած, ականատես և տեղյակ մարդկանց միջոցով: Այդ մարդիկները Սոյունու գյուղացի Բաք Միմոնյանը, Կրիսու գյուղացիներ Խորայել Յովհաննիսյանը, որոնք 1947 թ. ապրում էին Աշտարակի շրջանի Ուշան գյուղում:
բ) «Լումայ», «Մշո Աշխարհ», Թիֆլիս, 1897, էջ 138:
38. Եթու Կրպեյան, Իշխանձոր գյուղացի, որ իր տարիքի մասին ասում է «Լոռուս Սելիրովը կովու ատին ըս բզդիկ եք» հիշում է այդ ոռու-թուրքական պատերազմը:
39. Մարտոնի Օհանն Սասունի Ընկուզնակ գյուղացի է, 75 տարեկան, 1947 թ. ապրում էր Աշտարակի Ավան գյուղում:
40. Օհան Մարտոնյանի պատմածը:
41. Գ. Արվանձտյանց, «Թորոս Աղբար», Ռ.Խ.Թ. հայոց ի գյուղաքաղաքն Օաբայ ի դուռն Սր. Աստուածածին և Սր. Վասիլ իշխանին... ամեն...», Կ. Պոլիս, 2-րդ հատոր, 1884, էջ 374:
42. Գ. Արվանձտյանց, «Թորոս Աղբար», Կ. Պոլիս, 1884թ., 2-րդ հատոր, էջ 374:
43. Պատմել են ույն Ալրոնք գյուղացի Գրգորի Մարիանը, 70 տարեկան մի կին, որ 1947 թ. ապրում էր Աշտարակի շրջանի Մազդա գյուղում:
44. Յակոբ Գալուստի Եղիազարյանը՝ 96 տարեկան առույգ ծերունին, ականատես պատմողն է այդ երեք բերդերի մասին:
45. Խարզան բազ արաբերնում «Խարդան», քրդերենում «Խալդան» մեր կարծիքով խալդան ծեր հարազատ է մնացել. ույն անունով խալդին դադը (խալդան լեռը) այդ շրջանում է:
46. Խարզանի բնակիչներ Թեոփ Օվե Չամսյանը, Յոպէ գյուղացի, Պոլոյի Սոաքելը՝ Զազնի գյուղացի, 75-80 տարեկան բանինաց մարդիկ Խարզանի գյուղերին ծանոթ էին և 1947թ. ապրում էին Աշտարակի շրջանի Ուշան գյուղում:
47. Սըրին ունի հին բերդ:
48. «Պլուտաքեայ Թերովնացւոյ Զուգակշիոք բարզմ. Յ. Եղիա Թոնանցան, Վենետիկ, 1833 թ., էջ 566. վերցված է Լեոյի «Դայոց պատմություն» գրքից:
49. Նույնը, էջ 222:
50. Յ. Ինօնիցյան, «Աշխ. Չորից մասանց Աշխարհի», Վենետիկ, 1806 թ., էջ 188-189:
51. Յ. և. Սարգսյան, «Տեղագրութիւնը ի Փոքր և մեծ Յայս», Վենետիկ, 1864, էջ 233-236:
52. Րաֆֆի, «Կայսեր», Յեյպետիրատ, Երևան, 1947թ., էջ 585: Րաֆֆին անձամբ եղել է Սուչի Սոաքելոց վանք, որի մասին և գրում է իր այդ աշխատության մեջ:
53. Այժմ Յակոբ Դանիելյանն ապրում էր Յամանջալու գյուղում (Արտաշատի շրջան) և գրադվում էր հաշվապահությամբ: Այդ գյուղուն են ապրում և շատ մշեցիներ:
- Յակոբի հուշերը գրի են առնված 9 ապրիլի 1935թ. և գտնվում են Յայկ.

- ՍՍՀ Պետ. Պատմական թանգարանի ձեռագրերի բաժնում (Ազգագրական բաժնի ցուցակ, նո. 120):
54. Ս. Խարախանյանը Ս. Կարապետ վանքի դասատուներից եր:
55. Գ. Լևոնյան, «Դայ գիրքը և տպագրության արվեստը», Երևան, 1946 թ., էջ 196:
56. Փանջի անունը Բուսանաց գավառ է կոչվել Ալ. Քալանթարի «Սասուն» գրքում, Թիֆլիս, 1904 թ., էջ 15:
57. Գյուղերի անուններն ու տների թիվը նո. 1-36 ստուգել, վերցվել են Աշտարակի շրջանի Ուշան գյուղի բնակիչներ Բաք Միմոնի Աղոյանից և Սասուն-Մոտկանի Սոյունու գյուղացի և Խորայել Գաբրիելի Յովհաննիսյանից՝ Սասունի Մոտկանի Կրիսու գյուղացի:
58. Տես «Դամբաւաբեր», 1916 թ., նո. 42, հոկտ., էջ 1334:
59. Ուարաք գյուղի մասին տես «Թորոս Աղբար» 2-րդ հատոր, էջ 374-ում գրված է «Ուս թ. հայոց ի գյուղաքաղաքն Ուարաք, ի դուռն Ս. Աստուածածին և Ս. Վասիլ իշխանին.... ամեն....»: Տպված 1884թ., Կ. Պոլյուտ:
- Յինձ Եկեղեցի ունեցող նի քաղաքից մնացել է հինգ տուն:
60. Կ. Սկրտյան, մշեցի, «Արարատ», Կաղարշապատ, 1881թ., էջ 227:
61. Գ. Արվանձտյանց, «Գրոց ու Բրոց», Կ. Պոլիս, 1874թ., էջ 64-65:
62. Կ. Սկրտյան Սշեցի, «Արարատ ամսագիր», Կաղարշապատ, 1881, էջ 237:
63. Յ.և. Սարգսյան, «Տեղագրություն ի Փոքր և Մեծ Յայս», Վենետիկ, 1864, էջ 227:
64. «Լումայ» գիրք, Ա. Տփիսիս, 1898թ., էջ 159:
65. Գ. Արվանձտյանց, «Գրոց ու Բրոց», Կ. Պոլիս, 1874թ., էջ 32,59:
66. Նույնը տեղը
67. Յ. Սարգսյան, «Տեղեկութիւնը ի Փոքր և ի Մեծ Յայս», Վենետիկ, 1864, էջ 237, 226:
68. Յ. Սարգսյան, «Տեղեկութիւնը ի Փոքր և ի Մեծ Յայս», 1864, Վենետիկ, էջ 237, 226:
69. Րաֆֆի, «Կայսեր», Երևան, 1947, էջ 571:
70. Պատմել է Սառնիկում բնակվող. հետո Սասունի Յոսներ գյուղ փոխադրված Արե Թորոսի Խաչատրյանը. 70-75 տարեկան բանինաց պատմողն է և 1949թ ապրում և աշխատում էր Նրեցին Սասունաշենում:
71. Րաֆֆի, «Կայսեր», Երևան, 1947, էջ 567:
72. Երևանի Պետական Պատմության թանգարանի ազգագրական բաժնի ձեռագիր նո. 123, «Վիճակագրություն Մուշ-Սասունի (քաղված Սյադաշտի դպրոցական վիճակագրությունից, դպր. վերատեսուչ Ուլթենի 1914 թ. մայիսի 1-ի տվյալները):

ՎԱՐԴԱՆ ԱՎԵՏԻՍԻ ՊԵՏՈՅԱՆ

**ՍԱՍՈՒՆԻ ԵՎ ՏԱՐՈՆԻ
ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Խմբագիր՝
Սրբագրիչ՝
Տեղանունների
ճշգրտումը և սրբագրումը՝
Զնավորումը՝

Ռուզան Սահակյան
Զարուհի Մխիկյան
Գեղամ Բաղալյանի
Գևորգ Բաղդասարյանի

Ստորագրված է տպագրության 12.04.2005: Չափսը 60 x 84 ¼:
Թուղթը օֆսեթ-1: Տառատեսակը «Arial Armenian»:
Տպագրությունը օֆսեթ: Ծավալը 6,25 տպ. մամուլ:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ



հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
Էլ. փոստ lusakn@rambler.ru

